



ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ ЕВРАЗИЯ
EURASIA INTERNATIONAL UNIVERSITY



ԲԱՆԻԲԵՐ



Երևան, 2021 | N 1

ISSN 1829-4952



ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ ЕВРАЗИЯ
EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ
ВЕСТНИК
BULLETIN

1 2021
Երևան

**Հրատարակության է երաշխավորվել Եվրասիա միջազգային
համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Ռաֆիկ Պետրոսյան (գլխավոր խմբագիր), ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան

Աննա Օհանյան, ք.գ.դ., ԱՄՆ Ստոնհիլ համալսարանի պրոֆեսոր

Աշոտ Ենգոյան, ք.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Խաչատրյան, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ՍԴ դատավոր

Աշոտ Մարկոսյան, տ.գ.դ., պրոֆեսոր

Գրաժինա Չուլադենե, մանկ. գ.թ., (Լիտվայի Միկուլաս Ռոմերիս համալսարան)

Դմիտրիոս Զախոս, մանկ. գ.թ., մանկավարժության ամբիոնի (միջմշակութային

կրթություն) դոցենտ (Սալոնիկի Արիստոտելի համալսարան)

Երանուհի Մանուկյան, փ.գ.թ.

Լիլյա Ավետիսյան, տ.գ.թ., դոցենտ

Լուսինե Ֆլջյան, ք.գ.դ., պրոֆեսոր

Հայկ Պետրոսյան, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հայկ Սարգսյան, տ.գ.դ., պրոֆեսոր

Հովհաննես Հարությունյան, տ.գ.թ.

Պյոտր Բորովսկի, տեխ.գ.թ., տնտեսագետ, դոցենտ (Վարշավայի բնական
գիտությունների համալսարան)

Ռամոն Բուազաս Լորենցո, ք.գ.թ. (Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարան)

Սամվել Մկրտչյան, պատմ.գ.դ., պրոֆեսոր

Սամվել Մուրադյան, ք.գ.դ., պրոֆեսոր

Սեյրան Զաքարյան, փ.գ.դ., պրոֆեսոր

Սոնա Հակոբյան, ք.գ.թ.

Ստեփան Ծաղիկյան, ի.գ.դ., պրոֆեսոր

Սուրեն Օհանյան, աշխ.գ.դ., պրոֆեսոր

Վազգեն Պողոսյան, հոգ.գ.թ., դոցենտ

Վահե Վանեսյան, CIDA-Կանադական միջ. զարգաց. գործակ. ք.գ.դ.

Խմբագրական խորհրդի քարտուղար՝ Նունե Զոմարդյան

Եվրասիա միջազգային համալսարանի Բանբեր հանդեսը ԲՈԿ-ի 28.06.2019թ. № 164Ա հրամանի համաձայն ընդգրկված է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում:

ISSN 1829-4952

© Եվրասիա միջազգային համալսարան, 2021

*Издается по рекомендации ученого совета
Международного университета Евразия*

Редакционная коллегия

Рафик Петросян (главный редактор), д.ю.н., профессор, заслуженный юрист РА

Анна Оганян, д. филос.н. Стонхиллского Университета США, профессор

Айк Саркисян, д.э.н., профессор

Айк Петросян, д.пед.н.

Ашот Енгоян, д.полит.н., профессор

Ашот Маркосян, д.э.н., профессор

Ашот Хачатрян, д.ю.н., профессор, судья КС РА

Ваге Ванесян, д.полит.н., Канадское агентство международного развития (CIDA)

Вазген Погосян, к.п.н., доцент

Гражина Чуладене, к.п.н., (Университет Миколаса Ромериса)

Дмитриос Захос, к.п.н., доцент кафедры педагогики - межкультурного образования
(Университет Аристотеля в Салониках)

Ерануи Манукян, к.филос.н.

Лиля Аветисян, к.э.н., доцент

Люсине Флджян, д.ф.н., профессор

Оганес Арутюнян, к.э.н.

Петр Боровский, к.т.н., экономист, доцент (Варшавский университет естественных наук)

Рамон Бузас Лоренцо, к.полит.н. (Университет Сантьяго-де-Компостела)

Самвел Мкртчян, д.и.н., профессор

Самвел Мурадян, д.ф.н., профессор

Сейран Закарян, д.филос.н., профессор

Сона Акопян, к.ф.н.,

Степан Цагикян, д.ю.н., профессор

Сурен Оганян, д.г.н., профессор

Секретарь редакционной коллегии: Нуне Джомардян

Решением Высшей квалификационной комиссией МОНКС РА от 28.06.2019 № 164А Вестник Международного университета Евразия включен в перечень научных изданий приемлемых для публикаций основных результатов и положений диссертаций.

ISSN 1829-4952

© Международный университет Евразия, 2021

*Recommended for publication by the Scientific
Council of Eurasia International University*

Editorial Board:

Rafik Petrosyan (Chairman), Doctor of Law, Professor, Honored lawyer of the RA

Anna Ohanyan, Ph.D. in Political Sciences at Stonehill College, USA, Professor

Ashot Engoyan, Doctor of Political Sciences

Ashot Khachatryan, Doctor of Law, Professor, Judges of the CC of the RA

Ashot Markosyan, Doctor of Economics, Professor

Dimitrios Zachos, Ph.D. in Pedagogic, Assistant Professor of Pedagogy - Intercultural Education (Aristotle University of Thessaloniki)

Eranuhi Manukyan, Ph.D. in Philosophy

Grazina Ciuladiene, Ph.D. in Pedagogic, Associate Professor (Mykolas Romeris University)

Hayk Petrosyan, Doctor of Pedagogy, Professor

Hayk Sargsyan, Doctor of Economics, Professor

Hovanes Harutyunyan, Ph.D. in Economics

Lilya Avetisyan, Ph.D. in Economics, Associate Professor

Lusine Fljyan, Doctor of Philology, Professor

Piotr Borowski, Ph.D. in Engineering, Economist, Associate Professor (Warsaw University of Life Sciences)

Ramón Bouzas Lorenzo, PhD in Political Science, (University of Santiago de Compostela)

Samvel Mkrtychyan, Doctor of History, Professor

Samvel Muradyan, Doctor of Philology, Professor

Seyran Zakaryan, Doctor of Philosophy,

Sona Hakobyab, Ph.D. in Philology, Professor

Stepan Tsaghikyan, Doctor of Law, Professor

Suren Ohanyan, Doctor of Geographical Sciences, Professor

Vahe Vanesyan, Doctor of Political Sciences, Canadian International Development Agency (CIDA)

Vazgen Pogosyan, Ph.D. in Psychology, Associate Professor

Secretary of Editorial Board: Nune Jomardyan

According to № 164 (A)U decree of RA Supreme Certifying Committee (hereinafter, SCC) dated on June 28, 2019, EIU Bulletin is now recognized as a scientifically relevant journal included in the list of SCC, RA Ministry of Education, Science, Culture and Sport for publicizing the main principals and guidelines of Ph.D. dissertation.

ISSN 1829-4952

© Eurasia International University, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՅՔՈՒՄ	8
ԵՄՀ ԹԻՄԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՅՅԻ՝ UNESCO-Ի «ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	9
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Ռաֆիկ Պետրոսյան, Արմինե Զոքանյան ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԵԴԻԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ	10
Նունե Զոմարոյան ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՍԵՂԾ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԶԱՓԱՆԻՇ	21
Ռաֆիկ Ավետիսյան ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	36
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ Երանուհի Մանուկյան ԿՈՒՈՒՊՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՒ ՍՈՑԻԱԼ- ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	49
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Անահիտ Մկրտչյան, Գայանե Թովմասյան ՆԵՐՔԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ	59
Աշոտ Ոսկանյան, Աննա Քարտաշյան ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ	73
ԼԵԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ Լուիզա Գասպարյան ԳԵՂԱՐՎԵՏՍԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՆԵՐՀԱՅԵՑՈՒՄՆԵՐԸ	88
Էլյա Դավթյան ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՍԵՌՈՎ (ԱՆԳԼԵՐԵՆԻ, ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ)	100
Անուշ Մարտիրոսյան ԵՂԱՆԿԱՎՈՐՄԱՆ ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ	121
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱԼ Հակոբյան Սոնա «CLASSROOM ACTION RESEARCH» ՄՈՏԵՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴԱՍԱՎԱՆԴՈՂԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ	134
Իրինա Մխիթարյան ԱՆԳԼԵՐԵՆԻ ԽՈՍՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՅ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ ԱԿԱԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ	144

СОДЕРЖАНИЕ

СОБЫТИЯ	
ОНЛАЙН-ОБУЧЕНИЕ НА ТЕМУ «ПОЛИТИКА И СТРУКТУРА ДОКТОРСКОГО ОБРАЗОВАНИЯ»	8
ВРУЧЕНЫ СЕРТИФИКАТЫ ОБ ОКОНЧАНИИ В РАМКАХ ПРОГРАММЫ «БОЛЕЕ 40 БЕСПЛАТНЫХ ОНЛАЙН-КУРСОВ»	9
ЮРИСПРУДЕНЦИЯ	
Рафик Петросян, Армине Чобанян ШКОЛЬНАЯ МЕДИАЦИЯ КАК КРАЕУГОЛЬНЫЙ КАМЕНЬ КАЧЕСТВЕННОГО ОБРАЗОВАНИЯ	10
Нуне Джомардян СОЦИАЛЬНАЯ СПРАВЕДЛИВОСТЬ КАКА КАЧЕСТВЕННЫЙ КРИТЕРИЙ ПРАВОТВОРЧЕСТВА	21
ПОЛИТОЛОГИЯ	
Рафик Аветисян ПРОБЛЕМЫ МУЛЬТИКУЛЬТУРНОЙ ПОЛИТИКИ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА В КОНТЕКСТЕ ДЕЯТЕЛЬНОСТИ СЕПАРАТИСТСКИХ ДВИЖЕНИЙ	36
ФИЛОСОФИЯ	
Ерануи Манукян СОЦИАЛЬНО-ФИЛОСОФСКИЙ АНАЛИЗ ПРОБЛЕМЫ КОРРУПЦИИ	49
ЭКОНОМИКА	
Анаит Мкртчян, Гаяне Товмасян ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ВНУТРЕННЕГО ТУРИЗМА В АРМЕНИИ	59
Ашот Восканян, Анна Карташян О ПРОБЛЕМАХ ПРОИЗВОДСТВА И РЕАЛИЗАЦИИ ЗЕРНА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ	73
ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ	
Луиза Гаспарян ПЕРЕВОД И ЕГО ЭСТЕТИЧЕСКАЯ ЭКВИВАЛЕНТНОСТЬ	88
Эля Давтян ПРОЯВЛЕНИЕ ТОЛЕРАНТНОСТИ/НЕТОЛЕРАНТНОСТИ В РЕЧИ ПОЛИТИЧЕСКИХ ДЕЯТЕЛЕЙ, ОБУСЛОВЛЕННОЕ ПОЛОВЫМ ПРИЗНАКОМ (РАССМАТРИВАЕТСЯ ПОЛИТИЧЕСКИЙ ДИСКУРС НА АНГЛИЙСКОМ, ФРАНЦУЗСКОМ И АРМЯНСКОМ)	100
Ануш Мартиросян ОБ ОБЩИХ ПОДХОДАХ К ИЗУЧЕНИЮ ЭПИСТЕМОЛОГИИ МОДАЛЬНОСТИ	121
ПЕДАГОГИКА И МЕТОДЫ ОБУЧЕНИЯ	
Сона Акопян ИССЛЕДОВАТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ В КЛАССЕ - ЭФФЕКТИВНЫЙ ИНСТРУМЕНТ НЕПРЕРЫВНОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ПОВЫШЕНИЯ КВАЛИФИКАЦИИ ПРЕПОДАВАТЕЛЕЙ	134
Ирина Мхитарян, Кнарик Мелоян МЕТОДЫ РАЗВИТИЯ НАВЫКОВ ВЛАДЕНИЯ АНГЛИЙСКИМ ЯЗЫКОМ И СПОСОБЫ ПОВЫШЕНИЯ ИХ ЭФФЕКТИВНОСТИ В СРЕДНИХ ШКОЛАХ АРМЕНИИ	144

CONTENT

EVENTS	
ONLINE TRAINING ON “POLICY AND STRUCTURE OF DOCTORAL EDUCATION”	8
CERTIFICATES OF COMPLETION WERE AWARDED IN THE FRAMEWORK OF THE PROGRAM “MORE THAN 40 FREE ONLINE COURSES”	9
JURISPRUDENCE	
Rafik Petrosyan, Armine Chobanyan SCHOOL MEDIATION AS A CORNERSTONE OF QUALITY EDUCATION	10
Nune Jomardyan SOCIAL JUSTICE AS A QUALITATIVE INDICATOR OF THE LAW-MAKING PROCESS	21
POLITICAL SCIENCE	
Rafik Avetisyan MULTICULTURAL POLICY ISSUES IN THE CONTEXT OF ACTIVITY OF THE EUROPEAN UNION SEPARATIVE MOVEMENTS	36
PHILOSOPHY	
Yeranuhi Manukyan SOCIAL-PHILOSOPHICAL ANALYSIS OF CORRUPTION ISSUE	49
ECONOMICS	
Anahit Mkrtchyan, Gayane Tovmasyan PERSPECTIVES OF DOMESTIC TOURISM DEVELOPMENT IN ARMENIA	59
Ashot Voskanyan, Anna Kartashyan GRAIN PRODUCTION AND SALE PROBLEMS IN THE REPUBLIC OF ARMENIA	73
LINGUISTICS AND PHILOLOGY	
Luiza Gasparyan INSIGHTS INTO LITERARY TRANSLATION AND ITS AESTHETIC EQUIVALENCE	88
Elya Davtyan POLITICAL LEADERS’ SPEECH EXPRESSING TOLERANCE/INTOLERANCE IN POLITICAL DISCOURSE CONDITIONED BY GENDER (WITH THE COMBINATION OF ENGLISH, FRENCH, AND ARMENIAN)	100
Anush Martirosyan ON THE GENERAL APPROACHES TO THE EPISTEMOLOGY OF MODALITY	121
PEDAGOGY AND TEACHING METHODS	
Sona Hakobyan CLASSROOM ACTION RESEARCH: AN EFFECTIVE TOOL OF CONTINUOUS PROFESSIONAL TEACHER DEVELOPMENT	134
Irina Mkhitarian, Knarik Meloyan MECHANISMS OF PROMOTING PROFICIENCY OF SPEAKING SKILLS IN THE RA HIGH SCHOOLS	144

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ

2021թ. մարտի 4-ից 6-ը տեղի ունեցավ «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) Էրազմուս+ Կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում եռօրյա աշխատաժողովը:

Աշխատաժողովի երեք օրերի ինտերակտիվ հանդիպումների արդյունքում ծրագրի անդամները, ՀՀ 8 բարձրագույն ուսումնական հաստատությունների և 2 գիտահետազոտական ինստիտուտների ներկայացուցիչներ՝ ինստիտուցիոնալ ղեկավարներ և հետազոտողներ առաջարկեցին դոկտորական կրթության բարեփոխմանն ուղղված առաջարկներ և հայեցակարգային լուծումներ՝ հստակեցնելով բարձրագույն կրթության երրորդ մակարդակի զարգացման և որակի ապահովման հայեցակարգի առանցքային դրույթները՝ Զալցբուրգի սկզբունքներին համահունչ:

Աշխատաժողովին առցանց հարթակով մասնակցեցին նաև ծրագրի ԵՄ գործընկերները, որոնք ներկայացրեցին դոկտորական կրթության միջազգայնացման փորձը Լիտվայի, Իտալիայի, Պորտուգալիայի և Ֆրանսիայի օրինակով:

Աշխատաժողովի ընթացքում բուհերի և սոցիալական այլ գործընկերների կողմից ներկայացվեցին համագործակցային դոկտորական ծրագրերի, բուհ-արդյունաբերություն համատեղ իրականացվող հետազոտական ծրագրերի օրինակներ:

Աշխատաժողովն ամփոփվեց համագործակցային դոկտորական կրթական ծրագրերի կազմակերպման վերաբերյալ քննարկումների շարքով:

Նշենք, որ վերը նշված ծրագրի տևողությունը 36 ամիս է, այն կգործի մինչև 2023 թվականը: ARMDOCT ծրագրի նպատակն է Զալցբուրգի սկզբունքներին համահունչ Հայաստանում բարեփոխել դոկտորական կրթությունը՝ ազգային քաղաքականության և իրավական փաստաթղթերի, ինստիտուցիոնալ ընթացակարգերի վերանայման, գիտության և հետազոտության ինտեգրման համար անհրաժեշտ համակարգի ապահովման միջոցով: Ծրագր-

րի նպատակներից է նաև խթանել բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների, արդյունաբերական ոլորտի սերտ համագործակցությունը՝ ուղղված դոկտորական կրթության միջազգայնացմանը, Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին և Եվրոպական բարձրագույն հետազոտական տարածքին ինտեգրմանը:

ԵՄՀ ԹԻՄԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՅՅԻ՝ UNESCO-Ի «ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԸՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

2021թ. մարտի 25–31–ը Եվրասիա միջազգային համալսարանը մասնակցեց UNESCO-ի «Որակի ներքին ապահովման կարողությունների զարգացում ընդ բուհերում» ծրագրի շրջանակներում արտաքին գնահատման առցանց այցին:

Նախքան առցանց այցը՝ ԵՄՀ ներքին փորձագետները միացան ՈԱԱԿ-ի համակարգողներին՝ որակի ներքին ապահովման կարողություններ ձևավորելու և որակի ներքին ապահովման համակարգի զարգացումը խթանելու նպատակով, ուսումնասիրվեցին ԵՄՀ կողմից տրամադրված SWOT վերլուծությունը, ռազմավարական ծրագիրը, մասնագիտական կրթական ծրագրերը:

Առցանց այցերի հանդիպումներին մասնակցեցին ԵՄՀ ղեկավար կազմը, կրթական ծրագրերի պատասխանատուները, դասախոսները և ուսանողները, SWOT վերլուծությունն իրականացրած խմբի և որակի ապահովման պատասխանատուները:

«Որակի ներքին ապահովման կարողությունների զարգացում ընդ բուհերում» ծրագիրը նպատակ ունի նաև, բարեփոխումների խմբեր ստեղծելով նպաստել բուհերի ինքնավերլուծության իրականացման գործընթացներին և բարելավել տվյալների հավաքագրման, վերլուծման ու դրանց հիման վրա որոշումների կայացման գործընթացները:

Իրավագիտություն

Ռաֆիկ Պետրոսյան

Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ,
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան
Էլ. հասցե՝ research.incubator@eiu.am

Արմինե Չոբանյան

ԵՄՀ իրավագիտության ամբիոնի դասախոս, ՀՀ վաստակավոր պալատի
անդամ
Էլ. հասցե՝ armmonami@yahoo.com

DOI: 10.53614/18294952-2021.1-10

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԵԴԻԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԲԱՐ

Հոդվածի նպատակն է վեր հանել հանրությանը իրազեկելու մեդիացիայի կառուցակարգերը, որի արդյունքում, միջազգային փորձի համեմատությամբ առաջարկ է արվում մեդիացիան կիրառել դպրոցներում:

Դպրոցներում մեդիացիայի իրականացման անհրաժեշտությունն արժևորելով, ներկայացվել են վերջիններիս հիմնական առանձնահատկությունները և առավելությունները:

Հիմնաբառեր. սոցիալ-իրավական վեճերի կարգավորում, բանակցություն, միջազգային փորձ, արհեստավարժություն, տեսական և գործնական իմացություն, վերականգնողական մեդիացիա, խաղաղ համագործակցություն:

Ներածություն

Հասարակության զարգացման պատմության ողջ ընթացքում մարդիկ երազել են անկոնֆլիկտ ապրելակերպի, քաղաքակիրթ երկխոսության մասին: Այդ նպատակները մշտապես հայ իրավունքի համակարգի մաս են կազմել:

Դեռևս անտիկ ժամանակաշրջանում և միջին դարերում հաճախակի դի-

մերով այսպես կոչված՝ դատամիջնորդությանը, Հայաստանն իր ավանդն է ներդրել վերջինիս զարգացման գործում: Այդ միջոցով հարցերը կարգավորելու բազմաթիվ օրինակներ են հայտնի, որոնք ամրապնդվել են Մխիթար Գոշի, Սմբատ Գունդստարլի Դատաստանագրքերում, ինչպես նաև մի շարք կանոնագրքերում: Պատմական անցյալից որպես օրինակ նշենք Տիգրան II-ի և նրա դեմ ըմբոստացած արքայազն Տիգրանի միջև եղած վեճը, որը հարթում է Պոմպեոսը՝ հանդես գալով որպես հաշտարար դատավոր:

Մեդիացիոն ընթացակարգը Հայաստանի Հանրապետությունում մնում է, կարելի է ասել, սկզբնական ձևավորման փուլում: Իսկ սոցիալ-իրավական վեճերի կարգավորման ոլորտում, այդ թվում՝ դպրոցներում, այն ամբողջությամբ նոր է և դեռևս չի կիրառվում:

Մեր կարծիքով ՀՀ կրթական համակարգում մեդիացիայի զարգացումն անհրաժեշտություն է, որի համար հարկավոր է իրականացնել ծրագրեր, միջոցառումներ, հետազոտություններ և այդ ոլորտի (տվյալ պահին՝ դպրոցական) համար օրենսդրորեն ամրագրել համապատասխան օրենսդրորեն նորմատիվ իրավական ակտ: Հիմնահարցի անհրաժեշտությունն առաջին հերթին կայանում է նրանում, որ երիտասարդները, դեռահասները հասարակությունում ունենան ակտիվ փոխազդեցություն: Արդյունքում՝ սահմանափակվեն անչափահաս երեխաների կատարած արարքների քրեականացման ռիսկերը, քանի որ հասարակության կարևոր հիմնախնդիրների շարքում պետք է դիտարկել անձի (երեխայի) ներդաշնակ ձևավորումը՝ հարմարավետ հոգեբանական բարեկեցության պահպանմամբ (Жыкова, 2017, էջ 76): Այն շատ կարևոր է, որպեսզի դեռահասների շրջանում առաջացած վեճի դեպքում (ինչից անկարելի է խուսափել) խնդիրը փորձեն կարգավորել ոչ թե ուժի սպառնալիքով, այլ ազդեցիկ խոսքով, այլ կերպ ասած՝ խելամիտ բանակցային մեթոդ, տեխնոլոգիա օգտագործելով:

Ըստ վիճակագրական տվյալների՝ անչափահաս դատապարտյալները հիմնականում չաշխատողներն ու չսովորողներն են, որոնք հանցագործությունը կատարել են մի խումբ անձանց կազմով (Համբարձումյան, 2019): Այս խնդրահարույց վիճակը մտահոգությունների տեղիք է տալիս, որի համար անհրաժեշտ են խելամիտ լուծումներ:

Պատահական չէ, որ Միավորված ազգերի կազմակերպությունը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակել է, որ երեխաներն ունեն հատուկ հոգածության և օժանդակության իրավունք, համոզված լինելով, որ ընտանիքին՝ որպես հասարակության հիմնարար խմբային միավորի, և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որպեսզի նրանք կարողանան լիարժեք կերպով ստանձնել իրենց պարտականությունները հասարակության շրջանակներում (Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 1989):

Հետևաբար՝ բարեփոխումների առանցքում պետք է դիտարկել դպրոցներում մեդիացիա և վերականգնողական մեդիացիա իրականացնելու հիմնահարցերը, իսկ այնուհետև՝ դպրոցներում ներառել մե-

դիացիայի համար հատուկ դասաժամ:

Առանձնահատուկ կարևոր է կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված (պատճառները կարող են տարաբնույթ լինել) երեխաների հետ սերտորեն համագործակցելը՝ որակավորված մասնագետների (միջոցառողների, մեդիատորների) ներգրավմամբ, որոնց մասնագիտական գիտելիքները և հմտություններն անհրաժեշտ են հստակ ծրագրեր իրականացնելու համար (ՀՀ կառավարության 2017–2021թթ. թիվ 30 արձանագրության որոշում):

Ինչպես իրավացիորեն նշում է պատմագետ Հենրիկ Աբրահամյանը (1998)՝ մարդկային հասարակության բազմադարյան պատմությունը լավագույն վկայությունն է այն իրողության, որ նա անչափ մեծ ճանապարհ է անցել՝ լի մեծ փորձություններով, իրար դեմ մղվող ընդհարումներով և, որ շատ ուսանելի է՝ խաղաղ համագործակցությամբ, որն էլ նպաստել է նրա առաջընթացին (Աբրահամյան, 1998, էջ 92):

Տեսական հիմքերը

Տարբեր ժամանակահատվածներին բնորոշ բազմաբնույթ առանձնահատկություններով պայմանավորված՝ մեդիացիայի (հաշտարարության) կիրառման հիմնախնդիրների ուսումնասիրությունը հազարամյակներ ի վեր գտնվել է սոցիոլոգների, փիլիսոփաների, իրավաբանների և այլ մասնագետների ուշադրության կենտրոնում:

Սոցիալական մեդիացիա իրականացնելու համար նախևառաջ անհրաժեշտ է ծանոթանալ, տիրապետել վերջինիս մեթոդներին, տեսակներին, որի հիման վրա էլ կարելի է կանխորոշել ստացված վերջնարդյունքները:

Միջազգային գրականության մեջ և գործնականում հաճախ ենք հանդիպում «Վերականգնողական մեդիացա» կամ «Վերականգնողական արդարադատություն» եզրույթներին: Դրանք առաջին հայացքից կարող են ընկալվել որպես վերականգնողական բնույթի աշխատանքներ, որոնք հիմնականում իրականացվում են օրինախախտ անչափահասների հետ: Սակայն սոցիալական վերականգնողական ծրագրերի իրականացման շրջանակներում չպետք է նկատի ունենալ միայն օրինախախտ անչափահասների հետ տարվող վերականգնողական գործունեության սահմանումը կամ իրավախախտի ու տուժողի հարաբերությունների վերականգնում և այլն: Առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված (պատճառները ինչպես արդեն նշել ենք, կարող են տարաբնույթ լինել) երեխաների ու նաև՝ վերջիններիս ընտանիքների հետ սերտորեն համագործակցելը¹:

Քրեական ոլորտի դեպքում կարող ենք փաստել, որ միջազգային պրակտիկայում վերականգնողական արդարադատությունը դիտվում է որպես այ-

1 Վերականգնողական մեդիացիան այնպիսի գործընթաց է, որը մեդիատորի մասնակցությամբ ստեղծում է վիճող կողմերին միմյանց հասկանալու և բանակցությունների միջոցով գտնելու փոխադարձաբար ընդունելի՝ կողմերի իրական շահերը հաշվի առնվող մոտեցումներ, լուծումներ: Այսինքն՝ այն հիմնականում նպատակաուղղված է երկխոսության պայմանների ստեղծմանը, որի ընթացքում չեն ոտնահարվում որևէ մեկի իրավունքները, ընդհակառակը՝ ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը՝ վերականգնվում են վիճող կողմերի միջանձնային կարգավիճակները:

լրնորանք քրեական արդարադատության ավանդական պատժողական համակարգին (Իվանովա, 2019): Այդպիսի գործընթացում նույնպես կարող են մասնակցել մեդիատորներ, ովքեր ապահովում են վստահություն ներշնչող միջավայր, և վեջիններս պետք է առաջնորդվեն գաղտնիության և լսելու շնորհ ունեցող կարողություններով, որպեսզի կարողանան բացահայտել և վեր հանել կողմերի իրական շահերը:

Մեդիացիայի տեսակները

Ընդհանրապես միջազգային պրակտիկայում գործում են մեդիացիայի մի շարք առանձնահատկություններ: Եվրոպական երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ կյանքում մեդիացիայի բազմաթիվ մոդելներ են գործում: Դրանք են՝ արտադատական/կամավոր, պարտադիր (դատական համակարգում) (Չոբանյան, 2018, № 106, էջեր 26–31), սոցիալական (հասարակական կյանքի տարբեր ոլորտներում), որն իր մեջ ներառում է՝ դպրոցական մեդիացիա, վերականգնողական մեդիացիա, պատմողական մեդիացիա, տրանսֆորմատիվ/փոխակերպող մեդիացիա, էկոհամակարգի կամ հատուկ ընտանեկան մեդիացիա, գնահատողական մեդիացիա, առցանց մեդիացիա և այլն:

Պատմական մեդիացիան վիճող կողմերին օգնում է հաղթահարել վեճի արդյունքում ստեղծված փակուղին: Այս դեպքում, մեդիատորը աշխատում է կոնկրետ այն պատմական իրողության վրա, որտեղից ծագել է և առկա է բուն վեճը²:

Պատմողական մեդիացիան հիմնականում իրականացվում է սոցիալական այնպիսի վեճերի դեպքում, որոնք տեղի են ունենում անհատների և խմբերի միջև, ինչի արդյունքում փորձ է կատարվում նրբորեն վեր հանել այն հիմնակետերը, որոնք բխում են կողմերի շահերից (Դաբաբ, 2017, էջ 63):

Տրանսֆորմատիվ մեդիացիայի դեպքում մեդիատորը ծանոթանում է գործի բոլոր փաստերին, լսում է կողմերից յուրաքանչյուրի դիրքորոշումները, իսկ այնուհետև վերջիններիս առաջարկում է հաշտեցման իր կարծիքով փոխըմբռնելի տարբերակները: Տվյալ դեպքում մեդիատորը կողմերին առաջնորդում է գտնել, ներկայացնել իրենց ընդհանուր շահերի և կարիքների բացահայտման ուղիները (Կուլաբով, 2014):

Էկոհամակարգի կամ հատուկ ընտանեկան մեդիացիա և գնահատողական մեդիացիան հիմնականում կիրառվում են ընտանեկան վեճերի դեպքում, երբ անհրաժեշտ է տվյալ ընտանիքի անդամի հետ իրականացնել մեդիացիայի ընթացակարգը³:

Առցանց մեդիացիայի դեպքում կողմերը մեդիատորի հետ կարող են հաղորդակցվել ինչպես դեմ առ դեմ, այնպես էլ առցանց տարբերակով:

2 Եթե ընտանեկան վեճերի դեպքում, հատկապես երեխայի տեսակցության խնդիր է առկա, ապա այս դեպքում մեդիատորի գործողությունները պետք է ուղղված լինեն կողմերի՝ մասնավորապես, երեխայի իրական շահերը բացահայտելը: Միչդեռ, պատմական մեդիացիայի դեպքում կոնկրետ վեճի բուն պատմությունն է անհրաժեշտ նրբորեն բացահայտել:

3 Մեդիացիոն այս մոդելը ըստ էության չի տարբերվում դասական մեդիացիայի սկզբունքներից, սակայն այն որպես առանձին թեմա դեռևս ուսումնասիրման գործընթացում է:

Անդրադառնալով դպրոցական մեդիացիային (հաշտարարությանը) փաստենք, որ այն, բացի Հայաստանի Հանրապետությունից, գործում է մի շարք երկրներում, որոնցից են օրինակ՝ Ավստրալիան, Կանադան, Նոր Զելանդիան, ԱՄՆ, Մեծ Բրիտանիան, Ֆինլանդիան, Շոտլանդիան, Իտալիան, Ռումինիան, Նորվեգիան, Շվեդիան, Չինաստան, Ճապոնիան և այլն:

Իհարկե, յուրաքանչյուր երկրում մեդիացիան՝ մասնավորապես դպրոցական ոլորտում գործում է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները հաշվի առնելով: Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն խաղաղ կարգավորման և միևնույն ժամանակ դաստիարակչական մեթոդներից մեկն է, Հայաստանի հանրության համար այն առավել քան կարևոր է համարվում:

Դպրոցական մեդիացիայի կիրառման առանձնահատկությունները

Հայտնի է, որ դպրոցական մեդիացիան գործում է սոցիալ-իրավական վեճերին ուղղված ոլորտում, որը հիմնականում ուղղված է դպրոցների մեդիացիոն ծառայությունների կազմակերպմանը, կրթական հաստատություններում առաջացած վեճերի լուծմանը, երեխաների և դեռահասների հանցագործությունների կանխարգելմանը և ընդհանրապես երեխաների համար լիարժեք զարգացման և սոցիալականացման համար բարենպաստ, մարդկային և անվտանգ միջավայրի ստեղծմանը:

Մեր կարծիքով մեդիացիայի ընթացակարգի կիրառման մեջ պետք է դիտարկել վերը նշված բոլոր առանձնահատկությունները: Քանի որ յուրաքանչյուր վեճ ինքնատիպ է: Յուրաքանչյուրի (կողմի կամ վերապատրաստվողի, ուսանողի) հետ պահանջվում է յուրօրինակ մոտեցում (խոսքը խտրականության մասին չէ) ինչպես հոգեբանական, այնպես էլ մտածելակերպի հետ կապված: Առաջացած վեճի լուծման (իրականացման) փուլում մեդիատորը պետք է կարողանա արագ կողմնորոշվել, թե տվյալ իրավիճակի համար կոնկրետ որ մեթոդն է առավել արդյունավետ կիրառելի:

Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, դպրոցական մեդիացիայի մեջ օգտագործվում են տարբեր մոդելներ: Նրանցից ոմանք մեծ ուշադրություն են դարձնում հաղորդակցման հմտությունների զարգացմանը և մեդիացիայի դասական մոդելին (Коновалов А.Ю., 2014):

Ֆինլանդիայի որոշ դպրոցներում նույնպես գործում է կրթական մեդիացիա, հիմնականում դպրոցականների, դեռահասների համար նախատեսված պատասխանատվության զգացողությունը բարձրացնող ծրագրերի տեսքով (Служба примирения в Финляндии, 2019):

Մեդիացիայի դերը հատկապես սոցիալական, դպրոցական ոլորտում տարբերվում է նրանով, որպեսզի իրականացվեն կանխարգելող բազմաթիվ միջոցառումներ: Արդյունքում չեն արձանագրվի անչափահասների պատժաչափեր, իսկ դեռահաս սերունդը կարող է տիրապետել բանակցային կանոններին հենց քաղաքակիրթ երկխոսություն իրականացնելով: **Հետևաբար՝**

անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել և ծրագրեր մշակել ծնողների՝ երեխայի զարգացման ու խնամքի հարցում ծնողական դերի և պարտականությունների վերաբերյալ, մասնավորապես մեղիացիոն ուսուցում անցնելու հնարավորություն ստեղծելու ուղղությամբ:

«Երեխայի իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիայի հիմքում իրավունքների երեք հիմնական խումբ է դրված, որոնք ապահովում են հետևյալ համալիր մոտեցումը՝ պաշտպանության իրավունքը, ծառայություններ ստանալու իրավունքը, երեխաների մասնակցային իրավունքը: Ներկայումս բացակայում է երեխաների, այդ թվում՝ դպրոցահասակ երեխաների հիմնախնդիրների հանդեպ համալիր մոտեցումը⁴: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում:

Նշված ոլորտում շատ խնդիրներ հեշտ և արագ կլուծվեն, եթե մասնագետները (մեղիատորները) տիրապետեն հարակից ոլորտներին առնչվող որոշակի հիմնարար գիտելիքների և հմտությունների առհասարակ, իսկ մեղիատորների կամավոր խմբի առկայության պայմաններում՝ ովքեր առաջիկայում պատրաստական կլինեն մեղիացիա իրականացնել դպրոցներում (աշակերտների, ուսուցիչների, անհրաժեշտության դեպքում՝ ծնողների), ապա այն կդիտվի վերջիններիս կարևոր առաքելություններից մեկը՝ վեր հանելով դպրոցականների հիմնական խնդիրները և այն իրագործելն ըստ արժանվույն⁵: Մեր կարծիքով ՀՀ կառավարությունը պետք է քայլեր ձեռնարկի այս ուղղությամբ, քանի որ ներկայիս դպրոցահասակներն ապագա մեր սերունդն են, իսկ «Ինչ-որ մարդ սերմէ, այն էլ կհնձէ» սկզբունքը սովորեցնում է, որ չենք կարող խուսափել մեր արարքների հետևանքներից (Աստվածաշունչ, էջ 1330): Ուստի «Չը ձանձրանանք բարին գործելուցը, որովհետև իր ժամանակին կհնձենք՝ եթե չ'թուլանանք» (Աստվածաշունչ, էջ 9):

Վերջին օրերի աղմկահարույց դեպքերն ու իրադարձություններն ի վերջո փաստում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը պետականությունը պահպանելու համար անհրաժեշտ է ունենալ ամուր, խաղաղասեր և իսկապես քրիստոնյա սերունդ:

4 Յուրաքանչյուր անձ՝ լինի ծնող թե՛ երեխա, մանկավարժ թե՛ աշակերտ, իր կյանքի ընթացքում հայտնվում է կոնֆլիկտային այնպիսի իրավիճակներում, որտեղ շատ հաճախ առաջացած խնդիրները փորձում են լուծել անձամբ: Սակայն միշտ չէ, որ դա բոլորին է հաջողվում: Հաճախ կոնֆլիկտը (բանակցությունը) սահմանվում է որպես բացասական երևույթ, որը խաթարում է այսպես կոչված կողմերի միջև նորմալ փոխհարաբերությունը: Իհարկե պետք է խուսափել յուրաքանչյուր կոնֆլիկտային իրավիճակ առաջացնող երևույթներից, սակայն գործնականում կարող են ստեղծվել այնպիսի անկանխատեսելի իրավիճակներ, որոնց արդյունքում կարող են բխել բացասական հետևանքներ, իսկ երբեմն էլ՝ անդառնալի կորուստներ՝ բանակցային գործընթացին, տեխնիկային բավարար չափով չտիրապետելու պատճառով:

5 Թերևս դպրոցական, ընտանեկան վեճերի խաղաղ կարգավորման համար նույնպես անհրաժեշտ է մեղիատորի մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, քանի որ շատ հաճախ վեճերի բուն պատճառը կարող է ծնվել ընտանեկան առողջ մթնոլորտի բացակայության արդյունքում: Ընտանեկան վեճերին առնչվող խնդիրների համար մեղիատոր-մասնագետից պահանջվում են խորը մասնագիտական տեսական և գործնական գիտելիքներ, փորձ, հմտություն և որ կարևորն է՝ իմաստություն:

Դպրոցական մեդիացիա կիրառելուն առաջինը պետությունը պետք է ձեռնամուխ լինի: Պետությունը պետք է խթանի մասնավոր-իրավական վեճերի ընթացակարգերի, դրանց տեսակների իրականացումը, քանի որ այն քայլ է ի օգուտ հանրային շահի, այն ապահովում է արդարադատության և ժողովրդավարական գործընկերության առաջընթացը (Winslade and Monk, 2014):

Սոցիալական ոլորտում՝ մասնավորապես դպրոցներում միջնորդ-հաշտարարության անհրաժեշտությունը իրազեկման, ինչն էլ՝ դաստիարակման կարևոր գործընթացներից մեկն է (Handbook, 2019):

Մեդիացիան դպրոցում կիրառելու անհրաժեշտությունը ծագում է առաջին հերթին որպես առաջադեմ կրթական գործիք կիրառելու համար (Conflict mediation, School (Peer) mediation, 2019): Այն հնարավորություն կտա աշակերտներին ուսումնասիրել մեդիացիայի էությունը, հասկացությունը, առանձնահատկությունները: Օրինակների տեսքով (վարժանքների) նրանք կարող են ներկայացնել կարծիքներ, տեսակետներ՝ վեր հանելով առաջացած հակասությունների պատճառները, վեճի խաղաղ հանգուցալուծման համար առաջարկել իրենց իսկ տեսակետները, ի վերջո օգտագործել արդյունավետ կառուցակարգեր՝ խաղաղ և ներդաշնակ միջավայր ապահովելով⁶:

Եզրակացություն

Մեդիացիան ձևավորում է մշակույթի էթիկա, մարդկային քաղաքակրթություն և ամենևին էլ պարտադիր չէ, որ իրավունքի իրականացումն ու արդարության մատչելիությունը դրսևորվի կամ ապահովվի միայն դատական համակարգով:

Եթե խոսում ենք տնտեսական, իրավական և սոցիալական ազատության մասին, ապա դրանց հիմքում պետք է գործի վեճերի լուծման այլընտրանքային մեթոդները: Եվ այս մեթոդների կիրառումը, մեր կարծիքով, անհրաժեշտ է սկսել դպրոցներից (նույնիսկ մանկապարտեզներից):

Այսպիսով, որակյալ կրթություն ասելով պետք է ընկալել ոչ միայն մարդու կրթության իրավունքն ապահովելը, այլ նման համակարգերի արդյունավետության հիմքում պետք է դիտարկել կրթություն-դաստիարակություն համագործակցությունը: Այսինքն, անհրաժեշտ է մշակել վերականգնողական մեդիացիա կամ որ նույնն է՝ մեդիացիոն ծրագրերի կիրառումը կարգավորող ուղենիշներ, որպեսզի՝

- ստեղծվեն անձի (երեխայի) ինքնահաստատման և ինքնակառավարման ապահովման համար անհրաժեշտ պայմաններ,
- մանկավարժների հետ անցկացվեն մեդիացիայի ոլորտում վերապատրաստման դասընթացներ,
- դպրոցներում ներառվեն մեդիացիայի վերաբերյալ դասաժամ:

6 Այսպիսով մեդիացիան դպրոցահասակների ներդաշնակ զարգացումն ապահովող կառուցակարգերից մեկը կարող է հանդիսանալ: Ինչպես իրավացիորեն ամրագրված է ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքներում՝ անհրաժեշտ է դեռ վաղ տարիքից խթանել նրանց անհատականությունը և հարգանքը ինչպես իրենց, այնպես էլ մյուսների նկատմամբ:

Մեզնից յուրաքանչյուրը պետք է ձգտի լուսավորության ու կրթության միջոցով օժանդակել իրավունքների ու ազատությունների հարգմանը, իսկ սոցիալական արդարության նախապայմաններից մեկն է՝ հոգ տանել սոցիալական արդարության, քաղաքացիական հասարակության բարեկեցության և սոցիալական պաշտպանվածության մասին:

Օգտագործված գրականության ցանկ

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն* (փոփոխություններով) (ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005թ. նոյեմբերի 27-ի ՀՀ հանրաքվեով: Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2015թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ հանրաքվեով), Երևան, 2016:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք* (ՀՕ-110-Ն, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2018թ. փետրվարի 9-ին, ուժի մեջ է մտել 2018թ. ապրիլի 9-ին, Երևան, 2018:
- «Կոնվենցիա երեխաների իրավունքների մասին» (ընդունման ամսաթիվը՝ 20.11.1989, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 22.07.1993):
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր* (ընդունման ամսաթիվը՝ 10.12.1948, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 10.12.1948):
- Աբրահամյան, Հ. (1998) *Ժողովրդավարությանն ընդառաջ*: Երևան, , «Հայրապետ» հրատ.:
- Անչափահասների գործերով արդարադատության ոլորտի միջազգային փաստաթղթերի ժողովածու* (2012), Երևան: Միջազգային բանտային բարեփոխումներ, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ:
- Ասրուածաշունչ մարտան հին և նոր կրակարանների* (2010), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Հայաստանի աստուածաշնչային ընկերություն,:
- Բարսեղով, Յու. (1982) *Դատամիջնորդությունը հին և միջնադարյան Հայաստանի միջազգային հարաբերություններում*: Պատմա-բանասիրական հանդես, Մոսկվա, /ISSN 0135-0536/ № 1:
- Իվանովա Եվգենիա, *Վերականգնողական արդարադատություն*. Ինչ անել, իրավիճակը բարելավելու համար, էլ. հասցե՝ www.csi.am/hy/point-of-view/2016/08/17/restorative (մուտք 07.04.2019):
- Համբարձումյան, Սյունէ *Երևանը անչափահաս դատապարտվածների թվով առաջարարն է//Ժողովուրդ Թերթ*, <https://armkur.am/889043/> (մուտք 13.04.2019թ.):
- Չոբանյան, Ա. (2018) *Պարտադիր (հարկադիր) մեղիացիայի կիրառման իրավական հեղինակները Հայաստանի Հանրապետությունում* //«Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, № 106:
- Гараев, С.Н. (2017) *Проблемы и перспективы развития медиации в судах. Медиация: теория, практика, перспективы развития*. Федеральное государственное бюджетное учреждение «Федеральный институт медиации», Сборник тезисов участников научно-практической конференции, Москва., 13-14 апреля 2017.
- Жукова, С., Гараев, С. (2017) *Медиация: теория, практика, перспективы развития*. Научно-практическая конференция Москва, ФГБУ «ФИМ».

- Кулапов, Д.С. (2014) *Виды медиации: теоретический аспект*. Вестник Саратовской государственной юридической академии, № 4 (99), էլ. հասցե՝ <https://cyberleninka.ru/article/n/vidy-mediatsii-teoreticheskiy-aspekt> (մուտք 08.04.2019):
- Коновалов, А.Ю. (2014) «*Медиация в системе образования: обзор опыта разных стран*». Электронный журнал «Психологическая наука и образование psyedu.ru», № 3, էլ. հասցե՝ psyedu.ru/files/articles/psyedu_ru_2014_3_Konovалov.pdf (մուտք 10.04.2019):
- Служба примирения в Финляндии* էլ. հասցե՝ URL: www.sovittelu.fi/index.php/ru (մուտք 12.04.2019):
- Conflict mediation, School (Peer) mediation* էլ. հասցե՝ <http://conflictmediation.ie/school-mediation>, (մուտք 07.04.2019):
- Handbook-Social mediation*, էլ. հասցե՝ <https://www.social-mediation.org/handbook>, (մուտք 07.04.2019):
- Winslade, J., and Monk, G., A narrative approach in mediation (2014) էլ. հասցե՝ https://www.researchgate.net/.../254667214_The_Narrative (մուտք 07.04.2019):

References

- Hayastani Hanrapetutyun Sahmanadrutyun* [Constitution of the Republic of Armenia] (popoxutyunnerov) /yundunvel e 1995, hulis 5-in, Sahmanadrutyun popoxutyunnery katarvel en 2005 noyemberi 27-i hanraqveov: Sahmanadrutyun popoxutyunnery katarvel en 2015 dektemberi 6-I HH hanraqveov/, Erevan, 2016 (In Arm.)
- Hayastani Hanrapetutyun qaxaqaciakan datavarutyun orensgirg* [Civil Procedure Code of the Republic of Armenia] /H0-110-N, yundunvel e HH Azgayin zhoxovi koxmic 2018 petrvari 9-in, uzhi mej e mtel 2018 aprili 9-in/, Erevan, 2018 (In Arm.)
- «*Konvencia erexaneri iravunqneri masin*» [Convention on the Rights of the Child] / yundunman amsativy՝ 20.11.1989, uzhi mej mtelnu amsativy՝ 22.07.1993/ (In Arm.)
- Mardu iravunqneri hamyndhanur hrchakagir* [Universal Declaration of Human Rights] / yundunman amsativy՝ 10.12.1948, uzhi mej mtelnu amsativy՝ 10.12.1948/ (In Arm.)
- Abrahamyan, H. (1998) *Zhoxavrdavaruryann yndaraj* [Ahead of democracy]: Erevan, «Hayrapet» hrat. (In Arm.)
- Anchapahasneri gorcerov ardaradatutyun volorti mijazgayin pastatxteri zhoxovacu* [Collection of International Documents in the Field of Juvenile Justice] (2012), Erevan: Mijazgayin bantayin barepoxumner, Qaxaqaciakan hasarakutyun institute HK (In Arm.)
- Astuacashunch matean hin ev nor ktakaranneri* (2010) [Bible book of old and new tesaments], mayr Ator S. Ejmiacin, Hayastani astuacashnchayin ynkerutivn (In Arm.)
- Barsexov, Ju. (1982) *Datamijnordutyuny hin ev mijnadaryan Hayastani mijazgayin haraberutyunnerum* [Mediation in the international relations of ancient medieval Armenia]: Patma-banasirakan hands, Moskva, № 1, ejer 39-54: (In Arm.)
- Ivanova Evgenia, *Verakangnoxakan ardaradatutyun*. [Restorative justice]: Inch anel? Iravichaky barelavelu hamar, www.csi.am/hy/point-of-view/2016/08/17/restorative /accessed 07.04.2019թ./ (In Arm.)
- Hambardzumyan, Syune *Yerevany anchapahas datapartvatsneri tvov arajatarn e* [Yerevan

- is the leader in the number of juvenile offenders]//Zhoghovurd Tert, <https://armlur.am/889043/> (mutk' 13.04.2019t.) (In Arm.)
- Chobanyan, A. (2018) *Partadir (harkadir) mediacyayi kirarman iravakan hetevanqery Hayastani Hanrapetutyunum* [Legal consequences of the use of compulsory mediation in Republic of Armenia]: //«Orinakanutyun» HH Dataxazutyanyan gitagorcnaakan ev usumnametodakan hands, Erevan, № 106, eger 26–31 (In Arm.)
- Garaev, S.N. (2017) *Problemy i perspektivy razvitiya mediatsii v sudakh. Mediatsiya: teoriya, praktika, perspektivy razvitiya*. Federal'noe gosudarstvennoe byudzhethoe uchrezhdenie «Federal'nyy institut mediatsii», Sbornik tezisev uchastnikov nauchno–prakticheskoy konferentsii, Moskva, 13–14 aprelya 2017: (In Rus.)
- Zhukova, S., Garaev, S. (2017) *Mediatsiya: teoriya, praktika, perspektivy razvitiya*. [Mediation: Theory, Practice, Development Prospects]: Nauchno–prakticheskaya konferentsiya Moskva, FGBU «FIM» (In Rus.)
- Kulapov, D.S. (2014) *Vidy mediatsii* [Types of mediation]: teoreticheskoy aspekt, Vestnik Saratovskoy gosudarstvennoy yuridicheskoy akademii, № 4 (99), <https://cyberleninka.ru/article/n/vidy-mediatsii-teoreticheskoy-aspekt> /accessed 08.04.2019./ (In Rus.)
- Konovalov, A.Yu. (2014) «*Mediatsiya v sisteme obrazovaniya: obzor opyta raznykh stran*». Elektronnyy zhurnal «Psikhologicheskaya nauka i obrazovanie psyedu. ru», № 3, https://psyedu.ru/files/articles/psyedu_ru_2014_3_Konovalov.pdf /accessed 10.04.2019/ (In Rus.)
- Sluzhba primireniya v Finlandii* URL: www.sovittelu.fi/index.php/ru accessed 12.04.2019/ (In Rus.)
- Conflict mediation*, School (Peer) mediation <http://conflictmediation.ie/school-mediation/> /accessed 07.04.2019) (In Eng.)
- Handbook–Social mediation*, էլ. հուղե՝ <https://www.social-mediation.org/handbook/> /accessed 07.04.2019) (In Eng.)
- Winslade, J., and Monk, G., A. (2014) Narrative approach in mediation, էլ. հուղե՝ https://www.researchgate.net/.../254667214_The_Narrative_ /accessed 07.04.2019) (In Eng.)

Рафик Петросян

Заведующий юридической кафедрой Международного университета Евразия, доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА
Эл. адрес: *research.incubator@eiu.am*

Армине Чобанян

Преподаватель юридической кафедры Международного университета Евразия, Член Палаты адвокатов РА
Эл. адрес: *armmonami@yahoo.com*

ШКОЛЬНАЯ МЕДИАЦИЯ КАК КРАЕУГОЛЬНЫЙ КАМЕНЬ КАЧЕСТВЕННОГО ОБРАЗОВАНИЯ

Цель данной статьи – выделить структуры информирования общественности и в результате, сравнивая и учитывая международный опыт, предлагается использовать медиацию в школах. Считая необходимостью использование медиации в школах, были представлены ее основные особенности и преимущества.

Ключевые слова: урегулирование социально-правовых споров, переговоры, международный опыт, профессионализм, теоретические и практические знания, восстановительная медиация, мирное сотрудничество.

Rafik Petrosyan

*Head of the Department of Law at Eurasia International University,
Doctor of Law, Full Professor, Honored lawyer of the RA*
Email: *research.incubator@eiu.am*

Armine Chobanyan

*Lecturer of the Law Department at Eurasia International University,
Member of RA Advocates Chamber*
Email: *armmonami@yahoo.com*

SCHOOL MEDIATION AS A CORNERSTONE OF QUALITY EDUCATION

The purpose of the article is to identify the public with awareness mechanisms compared with international experience, the author suggests using mediation in schools. Assessing the necessity for mediation in schools, the main features and benefits were presented.

Key words: settlement of social and legal disputes, negotiation, international experience, professionalism, theoretical and practical knowledge, restorative mediation, peaceful cooperation.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2021թ. ապրիլի 02-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2021թ. ապրիլի 11-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2021թ. մայիսի 10-ին:

Նունե Զոմարդյան

*ԵՄՀ միջազգային կապերի և հեղափոխությունների կենտրոնի
պատրասխանատու, իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ,
նույն ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ nune.jomardyan@eiu.am*

DOI: 10.53614/18294952-2021.1-21

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ԻՐԱՎԱՍՏԵՂԾ ԳՈՐԾԸՆԹ-ԱՑԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ

Հիմնվելով Ա.Սենի և Զ.Ռոուզի տեսությունների վրա սույն հոդվածում սոցիալական արդարության սկզբունքի իրագործումը դիտարկվել է երկու տեսանկյուններից՝ որպես «սկզբնական բարիքների հավասար բաշխում» և որպես «ընդունակությունների զարգացման հավասար հնարավորություններ»: Մեթոդական այդ մոտեցմամբ էլ գնահատվել է սոցիալական արդարության և իրավաստեղծագործության առնչվածությունը, որի ընթացքում սոցիալական արդարությունը շեշտադրվել է որպես իրավաստեղծ գործընթացի հիմնական նպատակներից մեկը: Կարևորվել է նաև ժամանակակից իրավական տեխնոլոգիաների կիրառումը: Հարկային օրենսգրքում իրականացված վերջին փոփոխությունների վերլուծության հիման վրա մատնանշվել են առկա թերությունները և նշվել դրանց հաղթահարման ուղիները:

Հիմնաբառեր. սոցիալական արդարություն, իրավաստեղծ գործընթաց, սկզբունք, նպատակ, իրավական տեխնոլոգիա:

Ներածություն

Սոցիալական պետության արդի իրավաբանական մեթոդական հենքը սահմանադրական լուծումների մարդակենտրոն համակարգն է, որի շրջանակներում սոցիալական խնդիրների լուծման կենտրոնում միայն մարդն է՝ իր իրավունքներին ու ազատություններին համապատասխան արժանապա-

տիվ կյանք վարելու և ազատ զարգանալու ձգտումներով: Այս տեսակետից առաջնային նշանակություն է ձեռք բերում ոչ միայն սոցիալական պետության՝ որպես սահմանադրական կարգի սկզբունք ամրագրումը, այլ նաև վերջինիս հետևողական իրացումը երկրի հասարակական քաղաքական կյանքում:

Մի շարք հեղինակներ վերը նշած սկզբունքի իրագործումը կապում են սոցիալական պետության կողմից իրականացվող հատուկ սոցիալական գործառնությունների հետ և այդ տեսանկյունից առանձնացնում են սոցիալական ու ոչ սոցիալական պետություններ: Տ.Ն. Ռադկոյի մոտեցմամբ սոցիալական և ոչ սոցիալական պետությունների տարբերությունը կախված է սոցիալական գործառնության շրջանակից և բովանդակությունից: Իրավագետի կարծիքով այն պետությունները, որոնք դեռ չեն կարող համարվել սոցիալական, իրենց սոցիալական գործառնության մեջ ներառում են առողջապահության, մշակույթի, կրթության, կենսաթոշակների, սոցիալական ապահովագրության և այլ բնագավառներում սոցիալական գործունեության բոլոր ոլորտները: Սոցիալական պետություններում առանձնանում են մի քանի ներքին գործառնություններ, որոնք և բնութագրում են վերջինիս որպես սոցիալական: Դրանցից են՝ տնտեսական գործառնությունը (ունի հստակ սոցիալական ուղղվածություն), բնակչության արժանապատիվ կյանքի պահպանման գործառնությունը, կրթության զարգացման և քաղաքացիների մշակութային իրավունքների պահպանման գործառնությունը, առողջապահության կազմակերպման գործառնությունը, սոցիալական ծառայությունների մատուցման գործառնությունը և այլն (Радько, 2009, էջ 221):

Ա.Խ. Մալիկովան գտնում է, որ սոցիալական գործառնությունը սոցիալական պետության առանցքային գործառնություն է, որոնք իրականացվում են պետության հիմնական նպատակներից մեկին՝ սննդի, հագուստի, հոգևոր զարգացման և այլ ոլորտներում յուրաքանչյուրի նվազագույն կարիքների բավարարմանը հասնելու համար: Ինչ վերաբերում է ոչ սոցիալական պետության սոցիալական գործառնությունների իրականացմանը, ապա դրանք ունեն երկրորդական նշանակություն, քանի որ նման պետության գլխավոր գործառնություն է՝ հասնել կոնկրետ նպատակի, որը, որպես կանոն, ուղղված է գոյություն ունեցող ռեժիմի պահպանմանը (Маликова, 2012, էջ 193):

Մեր կարծիքով սոցիալական պետության սկզբունքի իրացումը կապել որոշակի խումբ գործառնությունների իրագործման հետ, նշանակում է նեղացնել տվյալ հասկացության իրավաբանական սահմանները: Համամիտ ենք այն իրավական դիրքորոշման հետ, ըստ որի սոցիալական պետության սկզբունքը ընդհանուր ծրագրային դրույթ և սահմանադրաիրավական ուղենիշ լինելուց բացի նաև պարտադիր սահմանադրական նորմ է հանդիսանում (Դանիելյան, Այվազյան, Մանասյան, 2015, էջեր 137–138): Դա նշանակում է, որ սոցիալական պետության հայեցակարգը, հանդիսանալով սահմանադրական կարգի սկզբունք, ընդգրկում է հասարակական հարաբերությունների ողջ լրակազմը (Шушицкая, 2020, Т. 4, № 1. էջ 58) և որպես այդպիսին պետք է իրագործվի իրավունքի բոլոր ոլորտներում (Нечаева,

2007, էջ 49, նաև Գանիեյլյան, Այվազյան, Մանասյան, 2015, էջ 138), ուղղված լինի սոցիալական արդարությանն ու ապահովի արդար սոցիալական կարգ (Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, 2014, էջ 23–24): Այսինքն՝ սոցիալական արդարության սկզբունքը պետք է դրվի երկրում գործող ինստիտուտների և նորմերի հիմքում, դառնա հանրային քաղաքականության մշակման և իրականացման հիմնաքարը, նպաստի իրականացվող իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապաշտպան գործունեության սոցիալականացմանը:

Սույն հոդվածում առանձին իրավական նորմերի ուսումնասիրության հիման վրա կներկայացնենք սոցիալական արդարության կարևորությունը իրավաստեղծ գործընթացում:

Մեթոդ

Սոցիալական արդարության բովանդակության բացահայտումն իրականացվել է հիմնվելով Ամատիա Սենի և Ջոն Ռոուլզի կողմից առաջադրված հայեցակարգային մոտեցումների համադրման վրա, համաձայն որի վերջինս դիտարկվում է որպես «սկզբնական բարիքների հավասար բաշխում» և «ընդունակությունների զարգացման հավասար հնարավորություններ»: Ուսումնասիրությունն իրականացվել է նաև նորմատիվ նյութի դասակարգման, համեմատական-իրավական, համակարգային վերլուծությունների, իրավական փորձարարության մեթոդների հիման վրա:

Սոցիալական արդարության իրացման առանձնահատկությունները

Մարդակենտրոն սահմանադրության տեսանկյունից սոցիալական արդարության սկզբունքի իրացումը պետք է հաշվի առնի վերջինիս երկու տեսանկյունները՝

- բոլորի և յուրաքանչյուրի համար ընդունակություններ ձեռք բերելուն զուգահեռ հավասար հնարավորությունների տրամադրումն (Sen, 1993) առանց որևէ խտրականության,
- եկամուտների և ունեցվածքի արդարացի բաշխումը բյուջեի և այլ միջոցների վերաբաշխմամբ:

Առաջին դրույթը, նշանակում է, որ արդարության ձգտող ցանկացած պետություն պետք է պատասխանատվություն կրի յուրաքանչյուրի համար ունակությունների ձեռք բերման անհատական հնարավորություններ ապահովելու հարցում: Մարդիկ պետք է ունենան հնարավորություն իմաստավորելու իրենց կյանքը և, ելնելով սեփական շահերից, կարողանան օգտվել իրենց տրված հիմնարար իրավունքներից: Երկրորդի դեպքում բոլոր մարմինները, ինստիտուտներն ու կազմակերպությունները պետք է ներառվեն հասարակության քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգի մեջ, որպեսզի բաշխեն այն առաջնային բարիքները, որոնք էական են կյանքի հավասար հնարավորություններ ստեղծելու համար: Իսկ հիմնական բա-

րիքներից ամենակարևորներն են «իրավունքները, ազատությունները և հնարավորությունները, եկամուտն ու հարստությունը, ինքնահարգման սոցիալական պայմանները» (Rawls, 1971, էջ 92):

Ինչպես տեսնում ենք «նեգատիվ ազատության» դասական ազատական սկզբունքը, այսինքն՝ ազատությունը պետության կամ երրորդ կողմի միջամտությունից, ինչպես նաև «պոզիտիվ ազատությունը» կամ որևէ գործողություն կատարելու ազատությունը հանգեցնում են շուկայի սահմաններից դուրս շատ ավելի հեռու գնացող վերաբաշխման միջոցների (Giebler, Heiko, Merkel, Wolfgang, 2014, էջ 85): Իհարկե, այս համատեքստում կասկածից վեր է շուկայի արդյունավետությունը, քանի որ այն անհրաժեշտ է ազատ և արդարացի հասարակության համար, սակայն դա ևս հաստատում է մեր պնդումն առ այն, որ ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածում ամրագրված սոցիալական արդարության սկզբունքի իրացումը չի սահմանափակվում տնտեսական արդարության իրավաբանական և իրավակարգավորմամբ, այլ ներգործում է հասարակական հարաբերությունների ողջ համալիրի կարգավորման վրա:

Վերը նշված դրույթներին համապատասխան Հայաստանի Հանրապետությանը նախևառաջ անհրաժեշտ են սոցիալական արդարության պահանջներին համապատասխան օրենքներ: Հակառակ դեպքում իրավական նշանակության հարցեր լուծելու ընթացքում սոցիալական արդարության սկզբունքի անտեսումը կամ բացառումը ոչ միայն կխզի կապը պետության և անհատի միջև, այլ նաև հասարակության մեջ կառաջացնի շերտավորում և անարդարություն (Մալխասյան, 2017, № 2, էջ 210): Դա է այն կարևոր հիմնավորումներից մեկը, համաձայն որի սոցիալական արդարությունը դիտարկվում է որպես իրավաստեղծ գործընթացի որակական չափանիշների բաղադրամաս (Մաֆարյան, 2004, էջ 6):

Սոցիալական արդարության և իրավաստեղծ գործընթացի առնչակցությունները

Ժամանակակից հասարակության մեջ արդիական է իրավաստեղծ գործընթացում սոցիալական արդարության՝ որպես իրավաստեղծ գործընթացի հիմնական նպատակներից մեկի, շեշտադրումը: Խելամիտ նպատակադրումը, ինչպես նաև միջոցների օպտիմալ ընտրությունը դիտարկվում են որպես արդարության և որակի ապահովման կարևորագույն մեթոդ: Օրինակ՝ բնակչության եկամտային ու գույքային բևեռացումը զսպելու նպատակով պետությունը հարկային ոլորտում պետք է ելնի հարկերի ոչ միայն ֆիսկալ, այլ նաև սոցիալ-վերաբաշխողական, եկամտահարկի պրոգրեսիվ հարկման և այլ նպատակադրույթներից: Իհարկե, այս կամ այն հարկի կիրառումը պայմանավորված է տվյալ երկրում իրականացվող տնտեսական և հարկային քաղաքականության հետապնդած նպատակներով: Բայցևայնպես, հարկային համակարգերը վերաբաշխման տեսանկյունից սոցիալական արդարության հասնելու ամենահիմնական միջոցն են, իսկ եկամուտների պրոգրեսիվ հար-

կային համակարգերը՝ արդարացի: Դրանք նպատակ ունեն նվազեցնել եկամտի անհավասարությունն ու ապահովել հարկման արդարության սկզբունքի իրացումը¹:

Մեթոդոլոգիական նման մոտեցումը որոշակի հարցեր է առաջացնում ՀՀ հարկային օրենսգրքում վերջին շրջանում իրականացված եկամտահարկի և անշարժ գույքի հարկի փոփոխությունների առնչությամբ: Այսպես՝ ՀՀ հարկային օրենսգրքի 2019թ.հունիսի 25-ի փոփոխությունների և լրացումների արդյունքում գործող եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափից անցում կատարվեց համահարթ դրույքաչափի: Օրինագծի հեղինակները դրա հիմնավորման հիմնական նպատակներ սահմանեցին ազգային տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացման համար հարկային բեռի վերաբաշխմանն ուղղված փոփոխությունների իրականացումը, միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի կատարելագործումն ու կիրառության շրջանակի ընդլայնումը, ինչպես նաև գործունեության առանձին ոլորտներում առկա՝ հարկային համակարգին առնչվող խնդիրների լուծումը (Հիմնավորում, Կ-075-29.03.2019-ՏՀ-011/0): Այս փոփոխությունները փաստորեն հետապնդում էին բացառապես ֆիսկալ նպատակ և չէին անդրադառնում խնդրի սոցիալական բաղադրիչին: Հարցն այն է, որ բարձր եկամուտներ ունեցողների դեպքում տեղի է ունենում հարկային բեռի կտրուկ կրճատում, իսկ բնակչության համեմատաբար ցածր եկամուտներ ունեցողների, հատկապես՝ սոցիալապես խոցելի խմբերի համար հարկային բեռի էական փոփոխություն տեղի չի ունենում: Ցածր աշխատավարձ ստացողների կողմից տնօրինվող եկամտի անփոփոխության պայմաններում նկատվում է բարձր աշխատավարձ ստացողների տնօրինվող եկամուտների ավելացում՝ հանգեցնելով սոցիալական բևեռացման հետագա խորացմանն ու սրացմանը (ՀՀ ԱԺ Աշխատակազմի տնտեսագիտական փորձաքննության վարչության տնտեսական փորձաքննության բաժնի կողմից 17.04.2019թ. տրված եզրակացություն): Եկամտահարկի պրոգրեսիվ հարկման առավելությունների մասին է վկայում նաև մի շարք երկրների վերջին տարիների փորձը: Մակեդոնիան, որը 2007 թվականին հարկման համակարգի բարեփոխումների արդյունքում անցում կատարեց եկամտահարկի համահարթ հարկմանը, վերջին տասը տարում տնտեսական էական առաջընթաց չգրանցեց: Ավելին, այս հանգամանքն ուղղակիորեն նպաստեց անհավասարության սրնթաց աճի և երկիրն անհավասարության առումով լրացրեց Եվրոպայի առավել անհավասար պետությունների շարքը: Սլովակիան 2004 թվականին պրոգրեսիվ համակարգից անցում կատարեց 19 տոկոս համահարթ եկամտահարկի և 2013 թվականին կրկին վերադարձավ պրոգրեսիվ համակարգի: 2004 թվականին Գերմանիայում մշակվեց եկամտահարկի ներմուծման և տն-

1 Օրինակ, Մեքսիկայում մեծ ուշադրություն է դարձվում հարկային համակարգի բարեփոխմանը, որպեսզի վերացվի կյանքի մակարդակի և տնային տնտեսությունների եկամուտների տարածական տարբերությունները գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև: Այլ երկրներում, ներառյալ Միացյալ Թագավորությունը և Միացյալ Նահանգները, առաջադեմ հարկեր են գանձվում եկամտի և որոշակի ապրանքներից, ինչի հետևանքով՝ հարկերի դրույքաչափը բարձրանում է անձի վճարունակությանը համամասնորեն (Khechen, 16 December 2013, էջ 6)

տեսական աճի խթանման հայեցակարգ: Սակայն հանգամանքների բերումով Գերմանիան ևս հրաժարվեց համահարթ եկամտահարկի գաղափարից (Քաղաքական դիսկուրս, 08.03.2019) :

Մեր կարծիքով սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում սոցիալական արդարության սահմանադրական սկզբունքի իրականացման հիմնական ուղին եկամտահարկի պրոգրեսիվ գանձումն է, որը հնարավորություն կտա նյութական ռեսուրսների վերաբաշխման միջոցով բարելավել մատուցվող հանրային ծառայությունների որակը, ինչպիսիք են օրինակ՝ հասարակական տրանսպորտը, կրթությունը, առողջապահությունը և այլն:

Անշարժ գույքի հարկմանը վերաբերող 2020թ. հունիսի 25-ին կատարած փոփոխությունների դեպքում օրենսդիրն իր նպատակը համարեց կադաստրային արժեքների հիման վրա անշարժ գույքի հարկի հաշվարկման համակարգից անցում կատարել անշարժ գույքի շուկայական արժեքների մոտարկված արժեքների հիման վրա հաշվարկվող անշարժ գույքի հարկի համակարգին: Նպատակի իրականացման արդյունքում տեսանելի հարստության կամ ունեցվածքի համար սահմանվելու էր ավելի արդարացի հարկային բեռ՝ ապահովելով պետության վերաբաշխման գործառույթի արդյունավետ իրականացումը (Հիմնավորում, Կ-651-12.06.2020-ՏՀ-011/0): Առաջին հայացքից թվում է, որ փոփոխությունները հետապնդում են բացառապես սոցիալական արդարության հաստատման նպատակ: Սակայն առաջարկվող նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հարկման նման համակարգի պայմաններում տեղի է ունենում անշարժ գույքի հարկի գծով հարկային բեռի ավելացում և չհարկվող շեմի վերացում ողջ բնակչության շրջանում: Ավելին, անշարժ գույքի գնահատման ժամանակ կիրառվում է տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը, որի հիման վրա կտրուկ աճում են առանձին գոտիներում, հատկապես՝ Երևան քաղաքի կենտրոնում գտնվող բնակելի տների հարկերը: Ընդ որում, նման ծանր հարկային բեռ է սահմանվում հավասարապես բոլոր սոցիալական խմբերի համար:

Այն, որ փոփոխության արդյունքում տեղի է ունենում անշարժ գույքի հարկի գծով հարկային բեռի կտրուկ աճ, ընդունվում է նաև օրինագծի հեղինակների կողմից, ինչը կանխելու համար վերջիններս առաջարկում են հարկման նոր համակարգին անցում կատարել չորս տարիների ընթացքում (Հիմնավորում, Կ-651-12.06.2020-ՏՀ-011/0): Հարց է առաջանում, արդյո՞ք չորս տարի հետո այնքան բարելավված կլինի բնակչության ընդհանուր սոցիալական վիճակը, որպեսզի բոլոր սոցիալական խմբերն ի վիճակի լինեն վճարել տարեկան նման բարձր հարկեր, հատկապես համաձարակի և պատերազմի հասցրած վնասների պայմաններում, թե՞ ցածր եկամուտներ ունեցող ընտանիքները ստիպված են լինելու վաճառել իրենց, հատկապես բարձր հարկման գոտիներում գտնվող բնակարանները՝ ավելի էժան արժեք ունեցող գույք գնելու համար:

Այն պնդումը, որ նոր համակարգը նպաստելու է տեղական բյուջեների կայունացմանը (Հիմնավորում, Կ-651-12.06.2020-ՏՀ-011/0), դժվար է արդարացնել այն տեսակետից, որ ցածր եկամուտ ունեցողի կողմից բարձր գույ-

քահարկ վճարելը լինելու է կամ անհնարին, կամ էլ ավելի է վատթարացնելու վիճակը, որի արդյունքում ունենալու է լրացուցիչ սոցիալական աջակցության կարիք: Մյուս կողմից, եթե օրենսդիրը նպատակ է հետապնդում տեսանելի հարստության կամ ունեցվածքի համար ավելի արդարացի հարկային բեռ սահմանել, ապա, մեր կարծիքով, սոցիալական արդարության ապահովման լավագույն լուծումը կլինի շքեղության հարկի ներդնումը:

Վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ կատարված փոփոխություններին համապատասխան եկամուտների հարկումն իրականացվում է համահարթ մոդելի շրջանակներում, իսկ անշարժ գույքին՝ շուկայական արժեքի (պրոգրեսիվ հարկման) հիման վրա: Այս համակարգի պարագայում փոփոխությունների ողջ բացասական ազդեցությունն իր վրա զգում է հատկապես հասարակության առավել խոցելի խավը, իսկ փոփոխությունների նպատակը սոցիալական արդարությունից վերածվում սեփականության վերաբաշխման՝ ի օգուտ նյութապես առավել ապահովված խավերի:

Սոցիալական արդարության տեսակետից կարևոր է նաև օրինագծերի մշակման ընթացքում բացառել օտարերկրյա օրենքների ուղղակի ընդօրինակումը, իսկ տեղայնացման պայմաններում հաշվի առնել հայ ժողովրդի պատմական, մշակութային, հոգեբանական, սովորութային, տնտեսական, աշխարհաքաղաքական և այլ առանձնահատկությունները: Կարևոր է նաև օրինագծերի մշակման ընթացքում միջազգային փորձի ուսումնասիրության և համեմատության համար ձիշտ մեթոդաբանության ընտրությունը: Օրինակ՝ անշարժ գույքի հարկին վերաբերող օրենսդրական փոփոխությունների մշակման ընթացքում անշարժ գույքի հարկ/ՀՆԱ հարաբերակցությունը համեմատելու համար ուսումնասիրվել է մի շարք երկրների, այդ թվում՝ ԱՄՆ-ի, Միացյալ Թագավորության, Ճապոնիայի, Իսրայելի վիճակագրությունը: Ըստ այդ տվյալների եզրակացություն է արվել առ այն, որ Հայաստանում անշարժ գույքի հարկի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ բավականին ցածր է (0.2%) և պետք է վերանայվի: Սակայն հարց է առաջանում՝ արդյո՞ք մենք համեմատել ենք մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը կամ նվազագույն աշխատավարձը նշված պետությունների հետ, թե՞ ուղղակի հիմնվել ենք վիճակագրական տվյալների վրա: Յու.Ա. Տիխոմիրովը ուսումնասիրելով գիտական-ձանաչողական փորձը և վերլուծական պրակտիկան, նշում է, որ վերլուծությունների ընթացքում օրենսդրական համանմանությունների (անոլոգիաների) արագ և անհաջող կիրառումը չի կարող հանգեցնել դրական արդյունքի: Ըստ իրավագետի՝ «իրավական փոխպատվաստումը» անխուսափելիորեն հանգեցնում է կոնկրետ իրավական համակարգի համար խորթ ակտերի ու նորմերի, և որպես արդյունք՝ դրանց հետագա մերժման: Կարևոր է նաև հաշվի առնել արտասահմանում և մեր երկրում այս կամ այն ինստիտուտների ծագման օբյեկտիվ պայմաններն ու գործոնները (Тихомиров, 1996, էջ 56): Նման սխալներից խուսափելու համար խորհուրդ է տրվում հաշվի առնել առկա և պլանավորված ակտի արտաքին նմանությունը որոշող տարբեր գործոններ:

Իրավաստեղծ գործընթացի արդյունավետության բարձրացման համար

հատկապես կարևորվում են ժամանակակից իրավական տեխնոլոգիաների՝ պլանավորման, իրավական կանխատեսման, իրավական փորձարարության, հանրային քննարկումների, կարգավորման ազդեցության գնահատման օգտագործումը իրավաստեղծ գործընթացում (Черногор, Залойло, 2018, էջ 84): Դրանք կարող են դիտարկվել որպես իրավական իրականությունը վերափոխելու, իրավունքը սոցիալական պրակտիկա ներմուծելու միջոց (Червонюк, 2009, № 3, էջեր 368–369):

Սոցիալ-տնտեսական զարգացման պլանների և ծրագրերի մշակման ժամանակ մի շարք երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Չինաստան և այլք) հատկապես շեշտադրվում է իրավական փորձարարության մեթոդը: Այն իրականացվում է համապատասխան լիազոր մարմնի կողմից՝ որոշակի ժամանակահատվածում, որոշակի տարածքի վրա հասարակական հարաբերությունների նոր իրավական կարգավորման կամ իրավական ինստիտուտի գործադրման հիմնավորվածությունն ու արդյունավետությունը ստուգելու նպատակով, իսկ ստացված տվյալների հիման վրա՝ որոշելու այդ փորձը երկրի ողջ իրավական տարածքի վրա անորոշ ժամանակով տարածելու հնարավորության հարցը (Черногор, Залойло, 2018, էջեր 97–98): Նման փորձնական (պիլոտային) ծրագրերը հնարավորություն են ընձեռում սահմանափակ տարածքներում տեսնել իրավական կարգավորման որոշակի թերությունները, բացթողումներն ու անձշտությունները: Որոշ դեպքերում էլ վերլուծության ու գնահատման հիման վրա հնարավոր է լինում ցույց տալ, որ երկիրը դեռ պատրաստ չէ այս կամ այն իրավակարգավորման հաջող ներդրմանը կամ հակառակը՝ եզրակացնել, որ լավագույն փորձի տարածումը կբարելավի առանձին ոլորտները:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող փորձնական ծրագրերի մեծ մասն՝ իրավական ձևակերպում ստացած տնտեսական, ժողովրդագրական, մանկավարժական, սոցիալական և այլ փորձարարություններ են: Սակայն դրանց փորձարարական գործոնը ոչ թե իրավական կարգադրագրերն են, այլ վերը նշված այս կամ այն փորձարարությունների հետ կապված որոշումները: Իրավական փորձարարության մեթոդի ակտիվ կիրառումը Հանրապետությունում կարող է դրական ազդեցություն ունենալ հնարավորությունների հավասարության, գործազրկության դեմ պայքարի և սոցիալական արդարության ապահովման մի շարք խնդիրների լուծման համար: Դա կարևոր է հատկապես այն դեպքերում, երբ իրականացվում են երկրի համար կարևոր սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, ընդունվում են էական նշանակություն ունեցող քաղաքական որոշումներ, ինչպես նաև այն դեպքերում, երբ նախագծի արդյունավետությունն ի սկզբանե դրվում է կասկածի տակ: Փորձարարությունը ապահովում է նաև օրենսդրության կայունությունը:

Վերը նշված իմաստով հետաքրքրական է Ֆրանսիայի փորձը, որտեղ 2003թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ընդունված 37.1 հոդվածում ուղղակիորեն նշվում է. «Օրենքը և կանոնակարգը, որպես կարգավորման առարկա, կարող են պարունակել փորձարարական բնույթի

դրույթներ, որոնք գործում են սահմանափակ ժամանակահատվածում»: Նմանատիպ դրույթ է պարունակում նաև 72-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը:

Վերը նշվածից կարող ենք եզրակացնել, որ օրենսդրության մշակման համար իրավական փորձարարության անբավարար դիտարկումը կարող է հանգեցնել հապճեպ, չկշռադատված օրենսդրական որոշումների կայացման և տարատեսակ ռիսկերի ի հայտ գալուն: Այս առումով, անհրաժեշտ ենք համարում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում ամրագրել դրույթներ իրավական նորմերի մշակման ընթացքում իրավական փորձարարության կիրառման վերաբերյալ:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն փաստը, որ փորձարարության չափից ավելի կիրառումը կարող է հանգեցնել ձիշտ հակառակ արդյունքի՝ անվստահություն առաջացնել պետության՝ որպես ժողովրդի կամքի արտահայտողի նկատմամբ, զսպել իրավական կարգավորման զարգացումը (ավելի մանրամասն տես СивяцкиЙ, Сорокин, 2016. № 4, էջեր 15–30): Այդ իսկ պատճառով կարևոր է օրենսդրական ամրագրման հետ միաժամանակ մշակել սոցիալական և իրավական փորձարարության կազմակերպման ու անցկացման կարգը, ժամկետները, դեպքերն ու մեթոդները կանոնակարգող նորմատիվ ակտերը, որոնք կապահովեն դրանց գիտական կազմակերպումը, արդյունքների օբյեկտիվ գնահատումն ու ամփոփումը:

Սոցիալական արտադրության իրականացման համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը: Այն հանդիսանում է իրավաստեղծ մարմնի կողմից ընդունվող որոշումների արդյունավետությունը հիմնավորող գործիք, ունի առանցքային նշանակություն որոշումների կայացման գործընթացի բարելավման և դրա արդյունավետության բարձրացման գործում (Հայեցակարգ, ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N 1323-Լ որոշման Հավելված N 1, էջ 3): Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կարգավորման ազդեցության գնահատման բնագավառներից մեկը սոցիալական ոլորտն է (Կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը..., ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2075-Ն որոշման Հավելված, կետ 3), որն ընդգրկում է զբաղվածություն, աշխատանքային պայմաններ, եկամուտների բաշխվածություն, սոցիալական պաշտպանություն, աշխատանքի որակ և ստանդարտներ (Կարգավորման ազդեցության գնահատման մեթոդական ուղեցույց, 2021, էջ 93): Սակայն կարևոր ենք համարում գնահատել նաև սոցիալական ներառվածությունը, որը լայն տարածում ունի աշխարհի 18 երկրներում (Մեծ Բրիտանիա, ԵՄ, Էստոնիա, Չեխիա և այլն) (Global Indicators of Regulatory Governance, 2019, էջեր 5, 11):

Եզրակացություն

Ամփոփելով վերոշարադրյալը, կարող ենք նշել, որ սոցիալական պետության սկզբունքի իրագործումը պետք է ուղղված լինի սոցիալական արդարության և արդար սոցիալական կարգի ապահովմանը: Այդ տեսակետից

կարևոր նշանակություն է ձեռք բերում սոցիալական արդարության սկզբունքի շեշտադրումն իրավաստեղծ գործընթացում: Դրանում արդարության և որակի ապահովման մեթոդներ են հանդիսանում իրավաստեղծ գործընթացի խելամիտ նպատակադրումը, իրավական տեխնոլոգիաների, հատկապես՝ իրավական փորձարարության և կարգավորման ազդեցության գնահատման օգտագործումը: Հարկային օրենսգրքում իրականացված վերջին փոփոխությունների վերլուծության հիման վրա եզրակացություն է արվում առ այն, որ Հայաստանում դեռևս պետք է ձևավորել սոցիալական արդարության պահանջներին համապատասխանող օրենսդրական ակտերի համակարգ:

Օգտագործված գրականության ցանկ

Դանիելյան, Գ.Բ., Այվազյան, Վ.Ա., Մանասյան Ա.Ա. (2015) *Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն)*: Եր.: Հայրապետ հրատ.:

Կարգավորման ազդեցության գնահատման ապակենտրոնացված համակարգի ներդրման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հասարակելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 26-ի N 1323-Լ որոշման Հավելված N 1: ՀՀՊՏ 2019.10.09/70(1523).1 Հոդ.915.10 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134855> (մուտք՝12.03.2021)

Կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, դրա արդյունքում փոփոխվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ձանաչելու մասին ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2075-Ն որոշման Հավելված: Միասնական կայք 2020.12.14–2020.12.27 Պաշտոնական հրապարակման օրը 18.12.2020 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148376> (մուտք՝12.03.2021)

Կարգավորման ազդեցության գնահատման մեթոդական ուղեցույց: ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 46-Լ որոշման հավելված: Միասնական կայք 2021.01.11–2021.01.24 Պաշտոնական հրապարակման օրը 18.01.2021, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149219> (մուտք՝12.03.2021)

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ (2014), Երևան, հոկտեմբեր:

Հիմնավորում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին: Կ-651-12.06.2020-SՀ-011/0,

<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11707&Reading=0> (մուտք՝12.03.2021)

Հիմնավորում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

- ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին», ...լրացում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունման: Երևան, 28 մարտի, 2019: Կ-075-29.03.2019-ՏՀ-011/0
<http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10324&Reading=0>
(մուտք՝12.03.2021)
- ՀՀ ԱԺ Աշխարհակազմի անդամազգիտականփորձարկնություն վարչության անդամական փորձարկնություն բաժնի կողմից 17.04.2019թ. արված եզրակացությունը http://parliament.am/draft_history.php?do=showdiveval&Div=2&ID=10324
(մուտք՝12.03.2021)
- Մալխասյան, Լիանա (2017) Հարուկ իրավական սկզբունքների դերը իրավական համակարգում. Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու, № 2, էջեր 204-212:
- Քաղաքական դիսկուրս (8/03/2019) Հարկային համակարգ, արդարություն և անդամական զարգացում. Համաժողովի նյութեր, <http://diskurs.am/2019/03/1084/> (մուտք՝12.03.2021)
- Маликова, А.Х. (2012). *Проблемы формирования социального государства в Таджикистане*. Дисс...д.ю.н. Москва.
- Нечаева, Е.Г. (2007) *Социальное государство: правовое понимание и практика*: Автореф. дис. ... канд. юрид. наук. М.
- Радько, Т.Н. (2009). *Теория государства и права: учеб.* 2 изд. М.
- Сивицкий, В.А., Сорокин, М.Ю. (2016). *Правовой эксперимент и развитие права //* Право. Журнал Высшей школы экономики. № 4, էջեր 15–30:
- Тихомиров, Ю.А. (1996). *Курс сравнительного правоведения*. — М.: Издательство НОРМА.
- Червонюк, В.И. (2009). *Правовые технологии («правовая инженерия»), или прикладная юриспруденция: методологические и дидактико-методические проблемы внедрения в систему вузовской подготовки правоведов //* Юридическая техника. № 3.
- Черногор, Н.Н., Залоило, М.В. (2018) *Актуальные проблемы правотворчества: учебное пособие* /— М.: Институт законодательства и сравнительного правоведения при Правительстве Российской Федерации: ООО «ЮРИДИЧЕСКАЯ ФИРМА КОНТРАКТ».
- Шупицкая, О.Н. (2020) *Реализация конституционных принципов в судебном правоприменении//* Правоприменение. Т. 4, № 1 (56–64). DOI: 10.24147/2542-1514.2020.4(1).56-64
- Giebler, Heiko, Merkel, Wolfgang (2014/01/01). *Measuring Social Justice and Sustainable Governance in the OECD*. In book: *Theory and Practice of the Welfare State in Europe in 20th Century* (էջեր 79–101). Publisher: HISTORICKY USTAV. Editors: Zlatica Zudova-Leskova, Emil Voracek.
- Global Indicators of Regulatory Governance: Worldwide Practices of Regulatory Impact Assessments* (2019/07/10). World Bank Group.
- Khechen, Mona (2013). *Social justice: concepts, principles, tools and challenges//* Economic and Social Commission for Western Asia (ESCWA), E/ESCWA/SDD/2013/Techni-

cal Paper.9, 16 December 2013, New York.

Rawls, J. (1971). *A Theory of Justice*. Harvard University Press.

Sen, A. (1993). *Capability and Well-Being*. In: Amartya Kumar Sen and Martha Nussbaum (eds.). *The Quality of Life*, Cambridge, MA: Harvard University Press.

References

Daniyelyan, G.B., Ayvazyan, V.A., Manasyan A.A. (2015) *Sahmanadrakan barepvokhumneri hayetsakargi druytnery yev drants iratsman himnakan ughghutyunnery Hayastani Hanrapetutyunum (gitagortsakan hetazotut'yun)* [Provisions of the concept of constitutional reforms of the Republic Armenia and the main directions of their implementation (scientific and empirical research)]. Yer.: Hayrapet hrat. (In Arm.)

Kargavorman azdetsutyany gnahatman apakentronatsvats hamakargi nerdrman hayetsakargy yev hayetsakargits bkhogh mijotsarrumneri tsragiry hastatelu masin HH karravarutyany 2019 tvakani septemberi 26-i N 1323-L voroshman Havelvats N 1 [The concept of a decentralized regulatory impact assessment system and approving the program of measures arising from the concept. Appendix N 1 to the decision of the Government of the Republic of Armenia 26th of September 2019, N 1323-L]: HHPT 2019.10.09/70(1523).1 Hod.915.10 <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134855> (accessed: 12.03.2021) (In Arm.)

Kargavorman azdetsutyany gnahatman irakanatsman kargy, zhamketnery yev depkery, dra ardyunkum trvogh yezrakatsutyany nerkayatsvogh pahanjnyer sahmanelu yev Hayastani Hanrapetutyany karravarut'yan mi shark voroshmner uzhy kortsrats chanachelu masin HH karavarutyany 2020 tvakani dektemberi 17-i N 2075-N voroshman Havelvats [Annex to the Decision of the Government of the Republic of Armenia on defining the requirements for the implementation of the regulatory impact assessment, the terms, and the cases, the requirements for the conclusion given as a result]. Miasnakan kayk 2020.12.14–2020.12.27 Pashtonakan hrarakman ory 18.12.2020 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=148376> (accessed: 12.03.2021) (In Arm.)

Kargavorman azdetsutyany gnahatman metodakan ughetsuyts [Methodological guidelines for regulatory impact assessment]. HH karravarutyany 2021 t'vakani hunvari 14-i N 46-L voroshman havelvats. Miasnakan kayk 2021.01.11–2021.01.24 Pashtonakan hrarakman ory 18.01.2021 (accessed: 12.03.2021) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149219> (In Arm.)

Hayastani Hanrapetutyany sahanadrakan barepvokhumneri hayetsakarg [Concept of constitutional reforms of the Republic of Armenia] (2014), Yerevan, hoktember. (In Arm.)

Himnavorum «Hayastani Hanrapetutyany harkayin orensgrum popokhutyunner yev Iratsumner katarelu masin» HH orenki nakhagtsi masin [Rationale on the draft law of the Republic of Armenia “On Making Amendments to the Tax Code of the Republic of Armenia”]. K-651-12.06.2020-TH-011/0 (accessed: 12.03.2021) <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=11707&Reading=0> (In Arm.)

Himnavorum «Hayastani Hanrapetutyany harkayin orensgrum popokhutyunner yev

- Iratsumner katarelu yev 2018 tvakani hunisi 21-i «Hayastani Hanrapetut'yan harkayin orensgrkum popokhutyunner yev Iratsumner katarelu yev 2017 t'vakani dektemberi 21-i «Hayastani Hanrapetutyanyan harkayin orensgrkum popokhutyunner yev Iratsumner katarelu masin» HO-266-N orenkum popokhutyunner yev Iratsumner katarelu masin» HO-338-N orenkum popokhut'yun katarelu masin»* [Rationale for making amendments to the Tax Code of the Republic of Armenia, and On Making Amendments to the “Amendments to the Tax Code of the Republic of Armenia” of June 21, 2018, and On Making Amendments to the Law HO-266-N “On Making Amendments and Addenda to the Tax Code of the Republic of Armenia” of December 21, 2017 “On Making Amendments to the Law HO-338-N”], ...Iratsum popokhutyunner katarelu masin» orenkneri nakhagtseri pateti yndunman. Yerevan, 28marti, 2019. K-075-29.03.2019-TH-011/0 (accessed: 12.03.2021)
- <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=10324&Reading=0> (In Arm.)
- HH AJ Ashkhatakazmi tntesagitakan pordzaknnut'yan varchutyanyan tntesakan pordzaknnutyan bazhni koghmits 17.04.2019t. trvats yezrakatsutyuny* [Conclusion by the Economic Expertise Division of the Economic Expertise Department of the RA NA Staff 17.04.2019] (accessed: 12.03.2021) http://parliament.am/draft_history.php?do=showdiveval&Div=2&ID=10324 (In Arm.)
- Malkhasyan, Liana (2017) *Hatuk iravakan skzbunkneri dery iravakan hamakargum* [The role of special legal principles in the legal system]. Kant'egh. Gitakan hodvatsneri zhoghovatsu, № 2, ejer 204–212. (In Arm.)
- Kaghakakan diskurs (8/03/2019) *Harkayin hamakarg, ardarutyun yev tntesakan zargatsum* [Tax system, justice u economic development]. Hamazhoghovi nyuter, <http://diskurs.am/2019/03/1084/>
- Malikova, A.KH. (2012). *Problemy formirovaniya sotsial'nogo gosudarstva v Tadjikistane [Issues of a social state formation in Tajikistan.]*. Diss...d.yu.n. Moskva. (In Rus.)
- Nechayeva, Ye.G. (2007) *Sotsial'noye gosudarstvo: pravovoye ponimaniye i praktika* [Welfare state: legal understanding and practice]: Avtoref. dis. ... kand. yurid. nauk. M. (In Rus.)
- Rad'ko, T.N. (2009). *Teoriya gosudarstva i prava: ucheb.* [Theory of state and law: textbook]. 2 izd. M. (In Rus.)
- Sivitskiy, V.A., Sorokin, M.YU. (2016). *Pravovoy eksperiment i razvitiye prava* [Legal experiment and development of law] // Pravo. Zhurnal Vysshey shkoly ekonomiki. № 4, ejer 15–30 (In Rus.)
- Tikhomirov, YU.A. (1996). *Kurs sravnitel'nogo pravovedeniya* [Comparative Law Course.]. — M.: Izdatel'stvo NORMA. (In Rus.)
- Chervonyuk, V.I. (2009). *Pravovyye tekhnologii («pravovaya inzheneriya»), ili prikladnaya yurisprudentsiya: metodologicheskiye i didaktiko-metodicheskiye problemy vnedreniya v sistemu vuzovskoy podgotovki pravovedov* [Legal technologies (“legal engineering”), or applied jurisprudence: methodological and didactic-methodical problems of introducing legal scholars into the system of university training]// Yuridicheskaya tekhnika. № 3. (In Rus.)

- Chernogor, N.N., Zaloilo, M.V. (2018) *Aktual'nyye problemy pravotvorchestva: uchebnoye posobiye* [Actual problems of lawmaking: textbook]/— M.: Institut zakonodatel'stva i sravnitel'nogo pravovedeniya pri Pravitel'stve Rossiyskoy Federatsii: OOO «YURIDICHESKAYA FIRMA KONTRAKT». (In Rus.)
- Shupitskaya, O.N. (2020) *Realizatsiya konstitutsionnykh printsipov v sudebnom pravoprimeneni* [Implementation of constitutional principles in judicial enforcement]// *Pravoprimeneniye*. T. 4, № 1 (56–64). DOI: 10.24147/2542–1514.2020.4(1).56–64 (In Rus.)
- Giebler, Heiko, Merkel, Wolfgang (2014/01/01). *Measuring Social Justice and Sustainable Governance in the OECD*. In book: *Theory and Practice of the Welfare State in Europe in 20th Century* (էջեր 79–101). Publisher: HISTORICKY USTAV. Editors: Zlatica Zudova-Leskova, Emil Voracek. (In Eng.)
- Global Indicators of Regulatory Governance: Worldwide Practices of Regulatory Impact Assessments* (2019/07/10). World Bank Group. (In Eng.)
- Khechen, Mona (2013). *Social justice: concepts, principles, tools and challenges*// Economic and Social Commission for Western Asia (ESCWA), E/ESCWA/SDD/2013/Technical Paper.9, 16 December 2013, New York.
- Rawls, J. (1971). *A Theory of Justice*. Harvard University Press. (In Eng.)
- Sen, A. (1993). *Capability and Well-Being*. In: Amartya Kumar Sen and Martha Nussbaum (eds.). *The Quality of Life*, Cambridge, MA: Harvard University Press. (In Eng.)

Нуне Джомардян

*Руководитель Центра международных связей и исследований
Международного университета Евразия,
заместитель заведующего юридической кафедры, соискатель кафедры
Эл.адрес: nune.jomardyan@eiu.am*

СОЦИАЛЬНАЯ СПРАВЕДЛИВОСТЬ КАКА КАЧЕСТВЕННЫЙ КРИТЕРИЙ ПРАВОТВОРЧЕСТВА

Основываясь на теориях А.Сена и Дж.Ролза, в данной статье применение принципа социальной справедливости рассматривается с двух точек зрения: «равное распределение первичных благ» и «равные возможности развития способностей». Именно с этой методологической точки зрения и оценивается соотношение социальной справедливости и правотворчества, в ходе которой социальная справедливость рассматривается как одна из основных целей правотворческого процесса. В статье также отмечена важность применения современных юридических технологий. На основе анализа последних изменений в Налоговом кодексе выявлены существующие недостатки и указаны пути их преодоления.

Ключевые слова: социальная справедливость, правотворческий процесс, принцип, цель, правовая технология.

Nune Jomardyan*Head of International Relations and Research Center,
Deputy Head of Law Department at Eurasia International University,**Ph.D. student**Email: nune.jomardyan@eiu.am*

SOCIAL JUSTICE AS A QUALITATIVE INDICATOR OF THE LAW-MAKING PROCESS

Based on the theories of A.Sen and J.Rolls, in this article, the implementation of the principle of social justice was viewed from two perspectives: “equal distribution of primary goods” and “equal opportunity in developing capabilities”. According to the very methodological approach the relevance of social justice and law-making was assessed in which social justice was prioritised as one of the fundamental goals of the law-making process. The research has given much prominence to contemporary legal technologies as well. Based on the analysis of Tax Code recent changes, the existing imperfections were pointed out and the ways of overcoming them were highlighted.

Key words: social justice, law-making process, principle, purpose, legal technology.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2021թ. ապրիլի 9-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2021թ. ապրիլի 13-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2021թ. մայիսի 7-ին

Ռաֆիկ Ավետիսյան

ՀՀ պաշտպանության նախարարության Պաշտպանական անվտանգային հետազոտական համալսարանի փրաթածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի ավագ գիտնական-վերլուծաբան, ՀՀ Պետական կառավարման սկսադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ ravetisyan94@gmail.com

DOI: 10.53614/18294952-2021.1-36

ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հաշվի առնելով ԵՄ-ում ազգայնական միտումների աճը, եվրոպական ազգ-պետությունների կերպափոխումները, ներգաղթյալների հոսքի ավելացումը, սոցիալ-տնտեսական խնդիրները, անհրաժեշտություն է առաջանում բացահայտել եվրոպական միության բազմամշակութայնության քաղաքականության ազդեցությունը տարբերվող մշակութային նորմեր և սովորույթներ կրող խմբերի նկատմամբ: Թեմայի բազմաշերտությունը հնարավորություն կտա առավել համակողմանի պատկերացում ձևավորել անջատողական ճգնաժամների հաղթանակարման հարցերի շուրջ: Հոդվածում բացահայտվել են տարբերվող մշակութային նորմեր և սովորույթներ կրող ենթամիավորումների անջատողական պահանջների և պետության իրականացրած բազմամշակութայնության քաղաքականության միջև եղած կապը՝ որպես անջատողական մարտահրավերներին համարժեք պատասխանելու, քաղաքացիական համերաշխության վերականգնման, սոցիալական բախումների աճի կանխման ռազմավարական գործիք:

Հիմնաբառեր. անջատողական շարժումներ, բազմամշա-

կուսայնություն, Եվրոպական միություն, ինքնավարություն, էթնոմշակութային խմբեր, ներգաղթյալներ, մշակութային բազմազանություն:

Ներածություն

Անջատողական շարժումների ակտիվացումը, ներգաղթյալների հոսքը, սոցիալական տարբեր խմբերի քաղաքական պահանջները լուրջ մարտահրավերներ են ԵՄ-ի համար: Այս համատեքստում կարևորվում է ազգային-անջատողական խմբավորումների վրա բազմամշակութայնության քաղաքականության ազդեցության բացահայտումը: Մասնավորապես՝ կփորձենք պարզել, թե որքանով են կապված տարբերվող մշակութային նորմեր և սովորույթներ կրող ենթամիավորումների անջատողական պահանջները պետության իրականացրած բազմամշակութայնության քաղաքականության հետ:

Այն պետությունները, որոնց բնակչությունն ունենում է բազմէթնիկ կառուցվածք հաճախ կարող են բախվել առանձին ենթամիավորումների անջատողականության խնդիրներին: Այդ ենթամիավորումները կարող են հետապնդել ինչպես ինքնավարության ձեռքբերման, այնպես էլ անկախ պետության ձևավորման նպատակ: Անջատողական ձգտումների ակտիվացման կանխման, պետության ներսում միջմշակութային կապերն ամրապնդելու համար պետությունները հաճախ փորձում են իրականացնել բազմամշակութայնության քաղաքականություն:

Տեսական հիմքեր

Հետազոտության տեսական հիմքում ընկած են անջատողականության, բազմամշակութայնության, ազգայնականության և այլ տեսահայեցակարգային հասկացություններ, որոնք թույլ են տալիս տարբեր մոտեցումներով վերլուծել ԵՄ-ում բազմամշակութայնության քաղաքականության իրականացման առանձնահատկությունները քաղաքական անջատողականության զարգացման հիմնախնդիրների համատեքստում: Այդ նպատակով օգտագործվել են տարբեր մենագրություններ, վերլուծական հոդվածներ, իրավական փաստաթղթեր, հասարակական հարցումների տվյալներ և այլն:

Հետազոտության մեթոդաբանական հիմքում ընկած են վերլուծության դիալեկտիկական, համեմատական, արժեքաբանական, պատմա-նկարագրական, գործառնական-կիրառական, վերլուծական-կանխատեսական, իրադարձությունների վերլուծության, և այլ մեթոդներ:

Բացահայտվել են տարբերվող մշակութային նորմեր և սովորույթներ կրող ենթամիավորումների անջատողական պահանջների և պետության իրականացրած բազմամշակութայնության քաղաքականության միջև եղած կապը՝ որպես անջատողական մարտահրավերներին համարժեք պատասխանելու, քաղաքացիական համերաշխության վերականգնման, սոցիալական բախումների աճի կանխման ռազմավարական գործիք:

Բազմամշակութայնության (մուլտիկուլտուրալիզմ) քաղաքականության իրականացման առանձնահատկությունները

«Բազմամշակութայնություն» եզրույթը Օքսֆորդի բառարանում սահմանվում է որպես տարբեր մշակութային ինքնություններ կրող մարդկանց գոյակցություն ընդհանուր պետությունում, հասարակությունում կամ համայնքում: Եվրոպայում «Բազմամշակութայնություն» եզրույթը սկսել է շրջանառվել 1957 թ., Շվեյցարիայում բնակվող ֆրանսիական, իտալական, գերմանական համախմբված բնակչության բազմազանությունը նկարագրելու համար (Dembek, 2019, էջ 310): «Բազմամշակութայնություն» եզրույթը գիտական գրականությունում հայտնվել է գաղութային համակարգի փլուզումից հետո, երբ նախկին գաղութային երկրներից դեպի մետրոպոլիա սկսվեց աշխատանքային միգրանտների մեծ հոսք: Այդ ժամանակ մետրոպոլիաների մեծ մասը դեմ չէր միգրացիային, քանի որ արդյունաբերական ընկերություններում կային աշխատաշուկայի համալրման խնդիրներ և էժան աշխատուժի պահանջարկ:

Բազմամշակութայնությունը նույն կենսական տարածքում, տարբեր մշակութային խմբերի խաղաղ համակեցության քաղաքականությունն է, որի հիմքում ընկած է տարբեր մշակույթների միջև առկա հարգանքը և նրանց միջև համընդհանրության որոնման հրամայականը (Kirabaev, 2002, էջ 155–167): Այդ քաղաքականությունը ենթադրում է անհատի լիարժեք ներգրավում հասարակությանը՝ առանց տարբերակիչ առանձնահատկության կորստի և իրավունքների սահմանափակման: Հաշվի առնելով սահմանումների բազմազանությունը, կարելի է փաստել, որ բազմամշակութայնությունը բազմակողմանի երևույթ է և դժվար է այն միանշանակորեն սահմանել: Այն հասկացվում է որպես հասարակության շրջանում էթնոմշակութային բազմազանության պահպանման և միջմշակութային կապերի ամրապնդման ցանկություն, որն առավել բնորոշ է լիբերալ ժողովրդավարական հասարակություններին:

Բազմամշակութայնության էության բացահայտման համար Դ. Այվիսոնն առաջարկում է երեք մոտեցում (Ivison, 2016, էջ 3–4), դրանք են՝

- պաշտպանական կամ համայնքային բազմամշակութայնություն, որի հիմնական գաղափարը մշակութային համայնքների ինքնության պահպանումն է: Ըստ տվյալ սկզբունքի՝ անհատներին պաշտպանելու համար պետք է պահպանել խումբը, իսկ դա նշանակում է պաշտպանել մշակույթը: Մշակութային խմբերի ինքնակառավարման լեգիտիմությունը պատկանում է համայնքային իշխանությանը, որը պետք է իրականացնի մշակութային խմբերի առանձնահատկությունները պահպանմանը միտված քաղաքականություն,
- լիբերալ բազմամշակութայնություն. ըստ որի մշակութային խմբերի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները քննարկվում են

մարդու իրավունքների պաշտպանության, հավասարության, ազատության, հանդուրժողականության սկզբունքների համատեքստում: Չնայած այս մոտեցումը ևս նպաստում է պետության ներսում փոքրամասնություն կազմող մշակութային խմբերի պահպանմանը, բայց այդ մոտեցման հիմնական նպատակը միջմշակութային հաղորդակցությունը չէ: Մշակութային առանձնահատկությունների պահպանումը դիտվում է որպես մարդու իրավունքների պաշտպանության, ազատության հիմնարար սկզբունքներին նպաստող գործառույթ: Լիբերալ բազմամշակութայնությունը նպատակաուղղված է վերափոխելու սոցիալ-քաղաքական իրողությունները և հատկապես դրա մշակութային չափումները: Այն ձգտում է փոխակերպել գերիշխող մշակութային մեծամասնության վերաբերմունքը փոքրամասնություն կազմող մշակութային խմբերի նկատմամբ,

- կայսերական (իմպերիալ) բազմամշակութայնություն, որը հիմնված է հիերարխիկ կարգի վրա, այսինքն՝ մշակութային փոքրամասնություններն ամբողջությամբ ենթարկվում են մշակութային մեծամասնությանը: Կայսերական բազմամշակութայնությունը հակասում է լիբերալ բազմամշակութայնության մի շարք դրույթների, և այս պարագայում մշակութային խմբերի իրավունքները սահմանափակվում են:

Մինչ «մուլտիկուլտուրալիզմ» եզրույթի ի հայտ գալը, գիտական գրականությունում քննարկվում էր նաև «պոլիկուլտուրալիզմ» եզրույթը, որը նույնպես թարգմանվում է որպես բազմամշակութայնություն, բայց ի տարբերություն մուլտիկուլտուրալիզմից, որոշակիորեն այլ իմաստ է կրում: Պոլիկուլտուրալիզմը մարդկանց որոշակի խմբի ինքնության և մշակույթի պահպանումն է, ինչպես նաև նրանց ինտեգրումը բազմազգ հասարակությունում, ինչը կարող է ապահովել տարբեր ազգությունների միջև հանդուրժողական հարաբերությունների ձևավորմանը և ազգամիջյան հաղորդակցման մշակույթի ստեղծմանը (Левикова, 2014, էջ 37): Կարևոր է նշել, որ պոլիկուլտուրալիզմը որոշակիորեն տարբերվում է մուլտիկուլտուրալիզմից՝ ընդունելով, որ մշակույթները միախառնված ու դինամիկ են և փոխազդում են միմյանց վրա: Մուլտիկուլտուրալիզմը մշակույթներին վերաբերում է որպես ստատիկ կամ շարժի, գործողության, փոփոխության պակաս ունեցող սուբյեկտների և ընդգծում նրանց տարբերությունները, իսկ պոլիկուլտուրալիզմը նրանց պատկերում է շարժի, գործողությունների, փոփոխությունների մեջ և կարևորում է նրանց միջև առկա կապերը (Haslam, 2017):

Բազմամշակութայնության քաղաքականության համատեքստում կարելի է քննարկել նաև ասիմիլյացիոն քաղաքականությունը, որն աստիճանական գործընթաց է, որով ազգային փոքրամասնություններն ընդունում են մեծամասնություն կազմող ազգի, հասարակության վարքագծային նորմերը և աստիճանաբար ձուլվում են այդ մեծամասնությանը: Բազմամշակութայնության քաղաքականությունը կարող է համարվել նաև որպես ասիմիլյացիայի և անջատողականության միջև փոխզիջումային քաղաքականության տարբերակ (Heins, 2016, էջ 69): Բազմամշակութայնության քաղաքականության

նպատակն է վերարժևորելով ասիմիլյացիոն քաղաքականությունը փրկել պետությանը «վերահաս կործանումից»:

Կարելի է քննարկել նաև 20-րդ դարի սկզբից ԱՄՆ-ում գործող «հալման կաթսայի» (melting pot)՝ էթնիկական զարգացման մոդելը, որի համաձայն, ամերիկյան ինքնության ձևավորումը պետք է ընթանար այնտեղ բնակվող բոլոր ժողովուրդների միաձուլմամբ, ինչը ենթադրում էր ոչ միայն կենսաբանական, այլև մշակութային միաձուլում (United States Bureau of the Census): Այդօրինակ քաղաքականությունը միտված էր ազգամիջյան հակասությունների հաղթահարմանը:

Հաշվի առնելով ԵՄ-ում ազգայնական միտումների աճը, ամերիկյան «հալման կաթսայի» քաղաքականության իրականացման հնարավորություններն իրատեսական չեն, քանի որ այստեղ առավել շատ սկսում է տիրապետող դառնալ «ներսում, բայց ոչ միասին» թեզը: Էթնիկական անկլավներում ապրող բնակչությունը մեծամասամբ պահպանում է իր լեզուն, մշակույթը և ազգային այլ առանձնահատկությունները, որով էլ թույլ չի տալիս եվրոպական երկրներին իրականացնել «հալման կաթսայի» քաղաքականությունը: ԵՄ-ի անդամ-պետություններում բնակվող ազգային փոքրամասնությունները, չձուլվելով հիմնական բնակչությանը, մշակութային ինքնության և ազգամիջյան այլ խնդիրներով պայմանավորված կարող են լուրջ խնդիրներ առաջացնել: Այդ հարաբերությունների սրումն էլ կարող է հանգեցնել ազգային-անջատողական շարժումների առաջացմանն ու ակտիվացմանը:

Բազմամշակութայնության էությունն ավելի լավ պատկերացնելու համար կարելի է քննարկել նաև «սեգրեգացիա» եզրույթը, չնայած նրան, որ սեգրեգացիոն դրսևորումներ ներկայումս հազվադեպ են հանդիպում: Ըստ Քեմբրիջի բառարանի՝ սեգրեգացիան (*լատ.՝ segregation- առանձնացում*) համարվում է մարդկանց որևէ խմբի հարկադրաբար կամ կամավոր մեկուսացում, առանձնացում՝ պայմանավորված նրանց ռասայական, կրոնական, ազգային առանձնահատկություններով:

Պետության միասնականության պահպանման համար, որոշ եվրոպական պետություններ նախկինում կիրառել են սեգրեգացիայի քաղաքականությունը: Օրինակ՝ Գերմանիան 1871 թ. մինչև 20-րդ դարի կեսերը պետության մոնոէթնիկության պահպանման համար կիրառում էր այդ քաղաքականությունը, ըստ որի արգելվում էր օտարերկրացիների մուտքը պետություն, իսկ քաղաքացիության իրավունք ունեին միայն Գերմանիայի քաղաքացիություն ունեցող, ազգությամբ գերմանացի ծնողներից ծնվածները:

1880-ական թվականներին արդյունաբերական աշխատանքների կատարման նպատակով Լեհաստանից Գերմանիա ժամանեցին մի խումբ ներգաղթյալներ, որոնք չէին կարողանում քաղաքացիություն ձեռք բերել և ստացան «հյուր աշխատողներ» («գաստարբայտեր») կարգավիճակը: Էթնիկ սլավոնները և հրեաները, որոնք երկար ժամանակ Գերմանիայում գյուղատնտեսությամբ էին զբաղվում, նույնպես չէին կարողանում քաղաքացիություն ձեռք բերել, որի հետևանքով նրանց իրավունքները սահմանափակվում էին և արդյունքում նրանք հայտնվում էին մարգինալ կարգավիճակում:

Եվրոպական միությունում իրականացվող բազմամշակութայնության քաղաքականությունը և դրա դերը անջատողականության գապման գործում

2010 թ. ԵՄ-ի անդամ-պետությունների բարձրաստիճան պաշտոնյաները սկսեցին խոսել ԵՄ-ում բազմամշակութայնության քաղաքականության ձախողման մասին: Մասնավորապես՝ Ա. Մերկելը հայտարարել է, որ բազմամշակութայնության քաղաքականությունն ամբողջովին ձախողվել է: Հետագայում այդ մոտեցումը կիսեց Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Քեմերոնը, որը բազմամշակութայնություն վերաբերյալ նշել է. «Մենք պետք է նվազեցնենք հանդուրժողականությունը և կոշտ լիբերալիզմի քաղաքականություն վարենք» (Левикова, 2014, էջ 39-40): Բազմամշակութայնության վերաբերյալ ԵՄ-ի բարձրաստիճան քաղաքական գործիչների հնչեցրած քաղաքական գնահատականները հիմք են տալիս ենթադրելու, որ գոյություն ունեցող «կողք կողքի և երջանիկ ապրելու» գաղափարախոսությունը վերանայման կարիք ունի և էթնոազգային երևույթները և գործընթացները բավականին բարդացել են ԵՄ-ում:

Ներկայումս ԵՄ-ում ընթանում են մի կողմից՝ ինտեգրային գործընթացների և միջազգային տնտեսական հարաբերությունների ակտիվացման միտումներ, պետությունների փոխկապակցվածության բարձրացում, իսկ մյուս կողմից՝ առանձին էթնիկական խմբերի ազգային ինքնագիտակցության բարձրացում, ազգերի մշակութային տարբերակումների ամրապնդում: Մեր կարծիքով դրանք առաջին հերթին կապված են սոցիալ-տնտեսական իրողությունների հետ, քանի որ շատ դեպքերում ազգայնականները չեն ցանկանում իրենց տնտեսական ձեռքբերումները կիսել այլ էթնիկական համայնքների հետ: Դրա դեմ պայքարելու լավագույն միջոցը ազգայնական տրամադրությունների բարձրացմամբ որոշակի պաշտպանվածություն ձեռք բերելն է:

Ազգային ինքնությունը դիտարկվում է բազմամշակութայնության՝ «միասնություն բազմազանության մեջ» և էթնոազգայնականության՝ «խմբային արժեքների հակադրության» մոտեցումների միջև արտահայտված հակամարտությամբ, որոնք կարող են սահմանել էթնիկ խմբերի մշակութային ինքնության սոցիալական գործողությունը (Сударкина, 2012, էջ 38):

Կանադան բազմամշակութայնության քաղաքականությունն ամենահաջող կիրառած պետություններից մեկն է: Եթե ԵՄ-ում բազմամշակութայնության քաղաքականությունը հիմնականում դիտարկվում է ներգաղթյալների ինտեգրման հիմնախնդիրների տեսանկյունից, ապա Կանադայում այն անջատողականության դեմ պայքարի լավագույն եղանակներից մեկը կարելի է համարել:

Բազմամշակութայնության քաղաքականությունը հետագայում հաջող կերպով կիրառվեց նաև Ավստրալիայում, Նոր Զելանդիայում և այն համարվում որպես էթնոմշակութային խմբերին ցուցաբերվող բազմակողմանի աջակցման քաղաքականություն: Այն իրականացվում է ինչպես ազգային

փոքրամասնությունների, այնպես էլ՝ ներգաղթյալների և բնիկ ժողովրդի շրջանում: Իսկ օրինակ՝ Լատինական Ամերիկայի պետություններում բազմամշակութայնության քաղաքականությունն առավել հաճախ վերաբերում է բնիկ ժողովուրդների պահպանմանը և աջակցմանը (Вережевская, 2018, էջ 33–34):

ԵՄ-ում բազմամշակութայնության քաղաքականության յուրահատկությունն ավելի շատ վերաբերում է այլ մշակութային ինքնություն ունեցող մարդկանց ներգաղթին և նրանց ինտեգրմանը, իսկ այնտեղ բնակվող ազգային փոքրամասնությունների (ինչպիսիք են ֆլամանդացիները, վալոնները՝ Բելգիայում, բասկերը և կատալոնացիները՝ Իսպանիայում, և այլն) խնդիրները հաճախ չի քննարկվում բազմամշակութայնության համատեքստում:

Առանձնացվում է բազմամշակութայնության քաղաքականության իրականացման երեք տարբերակ, որոնցից յուրաքանչյուրի օբյեկտը տարբեր խմբեր են համարվում: Ըստ այդ մոտեցման տարբերակվում են բնիկ ժողովուրդների, ազգային ինքնավարությունների (ենթամիավորումների) և ներգաղթյալների նկատմամբ կատարվող քաղաքականության առանձնահատկությունները (Iverson, 2010, էջ 100–102): Բազմամշակութայնության քաղաքականության եվրոպական մոդելն առավել շատ հիմնված է ներգաղթյալների ինտեգրման վրա, և ազգային փոքրամասնությունների մշակութային հիմնախնդիրներն այդքան էլ մեծ ուշադրություն չեն արժանանում: Քննարկելով ազգային ինքնավարությունների հիմնախնդիրների դիտարկումը բազմամշակութայնության քաղաքականության համատեքստում, Ու. Կիմիկան առաջարկում է էթնիկական խմբերի համակեցության հետևյալ տարրերը.

- դաշնային տարածքային կազմակերպման սկզբունքով ինքնավարության տրամադրում,
- պետական լեզվի պաշտոնական կարգավիճակի տրամադրում,
- սահմանադրական դատարանում կամ կենտրոնական կառավարման մարմիններում ներկայացվածության ապահովում,
- դպրոցներում, բուհերում, զանգվածային լրատվամիջոցներում ազգային փոքրամասնությունների լեզուների գործածում և պահպանման ֆինանսավորում,
- միջազգային գործունեություն վարելու որոշակի հնարավորության ընձեռում (օրինակ՝ առանձին պայմանագրերի կնքում այլ պետությունների հետ) (Kymlicka, 2010, էջ 101):

Մեր կարծիքով ԵՄ-ում բազմամշակութայնության քաղաքականության այս մոտեցումների ոչ ամբողջական կիրառումն էլ հանգեցնում է անջատողական ձգտումների աճին: Մասնավորապես՝ Կատալոնիայի անջատողականության դեպքում, եթե Իսպանիան հնարավորություն ընձեռի Կատալոնիային ինքնուրույն տնօրինելու իր սեփական եկամուտները, ապա այդ դեպքում Իսպանիայի իրականացրած բազմամշակութայնության քաղաքականությունը կհամարվեր հաջողված:

Ներգաղթյալների նկատմամբ իրականացվող բազմամշակութայնության

քաղաքականության անարդյունավետ իրականացումը կամ ձախողումն ամրապնդում է տվյալ պետությունում բնակվող այլ ազգային փոքրամասնությունների ինստիտուցիոնալ ճանաչմանը (Kymlicka, 2010, էջ 105): Օրինակ՝ Ֆրանսիան, նվազեցնելով ներգաղթյալների կրթության ֆինանսավորումը, ամրապնդում է այլ ազգային փոքրամասնությունների լեզվական իրավունքները կամ ԵՄ-ի նախկին անդամ Մեծ Բրիտանիան անարդյունավետ իրականացնելով բազմամշակութայնության քաղաքականությունը նոր ինքնակառավարման լիազորություններ տվեց Շոտլանդիային և Ուելսին: Այսինքն, եթե ընդունենք, որ ԵՄ-ում բազմամշակութայնությունը ձախողվել է, ապա անջատողական ձգտումներ ունեցող ազգային փոքրամասնություններն ազգային ինքնագիտակցության բարձրացման պայմաններում կարող են լուրջ խնդիրներ առաջացնել:

Անջատողականությունը, դա այն մարդկանց արձագանքն է, ովքեր արդեն առանձնացվել են հիմնական հասարակությունից, և նրանք առաջին հերթին սպառնում են ունիտար պետություններին և կարող են հանգեցնել դրանց քայքայմանը: Առանձին էթնիկական խմբերը, որոնք չեն ձուլվում ընդհանուր հասարակությանը, կարող են մեծացնել տարբեր մշակույթներ կրող քաղաքացիների միջև եղած օտարումը, իսկ Վ. Հեյնսը, կողմ արտահայտվելով այդ գաղափարին, գտնում էր, որ դա կարող է վերածվել նաև միջմշակութային հակամարտության (Heins, 2016, էջ 5-7):

Բազմամշակութայնության հիմքում առաջին հերթին ընկած է պետության ներսում տարբեր մշակութային համայնքների խաղաղ գոյակցության հարցը, ուստի կարելի է քննարկել նաև բազմամշակութայնության՝ որպես զսպող գործիքի ազդեցությունը անջատողական շարժումների դեմ պայքարում: Որպես անջատողական դրսևորումների զսպման երկարաժամկետ ռազմավարություն կարող է դիտարկվել անջատման ձգտող համայնքներում նույն էթնիկական կազմ ունեցող բնակչության խտության նոսրացման քաղաքականությունը, որը կարող է դրսևորվել անջատողական շրջաններում այլազգիներին կամ ներգաղթյալներին վերաբնակեցնելով: Բազմամշակութայնության քաղաքականության իրականացման պայմաններում վերաբնակեցված անձանց շրջանում մշակութային ձուլում տեղի կունենա, ինչն էլ կբերի աշխարհընկալումների փոփոխության:

2014 թ. տեղի ունեցավ շոտլանդական անկախության հանրաքվեն, որի ժամանակ բնակչության մեծամասնությունը դեմ եղավ անկախությանը և կողմ արտահայտվեց «Միասին ավելի լավ է» կարգախոսին: Եվ հարց է առաջանում՝ որքանով է բազմամշակութայնությունն ազդել բնակչության մեծ մասի՝ Մեծ Բրիտանիայի կազմում մնալու ցանկության վրա: Շոտլանդիայի պաշտոնական վիճակագրական ծառայության տվյալները ցույց են տալիս, որ Շոտլանդիայի ութ շրջաններից չորսում, որտեղ համեմատաբար ավելի նոսր են բնակեցված ազգությամբ շոտլանդացիները և կան շատ այլազգիներ, էականորեն ավելի շատ են եղել Մեծ Բրիտանիայի կազմում մնալու կողմնակիցների քվեները (Scotland's Census):

Կարելի է քննարկել նաև 2016 թ. «Brexit»-ի հանրաքվեն: Մեծ Բրիտա-

նիայի բնակչության մեծ մասը կողմ արտահայտվեց ԵՄ-ի կազմից դուրս գալուն: Ուսումնասիրելով պաշտոնական քվեարկության արդյունքները՝ պարզեցինք, որ այն 10 շրջանները, որոնցում գրանցված արդյունքները (բնակչության 70-80 % կողմ են արտահայտվել ԵՄ կազմում մնալու օգտին) էականորեն տարբերվում են ընդհանուր գրանցված արդյունքներից (The electoral Commission, EU referendum results): Բնակչության մեծամասնությունը կազմում են այն քաղաքացիները, որոնք չեն ծնվել Մեծ Բրիտանիայում, այլ տարբեր ժամանակներում գաղթել են այնտեղ (քվեարկությանը մասնակցած ընտրողների 51,9 % կողմ են քվեարկել ԵՄ-ի կազմից դուրս գալուն):

Մեր կարծիքով, ԵՄ-ում բազմամշակութային մոդելի ճգնաժամը հիմնականում պայմանավորված է մի շարք գործոններով: Դրանք են.

- Եվրոպական ընդհանուր ինքնության գաղափարը դեռևս խորթ է մնում ԵՄ-ի բնակչության մի մասի համար: Հենց դա է վկայում այն, որ այնտեղ գնալով ակտիվանում են անջատողական դրսևորումները, ինչպես միության անդամակցությունից հրաժարվելու դրսևորմամբ, այնպես էլ անդամ պետությունների կազմում առանձին էթնիկական խմբերի անջատողական ձգտումներով,
- ԵՄ-ն ի սկզբանե բազմամշակութայնության քաղաքականության հիմքում դրեց միայն ներգաղթյալների հիմնախնդիրները, և դա չօգտագործվեց որպես անջատողական դրսևորումների զսպան գործիք,
- ԵՄ-ում ներգաղթյալների հոսքի ավելացմամբ հյուրընկալ պետությունների կառավարությունները սկսեցին մեծացնել ինտեգրային ծրագրերի ֆինանսավորումը՝ կրճատելով մի շարք սոցիալական ապահովության ծրագրեր,
- իսլամադավան ներգաղթյալների կողմից կազմակերպված ահաբեկչական գործողությունները ևս նպաստեցին, որ եվրոպական հանրության մի մասը բացասաբար տրամադրվի այլ էթնիկական, կրոնական, մշակութային հանրույթների նկատմամբ:

Ամփոփելով նշենք, որ ի տարբերություն ներգաղթյալների նկատմամբ իրականացվող բազմամշակութայնության քաղաքականությունից, առանձին ազգային ինքնավարությունների կամ ենթամիավորումների նկատմամբ իրականացվող բազմամշակութայնության քաղաքականությունը միտված է տվյալ պետության տարածքային ամբողջականության պահպանմանը: Բազմամշակութայնության քաղաքականության իրականացման պայմաններում ազգային ինքնավարությունների մոտ ոչ թե ամբողջությամբ վերանում է ծայրահեղական ձգտումները և անջատվելու ցանկությունը, այլ ուղղակի կարող է կանխվել դրա ակտիվացումը: Եվ եթե ԵՄ-ը չվերախմաստավորի այդ քաղաքականությունը, ապա այնտեղ տեղի կունենա քաղաքացիական համերաշխության թուլացում, ինչպես նաև էթնիկական, մշակութային հողի վրա կարող են նկատվել սոցիալական բախումների աճման միտումներ, ինչը ԵՄ-ին՝ արտաքին մարտահրավերների և սպառնալիքների առումով կդարձնի ավելի խոցելի:

Եզրակացություն

ԵՄ-ի բազմամշակութայնության քաղաքականության ճգնաժամով պայմանավորված, էականորեն ակտիվացան անդամ-պետությունների առանձին երկրամասերի անջատողական ձգտումները: Ի տարբերություն բազմամշակութայնության կանադական օրինակից (մոդելից), որն ուղղված էր Քվեբեկում բնակվող ֆրանսիախոս ազգային փոքրամասնության անջատողական միտումների կանխմանը, բազմամշակութայնության քաղաքականության եվրոպական մոդելն առավել շատ հիմնված էր ներգաղթյալների ինտեգրման հիմնախնդիրների վրա, և ազգային փոքրամասնությունների մշակութային առանձնահատկություններն համակարգված չեն դիտարկում: Այդ պայմաններում սրվում են ազգայնական տրամադրությունները, որը նպաստում է ԵՄ-ի միասնականության խաթարմանը: Իսկ ինչ վերաբերում է ներգաղթյալներին, ապա դեպքային ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առանձին երկրամասերի անջատողական գործընթացներում նրանք առավել շատ կենտրոնամետ դիրքորոշում ունեն:

Օգտագործված գրականության ցանկ

- Веретевская, А. (2018). *Мультикультурализм, которого не было: анализ европейских практик политической интеграции этнокультурных меньшинств*, МГИМО-Университет, М.
- Левикова, С. (2014). *Мультикультурализм как социальная проблема, или чем отличается мультикультурализм от поликультурности* // Известия Волгоградского государственного педагогического университета, М., том 88, номер 3.
- Сударкина, Х. (2012). *Мультикультурализм: глобальные вызовы и локальные ответы*, Вестник Майкопского государственного технологического университета, Майкоп, Выпуск 2.
- Cambridge Dictionary*, Segregation, <https://dictionary.cambridge.org/dictionary/english/segregation> (17.03.2020).
- Dembek, M. (2019). *Multiculturalism – A Tool Against Separatist Movements*. Adam Mickiewicz University in Poznań, https://www.researchgate.net/publication/333402789_Multiculturalism_-_A_Tool_Against_Separatist_Movements (19.02.2020).
- Haslam, N. (2017). *Cultures fuse and connect, so we should embrace polyculturalism*. The conversation <https://theconversation.com/cultures-fuse-and-connect-so-we-should-embrace-polyculturalism-78876> (17.03.2020).
- Heins, V. (2016). *Recognition, Multiculturalism and the Allure of Separatism*. Patrick Hayden and Kate Schick, eds., *Recognition and Global Politics: Critical Encounters between State and World*, Manchester University Press, Manchester. <https://www.oxfordreference.com/view/10.1093/oi/authority.20110810105436897> (09.05.2020).
- Iverson, D. (2016). *The Asghnate Research Companion to Multiculturalism*. Routledge, New

York.

- Kirabaev, N.(2002). *Cultural identity, pluralism and globalization in contemporary philosophical discourse: reports and speeches*. The 5th Int. phil. Symposium, “Dialogue of Civilizations: East – West”, Moscow.
- Kymlicka, W. (2010). *The rise and fall of multiculturalism? New debates on inclusion and accommodation in diverse societies*. International Social Science Journal, Blackwell Publishing Ltd., Oxford.
- Oxford dictionaries*, Multiculturalism, <https://www.oxfordreference.com/view/10.1093/oi/authority.20110810105436897>, (09.05.2020)
- Scotland’s Census*, <https://www.scotlandscensus.gov.uk> (11.07.2020).
- The electoral Commission, Eu referendum results*, <https://www.electoralcommission.org.uk/who-we-are-and-what-we-do/elections-and-referendums/past-elections-and-referendums/eu-referendum/results-and-turnout-eu-referendum> (11.07.2020).
- United States Bureau of the Census. Celebrating our nation’s diversity: a teaching supplement for grades K–12*. U.S. Dept. of Commerce, Economics and Statistics Administration, Bureau of the Census, 1995. <https://files.eric.ed.gov/fulltext/ED385634.pdf> (27.11.2020).

References

- Veretevskaya, A. (2018). *Mul’tikul’turalizm, kotorogo ne bylo: analiz evropeyskikh praktik politicheskoy integratsii etnokul’turnykh men’shinstv* [Multiculturalism, which did not exist. Analysis of the European practice of political integration of ethnocultural minorities], MGIMO–Universitet, M. (In Rus.)
- Levikova, S. (2014). *Mul’tikul’turalizm kak sotsial’naya problema, ili Chem otlichaetsya mul’tikul’turalizm ot polikul’turnosti* [Multiculturalism as a social problem, or how does multiculturalism differ from multiculturalism], *Izvestiya Volgogradskogo gosudarstvennogo pedagogicheskogo universiteta*, M., tom 88, nomer 3. (In Rus.)
- Sudarkina, Kh. (2012). *Mul’tikul’turalizm: global’nye vyzovy i lokal’nye otvety* [Multiculturalism: Global Challenges and Local Responses], *Vestnik Maykopskogo gosudarstvennogo tekhnologicheskogo universiteta*, Maykop, Vypusk 2. (In Rus.)
- Cambridge Dictionary*, Segregation, <https://dictionary.cambridge.org/dictionary/english/segregation> (17.03.2020) (In Eng.)
- Dembek, M. (2019). *Multiculturalism – A Tool Against Separatist Movements*. Adam Mickiewicz University in Poznań https://www.researchgate.net/publication/333402789_Multiculturalism_-_A_Tool_Against_Separatist_Movements (19.02.2020). (In Eng.)
- Haslam, N. (2017). *Cultures fuse and connect, so we should embrace polyculturalism*. The conversation. <https://theconversation.com/cultures-fuse-and-connect-so-we-should-embrace-polyculturalism-78876> (17.03.2020). (In Eng.)
- Heins, V. (2016). *Recognition, Multiculturalism and the Allure of Separatism*, Patrick Hayden and Kate Schick, eds., *Recognition and Global Politics: Critical Encounters between State and World*, Manchester University Press, Manchester. <https://www>.

- oxfordreference.com/view/10.1093/oi/authority.20110810105436897 (09.05.2020). (In Eng.)
- Iverson, D. (2016). *The Asghnate Research Companion to Multiculturalism*. Routledge, New York. (In Eng.)
- Kirabaev, N.(2002). *Cultural identity, pluralism and globalization in contemporary philosophical discourse: reports and speeches*. The 5th Int. phil. Symposium, “Dialogue of Civilizations: East – West”, Moscow. (In Eng.)
- Kymlicka, W. (2010). *The rise and fall of multiculturalism? New debates on inclusion and accommodation in diverse societies*. International Social Science Journal, Blackwell Publishing Ltd., Oxford. (In Eng.)
- Oxford dictionaries*, Multiculturalism, <https://www.oxfordreference.com/view/10.1093/oi/authority.20110810105436897>, (09.05.2020) (In Eng.)
- Scotland’s Census*, <https://www.scotlandscensus.gov.uk> (11.07.2020) (In Eng.)
- The electoral Commission, EU referendum results, <https://www.electoralcommission.org.uk/who-we-are-and-what-we-do/elections-and-referendums/past-elections-and-referendums/eu-referendum/results-and-turnout-eu-referendum> (11.07.2020) (In Eng.)
- United States Bureau of the Census*. Celebrating our nation’s diversity: a teaching supplement for grades K–12. U.S. Dept. of Commerce, Economics and Statistics Administration, Bureau of the Census, 1995. <https://files.eric.ed.gov/fulltext/ED385634.pdf> (27.11.2020) (In Eng.)

РАФИК АВЕТИСЯН

Старший научный аналитик центра региональных стратегических исследований Национального оборонно-исследовательского университета Министерства обороны Республики Армения, аспирант кафедры политического управления и публичной политики Академии государственного управления Республики Армения
Эл. адрес: ravetisyan94@gmail.com

ПРОБЛЕМЫ МУЛЬТИКУЛЬТУРНОЙ ПОЛИТИКИ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА В КОНТЕКСТЕ ДЕЯТЕЛЬНОСТИ СЕПАРАТИСТСКИХ ДВИЖЕНИЙ

Учитывая рост националистических тенденций в ЕС, трансформацию европейских наций–государств, увеличивающийся приток иммигрантов, социально–экономические проблемы, возникла необходимость выявить влияние мультикультурной политики ЕС на группы с различными культурными нормами и обычаями. Многоуровневость темы предоставит возможность сформировать более полное представление о преодолении сепаратистских кризисов. В статье была рассмотрена связь между сепаратистскими требованиями субъектов, представителей различных культурных норм и обычаев и мультикультурной политикой, проводимой государствами в качестве стратегического инструмента для эквивалентного ответа на сепаратистские вызовы,

восстановления гражданской солидарности и предотвращения роста социальных столкновений.

Ключевые слова: сепаратистские движения, мультикультурализм, Европейский Союз, автономия, этнокультурные группы, иммигранты, культурное разнообразие.

RAFIK AVETISYAN

*Senior Research Fellow at the Center for Strategic Regional Analyses, National Defense Research University, Ministry of Defense of the Republic of Armenia, Ph.D. Student at the Political Governance and Public Policy at the Public Administration Academy of the Republic of Armenia
Email: ravetisyan94@gmail.com*

MULTICULTURAL POLICY ISSUES IN THE CONTEXT OF ACTIVITY OF THE EUROPEAN UNION SEPARATIVE MOVEMENTS

Considering the nationalist tendencies in the EU, the transformation of European nation-states, the increasing influx of immigrants, the socio-economic issues, it is necessary to identify the impact of the EU's multicultural policies on groups with different cultural norms and customs. The multilayered nature of the topic will provide a more comprehensive view of the issues of overcoming separatist crises. The article identifies the link between separatist demands of subdivisions with different cultural norms, and multicultural policies pursued by the state as a strategic tool for responding adequately to separatist challenges, restoring civic solidarity, and preventing the growth of social conflicts.

Key words: separatist movements, multiculturalism, European Union, autonomy, ethnocultural groups, immigrants, cultural diversity.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2021թ. մարտի 17-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2021թ. ապրիլի 2-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2021թ. մայիսի 3-ին:

Երանուհի Մանուկյան

Երևանի պետական և Եվրասիա միջազգային համալսարանների դասախոս,

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Էլ. հասցե՝ e.manukyan@ysu.am

DOI: 10.53614/18294952-2021.1-49

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԻ ՍՈՑԻԱԼ- ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածը նվիրված է կոռուպցիայի հիմնահարցի համա-
կողմանի վերլուծությանը, ինչպես նաև վերջինիս կանխար-
գելման հնարավոր ուղիների ուրվագծմանը: Տվյալ վերլուծու-
թյան համար հիմք են հանդիսացել հայտնի հետազոտողների
մոտեցումները, որոնք հիմնվում են միջազգային փորձի, մաս-
նավորապես՝ Սինգապուրի վրա: Կոռուպցիայի հիմնահարցը
վերլուծության է ենթարկվել լայն ու նեղ իմաստներով: Ամե-
նալայն իմաստով կոռուպցիան հասարակայնորեն անցանկա-
լի երևույթներից է, որը առնչվում է նաև մարդկային վարքի
ու հարաբերությունների կարգավորման ու սոցիալական վե-
րահսկողության հնարավորությունների հետ: Կոռուպցիան նեղ
իմաստով մի երևույթ է, որի արդյունքում ղեկավար անձը կամ
չարաշահում է իր պաշտոնական դիրքը, կամ էլ դեմ է գնում
իր պարտականությունների կատարմանը՝ լրացուցիչ ֆինանս-
ներ ձեռք բերելու նպատակով, այսինքն՝ կարծես տեղի է ու-
նենում պետության սեփականաշնորհում անհատների կողմից:
Հոդվածում առանձնացվել են այն ուղիները, որոնք հնարա-
վորություն են տալիս ցույց տալու, թե մշակված օրենսդրու-
թյան առկայության, հասարակության բարոյական դաստիա-
րակման, հաշվետվողական պետական ծառայողների շնորհիվ
ինչպես կարելի է հասնել կոռուպցիայի շեմի իջեցմանը, կան-
խարգելմանը կամ իսպառ վերացմանը:

Հիմնաբառեր. կոռուպցիա, հակակոռուպցիա, հասարա-
կություն, այլընտրանքային, սոցիալական, բարոյական, քա-
ղաքական:

Ներածություն

«Կոռուպցիա» հասկացությունը բարդ, բազմաբովանդակ, բազմաշերտ երևույթ է, որի ձևակերպման հարցում միասնական մոտեցումները բացակայում են: Մասնագիտական գրականության մեջ տվյալ հիմնախնդիրը վերլուծվում է փիլիսոփայության, սոցիոլոգիական, տնտեսագիտական, իրավագիտության, բարոյագիտության և այլ աշխարհայացքային մոտեցումների համատեքստերում: Արդի քաղաքակրթության զարգացման ընդհանուր օրինաչափությունների շրջանակներում կատարվում են այնպիսի փոխակերպումներ, որոնք սոցիալական համակարգը դարձնում են առավել այլընտրանքային, հակասական և ապակառուցողական:

Մեթոդը և տեսական հիմքը

Հոդվածի համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել ինչպես որակական, այնպես էլ քանակական մեթոդները, օրինակ, համեմատական մեթոդի օգնությամբ զուգահեռներ է անցկացվել Մինգապուրի և Հայաստանի միջև՝ հիմք ընդունելով զարգացող երկրների փորձը, մինևույն ժամանակ հաշվի առնելով ազգային-վարչաքաղաքական, ինչպես նաև պատմամշակութային առանձնահատկությունները: Հետազոտման հիմք են հանդիսացել նաև համանմանության, արտարկման, վերլուծության և համադրության մեթոդները:

Կոռուպցիայի հիմնախնդրի մասին մասնագիտական գրականության մեջ եղած առկա մոտեցումները.

Արդի քաղաքակրթական զարգացումները վկայում են, որ գրեթե բոլոր հասարակարգերում դիտարկվել են այնպիսի հիմնախնդիրներ, որոնք սոցիալական միջավայրը կազմալուծում են խոչընդոտելով դրանց արդյունավետ գործառնությանը: Հասարակական համակարգերը ներքնապես ենթարկվում են զարգացման որոշակի օրինաչափությունների, ուստի բոլոր ժամանակներում արդիական է ու բարոյական որոշակի կանոններին հետևելը: Մինչդեռ համահասարակական զարգացումները ցույց են տալիս ոչ միայն արդի քաղաքակրթության ստվերային կողմերը, այլև ենթադրում են հասարակության բարոյական կանխավարկածից շեղում, ինչի տրամաբանական հետևանքները սոցիալական համախտանիշներն են: Սոցիալական համակարգը կազմալուծող ախտանիշներից մեկը կոռուպցիան է: Այն նոր երևույթ չէ, սակայն արտացոլում է բազմազան ու բազմաբնույթ հարաբերությունների ընդհանրական ու խորքային կողմերը: Կոռուպցիան որոշակի գիտակցություն է ու հարաբերություն, գործողություն և վարք և վերջապես՝ սոցիալական կառույցների համակարգ և այլն:

Հռոմեական իրավունքի մեջ կոռուպցիա հասկացությամբ բնորոշվում էր մի քանի անձանց գործունեությունը, որն ուղղված էր դատական գործընթացի կամ հասարակական կառավարման բնականոն ընթացքի խանգար-

մանր: «Կոռուպցիա» հասկացության ժամանակակից սահմանումներից առավել համառոտներից մեկը պատկանում է Ջ.Սենտորիային, ով այն բնորոշել է որպես սեփական շահի համար հասարակական իշխանության չարաշահում (Корчагин, Иванов, 2001, էջ 41):

Հետազոտողների հիմնական մասը կոռուպցիայի սահմանումը հանգեցնում են կաշառակերությանն ու պաշտոնական դիրքի չարաշահմանը: Նման մոտեցում են ցուցաբերում միջազգային կազմակերպությունները: Մասնավորապես, 1979 թ. դեկտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված 34/169 որոշման մեջ իրավակարգը պահպանող պաշտոնատար անձի վարքի կողքում կոռուպցիան սահմանված է որպես «անհատական կամ խմբային շահի համար պաշտոնական դիրքի չարաշահում, ինչպես նաև պետական ծառայողների կողմից պաշտոնական դիրքով պայմանավորված անօրինական ճանապարհով շահի ստացում» (ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա): Այն, ինչը չի թաքցվում հասարակությունից և ինչը հասարակության ընկալմամբ թույլատրելի է համարվում, կոռուպցիայի հետ որևէ առնչություն չունի: Կոռուպցիայի սահմանումն իրավունքի տեսանկյունից ունի մի շարք առավելություններ, թեև գուրկ չէ նաև թերություններից: Մասնավորապես, Ի. Մենին ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ կոռուպցիոն վարքի սոցիոլոգիական սահմանման գործում կարող է առաջնահերթ դառնալ քաղաքացիների և էլիտայի վերաբերմունքը տվյալ երևույթի նկատմամբ (Menny, 1999, էջ 12): Հարկ է նշել, որ առայժմ հետազոտողների մեծամասնության կարծիքով, որպես սոցիալական երևույթ, կոռուպցիայի բոլոր պահանջներին համապատասխանող ընդունելի սահմանում գոյություն չունի: Իրավագիտության մեջ կոռուպցիան մեկնաբանվում է որպես սոցիալական երևույթ, որը դրսևորվում է պետական և մունիցիպալ ծառայողների կամ այլ անձանց կողմից, ովքեր լիազորված են կատարելու պետական գործառնություններ, ծառայողական դիրքի, կարգավիճակի կամ զբաղեցրած դիրքով պայմանավորված հեղինակության կանխատեսված օգտագործմամբ շահադիտական նպատակներով անձնական կամ և խմբային շահի համար: Իհարկե,, այս սահմանումից դուրս է մնում կոռուպցիան ոչ պետական կազմակերպություններում, այն կիրառելի է պետական կոռուպցիան սահմանելիս (Максимов, 2008, էջ 21-23): Առավել ամբողջական է տրված կոռուպցիա հասկացությունը ՄԱԿ-ի համապատասխան կոնվենցիայում, որտեղ նշված է. «Կազմակերպության կառավարմանը մասնակցող պաշտոնյայի կողմից իր դիրքի չարաշահում այնպիսի անձնական կամ կորպորատիվ շահ ստանալու համար, որը գտնվում է կազմակերպության գործունեության նպատակների շրջանակներից դուրս և նախատեսված չէ կազմակերպության գործունեության կանոնակարգով» (ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա):

Կոռուպցիային բնորոշ հատկանիշը պաշտոնատար անձի գործողությունների և նրա գործատուի շահերի կամ ընտրովի պաշտոնյայի գործողությունների և հասարակության շահերի միջև կոնֆլիկտն է: Կոռուպցիան նոր երևույթ չէ, այն գոյություն է ունեցել դարերով և պատմության տարբեր ժամանակահատվածներում ընդունել է տարբեր ձևեր: «Կոռուպցիա» եզրույ-

թը ծագել է լատիներեն corruption բառից, որը նշանակում է «բարոյական անկում, անբարո վարք, փտածություն կամ նեխածություն»(«Կոռուպցիան և մարդու իրավունքները... 2009, էջ 21):

Հասարակության տարբեր ոլորտներում կոռուպցիան ունի դրսևորման յուրահատկություններ: Օրինակ, Ռոբերտ Կլինգաարդը տնտեսության մեջ տվել է կոռուպցիայի հետևյալ բանաձևը՝ «Կոռուպցիա=Մենաշնորհ+Հայեցողություն–Հաշվետվողականություն» (Klingaard, 2001, էջ 32): Համապատասխան ինստիտուտների և արժեքների բացակայությունը նպաստում է կոռուպցիայի խորացմանը: Մյուս կողմից, նոր ինստիտուտների և արժեքների ստեղծումը և զարգացումն իր հետ բերում է կոռուպցիոն նոր հնարավորություններ:

Կոռուպցիան խոչընդոտում է ներքին և արտաքին ներդրումները, սահմանափակում է առևտուրը, աղավաղում է պետական ծախսերի չափերը և կառուցվածքը, հանգեցնում է ստվերային տնտեսության աճին, խորացնում է սոցիալական անհավասարությունը և այլն: Այստեղ հարկ է նշել, որ պետական ծառայողների մի մասը իրենց մասնագիտական գործունեությունն անցկացնում են արդար և բարեխղճորեն, իսկ մյուս մասը չարաշահում է իր պաշտոնական դիրքը և այն օգտագործում սեփական օգուտի համար, ծավալում է ապօրինի գործունեություն նպաստելով կոռուպցիայի ավելացմանը: Նաև կարևոր է նշել, որ մեր օրերում մարդկանց մոտ նկատվում է կոռուպցիայի դեմ պայքարի կարևորության գիտակցումը: Պետական իշխանության մարմիններում կոռուպցիայի խնդիրների վերաբերյալ ուսումնասիրության հարցում կարևոր դեր են խաղում սոցիալական հարցումները: Այս հարցումների շնորհիվ կարողանում ենք առանձնացնել կոռուպցիոն դրսևորումների որակական և քանակական ցուցանիշները: Քանակական ցուցանիշները ցույց են տալիս կենցաղային կոռուպցիայի մակարդակը, պետծառայողների տարեկան եկամուտներում կոռուպցիոն վճարների միջին բաժնետոմսի չափը և այլն :

Որակական ցուցանիշները բնութագրում են պետական իշխանության մարմիններում կոռուպցիայի տարածվածության աստիճանը, կոռուպցիոն դրսևորումների գործոններն ու ձևերը, պետական իշխանության մարմիններում կոռուպցիայի մակարդակը: Այս հարցումները մեզ թույլ են տալիս օբյեկտիվորեն գնահատել պետական ծառայողների վերաբերմունքը պետական իշխանության մարմիններում կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ:

Կոռուպցիայի մեջ կարող է ներգրավվել ցանկացած անձ, ով օժտված է դիսկրեցիոն՝ սեփական հայեցողությամբ իրեն չպատկանող ռեսուրսների բաշխման իշխանությամբ (իրավապահ մարմինների աշխատակից, դասախոս, պատգամավոր, բժիշկ և այլն): Տնտեսագիտական վերլուծության համատեքստում կոռուպցիան դիտարկվում է իբրև տնտեսական աճի և հասարակության զարգացման գլխավոր խոչընդոտ (Долговой, 1997, էջ 501–504):

Կոռուպցիան պետք է հստակ սահմանագատել պաշտոնական դիրքի չարաշահման հետ կապված այլ հանցանքներից՝ յուրացման, վատնման համապատասխան որակյալ տեսակից և այլն, քանի որ կոռուպցիայի պարա-

գայում օգտագործվում է ոչ միայն պաշտոնական դիրքը, այլև դրա վրա հիմնված հեղինակությունը, հնարավորությունները, կապերը:

Կոռուպցիայի հիմնախնդրի իմաստավորումը հայաստանյան իրողությունների համատեքստում:

Կոռուպցիան Հայաստանի համար ևս նոր երևույթ չէ: Այն մեզանում գոյություն է ունեցել դարերով և երկրի պատմության տարբեր ժամանակահատվածներում ընդունել է տարբեր ձևեր: Բազմիցս իրականացված գործողությունների մեջ հիմնական խթանը տնտեսական եկամուտի ստացումն է, իսկ գալող գործոնը՝ բացահայտման և պատժման միջոցները:

Կոռուպցիայի չափը Համաշխարհային բանկի Կառավարման համաշխարհային ցուցանիշների հետազոտության արդյունքում «կոռուպցիայի վերահսկման» ցուցանիշով Հայաստանը 30 միավորով դասվում է ցածր տոկոսներ գրանցած երկրների շարքը՝ 0-ից 100 սանդղակում, որտեղ 0-ն ամենացածրն է, իսկ 100-ը՝ ամենաբարձրը: Թրանսփերենսի Ինթերնեշնլի Կոռուպցիայի ընկալման 2012 թ. համաթվով Հայաստանը գնահատման ենթարկված 176 երկրների ու տարածքների շարքում զբաղեցնում էր դասակարգման աղյուսակի 105-րդ տեղը 34 միավորով՝ 0-ից 100 սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է բացարձակ կոռումպացված, իսկ 100-ը՝ բացարձակ մաքուր: Սեփական երկրում կոռուպցիայի վերաբերյալ քաղաքացիների ընկալումները դիտարկող ԹԻ մեկ այլ հետազոտության՝ 2013 թ. Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) արդյունքներով հարցման ենթարկված անձանց 82 տոկոսը վկայում է, որ կոռուպցիայի մակարդակը Հայաստանում նախորդող երկու տարիների ընթացքում կամ մնացել է նույնը (39 տոկոս) կամ ավելացել է (43 տոկոս): Ավելին, հարցվածների 61 տոկոսը երկրի հանրային ոլորտի կոռուպցիան համարում է լուրջ հիմնախնդիր (Ուիքլեյթերգ, 2013, էջ 3-5):

Փորձենք որոշակի համեմատություն կատարել Հայաստանի և Մինգապուրի միջև, որը հաճախ ասոցացվում է կոռուպցիայի դեմ պայքարի լավ օրինակի հետ, նշեմ որ Մինգապուրում գործում է Կոռուպցիոն դեպքերի հետաքննության բյուրոն, որի համար հիմք է հանդիսացել կոռուպցիայի կանխարգելման մասին օրենքը: Բյուրոն անկախ պետական մարմին է: Նրա գործառույթների մեջ մտնում է քննության իրականացումը և կոռուպցիայի կանխարգելումը պետական և մասնավոր ոլորտներում:

Լինելով նավահանգստային քաղաք՝ Մինգապուրը դեռևս 1950-ականներին ամբողջովին գտնվել է հանցավոր խմբավորումների (չինական տրիադաներ) հսկողության տակ, եղել է չափազանց կոռումպացված, իսկ բազմազգ հասարակության (բնակչության մեծ մասը չինացիներ են, կան նաև մեծ թվով մալայացիներ, հնդիկներ, մի քանի տասնյակ այլ ժողովուրդներ) ներսում եղած ազգամիջյան հարաբերությունները ինչ-որ պահի վտանգել են փոքրիկ երկրի գոյությունն ընդհանրապես: Նման պայմաններում, երբ 1959 թվականին Լի Կուան Յուն անկախացած Մինգապուրում եկավ իշխանության, ձեռնամուխ է լինում կոշտ, բայց արդյունավետ բարեփոխումների

իրականացմանը:

Հայաստանը, հետևելով Սինգապուրի օրինակին, 2017 թվականին ընդունել է մի շարք հակակոռուպցիոն օրենքներ, որոնք առավել արդյունավետ պետք է դարձնեն կոռուպցիայի

Առավել լավ հասկանալու համար այս համեմատությունից կոռուպցիան դիտարկենք որոշակի մակարդակներում:

Ընդհանրապես կոռուպցիան դիտարկվում է երկու մակարդակում՝

- «Վերևների» կոռուպցիա (քաղաքական կամ պետական իշխանության չարաշահում), ուր անձնական օգուտից կամ շահից դրդված քաղաքական գործիչների ու բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից քաղաքական որոշումներ կայացնելիս իրենց վստահված քաղաքական իշխանության չարաշահումն է:
- «Ներքևների» կոռուպցիա (վարչական կոռուպցիա), որը բնորոշ է միջին և ստորին օղակի պաշտոնատար անձանց, որոնք ամենօրյա շփումների մեջ են քաղաքացիների հետ (Ծաղիկյան, 2001, էջ 51):

Կոռուպցիայի այս երկու մակարդակների տարանջատումը շատ կարևոր է կոռուպցիայի հասարակական ընկալումները քննության առնելու և դրանց դեմ պայքարը համակարգելու տեսանկյունից, քանի որ երկրորդ մակարդակը շատ հաճախ որպես կոռուպցիա չի ընկալվում, այլ դիտվում է «մատուցվող ծառայություններն արագացնելու նպատակով արվող վճարում»:

Կոռուպցիայի առումով առավել խոցելի է պետական կառավարման համակարգը, մասնավորապես՝ դատական իշխանությունը, ոստիկանությունն ու առողջապահական համակարգը: Այս իրավիճակն է արձանագրվել ոլորտների մեծ մասում՝ կառավարման ցուցանիշների ցածր կատարողականների հիման վրա:

Կախված նրանից, թե ինչ գործառույթ է իրականացնում տվյալ գործակալությունը և թե իշխանության որ ճյուղի առաջ է նա պատասխանատու տվյալ գործունեության համար՝ առանձնացվում են չորս խումբ հակակոռուպցիոն հանձնաժողովներ՝

- **Համընդհանուր մոդել** – այս մոդելն օժտված է կանխարգելիչ, հաղորդակցական, հետաքննչական գործառույթներով և ենթադրում է հաշվետվողականություն գործադիր իշխանության մարմին: Մոդելի առավելությունը հիմնավորվում է նրանով, որ այն օժտված է ուժեղ մանդատով, ինչից էլ բխում է, որ այն իրավասու է կիրառել տարբեր հակակոռուպցիոն մոտեցումներ կոռուպցիայի դեմ պայքարի բոլոր հիմնական ուղղություններով: Այս մոդելը բարձրացնում է արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում և նվազեցնում է բյուրոկրատիան, հակակոռուպցիոն համակարգը դարձնելով ավելի պարզ: Արդյունքում, առկա է լինում հակակոռուպցիոն մարմին, որը, հանցագործությունների քննության գործառույթն իրականացնելիս, կարող է բացահայտել կոռուպցիոն սխեմաներ, այնուհետև, կանխարգելիչ և կրթական գործառույթներն իրականացնելիս, կազմել դրանց վերացմանն ուղղված իրավական ակտերի նախագծեր և մշակել հա-

կակոռուպցիոն կրթական մեխանիզմներ: Հասարակության համար բարձրանում է հակակոռուպցիոն պայքարի թափանցիկության և տեսանելիության մակարդակը՝ բացառելով հակակոռուպցիոն մարմինների գործունեության վերաբերյալ շփոթությունը հանրության շրջանում: Չեզոքանում է գերատեսչական շահերի ռիսկը, նվազում են շահերի բախման իրավիճակները և միջգերատեսչական անառողջ մրցակցությունը:

- **Հեռաքննչական մոդել** – սա կիրառվել է Սինգապուրում: Այն փոքր և կենտրոնացված հեռաքննչական հանձնաժողով է, որը հաշվետու է գործադիր իշխանության մարմնին: Սինգապուրը, լինելով Հեռավոր Արևելքում բրիտանական ռազմածովային գլխավոր հենակայան, չուներ պետության կարգավիճակ ձեռք բերելու ոչ հեռանկարներ և ոչ էլ՝ ձգտում: Սակայն Սինգապուրի վարչապետ Լի Կուան Յուի կարծիքով պաշարների անբավարարությունը պետք է փոխհատուցվեր խելքի, կարգապահության և հնարամտության առավելությամբ: Այս մոդելի կիրառման շնորհիվ Սինգապուրի վարչապետին երեսուն տարվա ընթացքում հաջողվում է Սինգապուրը դարձնել տնտեսապես զարգացած և կոռուպցիայից զերծ երկիր:
- **Խորհրդարանական մոդել** – որտեղ համապատասխան մարմինը հաշվետու է խորհրդարանական հանձնաժողովների առաջ: Մոդելն օգտագործվել է Ավստրալիայում, որտեղ առկա է կոռուպցիայի նվազեցման երեք հիմնական մոտեցում՝
 - ինտերվենցիոնալիզմ,
 - մենեջերալիզմ,
 - կազմակերպչական ամբողջականություն:

Տվյալ մոտեցման համաձայն կոռուպցիայի դեմ պայքարում առավել արդյունավետ է կազմակերպական կառուցվածքի թիրախավորումը այլ ոչ թե անհատների:

- **Բազմապրոֆիլ մոդել** –Մոդելը ներառում է տարբեր գործակալություններ, որոնք համարվում են ինքնուրույն, սակայն միասին կազմում են հակակոռուպցիոն գործակալությունների ցանցը: Այս մոդելով է աշխատում ԱՄՆ Պետական էթիկայի գրասենյակը :

Մի շարք մասնագետներ կարծում են, որ կոռուպցիայի կանխարգելման կարևոր տարրերից են հակակոռուպցիոն օրենսգրքերի առկայությունն ու դրանց գործնականում կիրառումը, միաժամանակ կարևորելով համապատասխան կարգավորման մեխանիզմների ներդրումը :

Արմատավորված կոռուպցիան, հովանավորչության ուժեղ ցանցերը, մասնավոր ձեռնարկության և պետական հիմնարկության միջև հստակ տարանջատման բացակայությունը, ինչպես նաև քաղաքական ու բիզնես վերնախավերի մասնակի համընկնում այն համոզման են հանգեցնում, որ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված ջանքերն առանձնապես մեծ արդյունք չեն ունենա: Ավելին, Հայաստանի կառավարման թերությունները խորացել են՝ հանգեցնելով տարածված քաղաքական ապատիայի ու ցինիզմի այն քաղա-

քացիների շրջանում, ովքեր չեն տեսնում, որ իրենք կարող են ազդեցիկ դերակատարություն ունենալ կոռուպցիայի դեմ պայքարում:

Եզրակացություն

Մեր եզրակացությունն այն է, որ կոռուպցիան սոցիալական երևույթ է, ուստի դրա դեմ պայքարի շրջանակներում արդյունքի հասնելու համար հարկ է ուշադրություն դարձնել պետություն–հասարակություն կառուցողական և շարունակական համագործակցությանը:

Կոռուպցիան, թուլացնելով օրենքի իշխանությունը և վտանգի տակ դնելով պետության հեղինակությունը, մեծապես արգելակում է երկրի զարգացումն ու տնտեսական աճը: Հիմնվելով կոռուպցիայի կանխարգելման միջազգային լավագույն փորձի վրա, որոշ մեխանիզմների կիրառումը ներպետական մակարդակներում և հետևողական պայքարը կուրվագծեն և հասանելի կդարձնեն կոռուպցիայի մակարդակի նվազեցումը:

Օգտագործված գրականության ցանկ

- Ծաղիկյան, Ս. (2001) *Կոռուպցիա. պայրձառները, հետևանքները*: Երևան: «Կոռուպցիան և մարդու իրավունքները. կապի հասարակումը» (2009). Մարդու իրավունքների քաղաքականության միջազգային խորհուրդ: ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա <http://iravaban.net/wp-content/uploads/2014/03/UNCAC.pdf> (մուտք՝ 10.12.2020): Ուիքթերգ, Սոֆիա (2013) *Կոռուպցիան և հակակոռուպցիոն պայքարը Հայաստանում. Ընդհանուր իրավիճակի նկարագիր*, օգոստոս 23, 2013: Թրանսփերենսի Ինթերնեշնլ:
Корчагин, А.Г., Иванов, А.М. (2001). *Сравнительное исследование коррупционных и служебных преступлений*. Владивосток.
Криминология (1997). Учебник для юридических вузов. Под общей редакцией доктора юридических наук, профессора А. И. Долговой – М.: Издательская группа ИНФРА . М–НОРМА.,
Максимов, С. В. (2008). *Коррупция. Закон. Ответственность*. М.
Menny, E. (1999). *Corruption*. London.
Klingaard, Robert (2001) «*International Cooperation Against Coouption*». Finace & Development/ March 2001.

References

- Tsaghikyan, S. (2001) *Koruptsia.patjarnery, hetevanqneri* [Corruption, reasons, results] Yerevan, (In Arm.)
Koruptsian ev mardu iravunqneri. kapi hastatumy [Corruption և human rights, communication] (2009). Mardu iravunqneri qaghaqakanutyan mijazgayin xorhurd, (In Arm.)
Mak-i koruptsiayi dem konventsia
<http://iravaban.net/wp-content/uploads/2014/03/UNCAC.pdf> 10.12.2020 (In Arm.)

- Wickberg, Sofia (2013) *Koruptsian ev hakakoruptsion paiqary Hayastanum. Yndhanur iravijaki nkaragir*. [Corruption and Anti-corruption struggle in Armenia. Description of the general situation]. Transparency International, ogostos 23 (In Arm.)
- Korchagin, A.G., Ivanov, A.M. (2001) *Sravnitel'noe issledovanie korruptsionnykh i sluzhebnykh prestupleniy* [Comparative study of corruption and service crimes], Vladivostok. (In Rus.)
- Kriminologiya* [Criminology] (1997). Uchebnik dlya yuridicheskikh vuzov. Pod obshchey redaktsiey doktora yuridicheskikh nauk, professora A. I. Dolgovoy – M.: Izdatel'skaya gruppa INFRA. M–NORMA. (In Rus.)
- Maksimov, S. V. (2008). *Korruptsiya. Zakon. Otvetstvennost'*. [Corruption. Law. Responsibility] M. (In Rus.)
- Menny, E. (1999). Corruption. London (In Eng.)
- Klingaard, Robert (2001). «International Cooperation Against Couoption», Finace & Development/ March 2001 (In Eng.)

Ерануи Манукян

*Преподаватель Ереванского государственного университета и
Международного Университета Евразия,
кандидат философских наук, доцент
Эл. адрес: e.manukyan@ysu.am*

СОЦИАЛЬНО–ФИЛОСОФСКИЙ АНАЛИЗ ПРОБЛЕМЫ КОРРУПЦИИ

Статья посвящена всестороннему анализу проблемы коррупции, а также обозначению возможных способов ее предотвращения. Этот анализ основан на подходах известных исследователей, на международном опыте, в частности, Сингапура. В статье анализируется проблема коррупции в широком и узком смысле. В самом широком смысле коррупция – одно из самых нежелательных явлений, связанное с человеческим поведением и возможностями социального контроля и урегулирования отношений.

В узком смысле слово коррупция – это явление, в результате которого лидер либо злоупотребляет своим служебным положением, либо идет против выполнения своих обязанностей с целью получения дополнительных средств, то есть создается впечатление, что государство приватизируется отдельными лицами. В статье определены пути, показывающие, как снизить, предотвратить или искоренить коррупцию за счет существования развитого законодательства, нравственного воспитания населения, подотчетности государственных служащих.

Ключевые слова: коррупция, противодействие коррупции, общество, альтернативное, социальное, моральное, политическое.

Yeranuhi Manukyan

Lecturer at Yerevan State University and Eurasia International University,

Ph.D. in Philosophy, Associate Professor

Email: e.manukyan@ysu.am

SOCIAL–PHILOSOPHICAL ANALYSIS OF CORRUPTION ISSUE

The article is devoted to a comprehensive analysis of the issue of corruption, as well as outlining possible ways of preventing it. This analysis is based on the approaches of well-known researchers based on international experience, particularly in Singapore. The article analyzes the issue of corruption in a broad and narrow sense. In the broadest sense, corruption is one of the most undesirable phenomena, which is also related to the possibilities of human behavior and relations, regulation and social control.

In the narrow sense of the word corruption is a phenomenon, as a result of which the leader either abuses his / her official position or goes against the performance of his / her duties in order to obtain additional funds and it seems that the state is privatized by individuals. The article singles out the ways that show how to reduce, prevent or eliminate corruption due to the existence of developed legislation, moral education of the public, accountable civil servants.

Key words. corruption, anti-corruption, society, alternative, social, moral, political.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2021թ. ապրիլի 15-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման 2021թ. ապրիլի 19-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության 2021թ. ապրիլի 30-ին:

ՏԳՄԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Մկրտչյան

ՀՊՏՀ Տնտեսաամաթեմատիկական մեթոդներ ամբիոնի ասիստենտ,
Կոմիտասի անվան Տնտեսագիտության թեկնածու
Էլ. հասցե՝ anahit.mkrtyan@asue.am

Գայանե Թովմասյան

ՀՊՏՀ «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի ավագ հեղափոխող,
ՀՀ ՊԿԿ դասախոս, Կոմիտասի անվան Տնտեսագիտության թեկնածու
Էլ. հասցե՝ tovmasyangayane@yahoo.com

DOI: 10.53614/18294952-2021.1-59

ՆԵՐՔԻՆ ԶՐՈՍԱՇՆՐԶՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Զրոսաշրջությունը վերջին տարիներին ամբողջ աշխարհում գրանցում էր աճի բարձր միտումներ: Սակայն 2020թ. զրոսաշրջության ոլորտի աճը խաթարվեց կորոնավիրուսի համավարակի պատճառով: Շատ երկրներ, ինչպես և Հայաստանը, փորձեցին աշխուժացնել ներքին զրոսաշրջությունը: Ներքին տեղաշարժման սահմանափակումների և համավարակի պատճառով 2020թ. ՀՀ ներքին զրոսաշրջիկների թվաքանակը նվազել է՝ նախորդ տարվա համեմատ մոտ 33%-ով՝ կազմելով 1045756 մարդ: Հոդվածում իրականացվել է ներքին զրոսաշրջիկների թվաքանակի կանխատեսում ապագա երեք տարիների համար ARIMA մեթոդով: Ըստ կանխատեսումների՝ 2021թ. ՀՀ ներքին զրոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1287492 մարդ, 2022թ.՝ 1350129 մարդ, 2023թ.՝ 1412764 մարդ: Բացի այդ, վերլուծվել է ներքին զրոսաշրջության զարգացման առկա վիճակը, զարգացման հիմնախնդիրները, կատարվել են որոշ առաջարկություններ՝ ներքին զրոսաշրջության զարգացման համար՝ կապված մարքեթինգային գործունեության բարելավման, նոր երթուղիների մշակման և այլնի հետ:

Հիմնաբառեր: ներքին զրոսաշրջություն, զրոսաշրջիկ, կանխատեսում, ARIMA, համավարակ, մարքեթինգ:

Ներածություն

Ձրոսաշրջությունը ՀՀ տնտեսության գերակա ոլորտներից մեկն է և վերջին տարիներին դրսևորել է աճի միտումներ: Ընդ որում, զարգանում էր ինչպես ներգնա, այնպես էլ ներքին զրոսաշրջությունը: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում զրոսաշրջության ոլորտի աճը խաթարվեց կորոնավիրուսի համավարակի պատճառով: Սահմանափակումների պատճառով չեղարկվեցին միջազգային չվերթերը, ինչի արդյունքում կրճատվեցին ՀՀ ներգնա զրոսաշրջային այցելությունները: **2020թ. համավարակի պայմաններում ՀՀ ներգնա զրոսաշրջային այցելությունների թվաքանակը կազմել է 375216՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 80%-ով (2019թ. կազմել է 1894377 զրոսաշրջիկ) (ՀՀ-սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվար-դեկտեմբերին, էջ՝ 143):**

Տեղաշարժման ներքին սահմանափակումների պատճառով 2020թ. կրճատվեց նաև ներքին զրոսաշրջությունը: Սույն հոդվածում կանդրադառնանք ՀՀ ներքին զրոսաշրջության առկա վիճակին, խնդիրներին, և կիրականացնենք կանխատեսումներ ներքին զրոսաշրջիկների թվաքանակի վերաբերյալ:

Հետազոտության մեթոդը

Հետազոտության նպատակն է՝ կանխատեսել ներքին զրոսաշրջիկների թվաքանակը ՀՀ-ում ապագա տարիների համար:

Հետազոտությունն իրականացվել է ARIMA (the autoregressive integrated moving average) մեթոդով: Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ ժամանակային շարքն ինքն է խոսում իր մասին (Gujarati, 2003, p. 257): Այսինքն, ի տարբերություն ավանդական ռեգրեսիոն մոդելների, որտեղ կախյալ փոփոխականը բացատրվում է մեկ կամ մի քանի անկախ փոփոխականների միջոցով, ARIMA մոդելում կախյալ փոփոխականը բացատրվում է իր և մոդելի չկոռելացված սխալի լագավորված արժեքների միջոցով:

Արդյունքներ

Ինչպես գիտենք, ներքին զրոսաշրջությունը ռեզիդենտների ճանապարհորդությունն է զրոսաշրջության նպատակներով իրենց մշտական բնակության երկրի սահմաններում (International Recommendations for Tourism Statistics 2008, p. 15):

Վերջին տարիներին ՀՀ ներքին զրոսաշրջիկների թվաքանակը դրսևորել է աճի միտումներ: 2019թ. ՀՀ ներքին զրոսաշրջիկների թվաքանակը կազմել է 1544600 մարդ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 41.4%-ով: Ներքին զրոսաշրջիկների մեծ մասի նպատակը եղել է հանգիստը և ժամանցը (72%): **2020թ., համավարակով պայմանավորված, ներքին զրոսաշրջիկների թվաքանակը նվազել է՝ նախորդ տարվա համեմատ մոտ 33%-ով՝ կազմելով 1045756 մարդ:** Նրանց շուրջ 73%-ի նպատակը եղել է հանգիստն ու ժամանցը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը, 2014-2020թթ.

Թվաքանակ / տարի	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.
ընդամենը զբոսաշրջիկներ*, որոնցից ըստ նպատակի	859703	871888	979968	1086707	1092322	1544600	1045756
գործնական	189465	160089	171601	252787	207761	280542	150649
հանգստի և ժամանցի	540375	591271	696582	742188	781668	1112305	765100
բուժման	84133	63494	58194	43558	58339	52006	53500
այլ	45729	57034	53591	48174	44554	99747	76507

*Տվյալներն արտացոլում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում (հյուրանոցներ, հյուրանոցատիպ հանգրվաններ, առողջարաններ, հանգստյան տներ և այլն) հաշվառված զբոսաշրջիկներին:

Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-հոկտեմբերին, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվարին, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվարին, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվարին, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվարին, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվարին (ՀՀ վիճակագրական կոմիտե)

2020թ. միջազգային սահմանափակումների պայմաններում, չնայած նկատվեց ներքին զբոսաշրջության ակտիվացում, սակայն, վիճակագրական տվյալները վկայում են, որ այնուամենայնիվ, 2019թ.-ի համեմատ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը նվազել է 33%-ով: Ընդ որում, ամենամեծ կրճատումը եղել է երկրորդ եռամսյակում՝ 99%, երբ ներքին տեղաշարժի սահմանափակումներ ևս կային, իսկ երրորդ եռամսյակում կրճատումը եղել է 32% (աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակն ըստ եռամսյակների, 2019-2020թթ.

Թվաքանակ / տարի	2019թ.				Ընդամենը	2020թ.				Ընդամենը
	1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.		1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ.	
Ներքին զբոսաշրջիկների թվաքանակը	158672	76784	1169940	139204	1544600	139619	539	794823	110775	1045756

Աղբյուրը՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվար-ապրիլին, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվար-հուլիսին, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվար-հոկտեմբերին, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. Հունվարին (ՀՀ վիճակագրական կոմիտե)

Հարկ է նշել, որ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը ներառում է միայն հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած զբոսաշրջիկներին:

րին: Սակայն կարող են լինել շատ զբոսաշրջիկներ, որոնք հանգրվանել են վարձու բնակարաններում, ինչի հետ կապված վիճակագրական տվյալներ առկա չեն:

Ցավոք, չկա վիճակագրություն նաև, թե որքան են կազմել ներքին զբոսաշրջիկներն ըստ մարզերի, ըստ հյուրանոցային տնտեսության օբյեկտների, ըստ սեռի, տարիքի, ըստ զբոսաշրջության տեսակի: Աղյուսակ 1-ում ներկայացված ըստ նպատակի բաժանումը շատ լայն է, և հանգստի ու ժամանցի տակ հասկանալի չէ՝ զբոսաշրջիկները ձամփորդել են պատմամշակութային, գաստրոնոմիական, արկածային, էկո, ագրո, թե՛ այլ նպատակի համար: Վիճակագրության լայն տվյալների առկայության պարագայում հնարավոր կլինե՞ր հետազոտություններ անել, թե օրինակ որ մարզեր են ավելի շատ այցելում, հյուրանոցային տնտեսության ի՞նչ օբյեկտներում են հանգրվանում (հյուրանոց, մոթել, հանգստյան տուն, առողջարան, և այլն), քանի՞ օր է կազմում ներքին զբոսաշրջիկների հանգիստը, ըստ սեռի և տարիքի զբոսաշրջության որ տեսակն է հետաքրքրում զբոսաշրջիկներին, և այլն:

Վիճակագրության բարելավման նպատակով ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից 2018թ. նոյեմբերի 30-ի թիվ 78-Ն որոշմամբ ընդունվեցին «Ներգնա և ներքին զբոսաշրջության մասին» Ձև 1 – զբոսաշրջություն (եռամսյակային), «Ներգնա, ներքին և արտագնա զբոսաշրջության մասին» Ձև 2 – զբոսաշրջություն (եռամսյակային) վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները, որոնք ուժի մեջ են մտել 2019թ. հունվարի 1-ից: Ըստ վերոնշյալ Ձև 1-ի՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտների կողմից պետք է լրացվի օբյեկտի տեսակը, ներքին զբոսաշրջիկների թվաքանակն ըստ այցելության նպատակի, սեռի, տարիքի, ներքին զբոսաշրջիկների կողմից ծառայություններից օգտվելու արդյունքում ՀՏՕ-ի ստացած հասույթի, նաև ըստ համարների և ննջատեղերի ՀՏՕ-ների զբաղվածության, ՀՏՕ-ում առկա ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Ըստ Ձև 2-ի՝ պետք է տրամադրվի հետևյալ տեղեկատվությունը՝ զբոսաշրջային օպերատորի/զբոսաշրջային գործակալի ծառայություններից օգտված ներքին զբոսաշրջիկների թվաքանակն ըստ այցելության հիմնական նպատակի, ներքին զբոսաշրջիկների կատարված ծախսերը զբոսաշրջային օպերատորի/զբոսաշրջային գործակալի կողմից կազմակերպած/ամրագրած ծառայությունների վրա և դրանից վերջիններիս ստացած հասույթը, ներքին զբոսաշրջիկների թվաքանակը, որոնք այցելել են որոշակի վայրեր՝ զբոսաշրջային օպերատորի/զբոսաշրջային գործակալի կողմից կազմակերպած շրջագայությունների (տուրերի) շրջանակում (ՀՀԳՏ 2018.12.26/32(635).1 Հոդ.286.18):

Հարկ է նշել, սակայն, որ չնայած ըստ այդ որոշման 2019թ. հունվարի 1-ի սկսած մենք պետք է ունենայինք վերոնշյալ մանրամասն տեղեկատվությունը, սակայն դրանք առկա չեն: Ըստ ՎԿ տրամադրած տեղեկության՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտների և զբոսաշրջային օպերատորների/զբոսաշրջային գործակալների կողմից սույն ձևերը ամբողջական չեն լրացվում,

ինչի հիման վրա իրենք չեն կարող ամբողջական տեղեկատվություն հրապարակել: ՎԿ կողմից նախատեսվում է անցում կատարել հաշվետվությունների լրացման առցանց համակարգի, որի արդյունքում դաշտերը պարտադիր լրացման ենթակա դարձնելով հույս ունեն լուծել խնդիրը: Այստեղ, իհարկե, հնարավոր է բախվել այլ խնդրի հետ, որ կարող են լրացվել սխալ, կեղծ տվյալներ, քանի որ շատ դեպքերում տարբեր պատճառներով հյուրանոցային տնտեսության օբյեկտները, օրինակ, մանրամասն հաշվառում կամ հարցում չեն իրականացնում, չեն գրանցում հաճախորդի անձնագրային տվյալները, և այլն: Հարկ է նշել, որ ներկայումս զբոսաշրջության ոլորտի կազմակերպությունները չեն լիցենզավորվում, ինչը նախատեսվում է իրականացնել Ջրոսաշրջության մասին նոր օրենքի նախագծով: Բացի այդ նախատեսվում է ստեղծել զբոսաշրջային կազմակերպությունների վարչական ռեգիստր, և գուցե այս ամենի արդյունքում սահմանվի նաև վերահսկողություն, ու այդ կերպ լուծվի վիճակագրական տվյալների հավաքագրման խնդիրը:

Քննարկում

Հաշվի առնելով ներքին զբոսաշրջության վերաբերյալ առկա վիճակագրական տվյալները՝ իրականացվել է ներքին զբոսաշրջիկների թվաքանակի կանխատեսում հաջորդ տարիների համար:

Վերլուծության համար դիտարկվող ժամանակահատված է համարվել 2005 թ.-ի առաջին եռամսյակից մինչ 2020 թ.-ի վերջին եռամսյակը, իսկ տվյալների աղբյուր է հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի մասին հրապարակումները 2005-2021թթ. կտրվածքով:

Ժամանակային շարքերի միջոցով ռեգրեսիոն վերլուծություն իրականացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել շարքերի վարքագծին: Ինչպես հայտնի է, տնտեսագիտական ցուցանիշների ժամանակային շարքերը հիմնականում լինում են ոչ ստացիոնար, այնինչ էկոնոմետրիկ բազմաթիվ մեթոդներ հիմնված են շարքերի ստացիոնար լինելու վրա: Եթե վերլուծության մեջ դիտարկվող ժամանակային շարքերը ստացիոնար չեն, ապա հաճախ հետազոտողը բախվում է այսպես կոչված «կեղծ ռեգրեսիա» կոչվող երևույթին: Վերջինս նշանակում է, օրինակ, կապ գտնել երկու անկախ գործոնների միջև: Նման խնդիրներից խուսափելու համար անհրաժեշտ է նախքան վերլուծությունը շարքերը ստացիոնար դարձնել: Շարքերի ստացիոնարության ստուգման համար կիրառվում է, օրինակ, Դիկի-Ֆուլերի միավոր արմատի սովորական կամ ընդլայնված թեստը:

Դիտարկենք ներքին զբոսաշրջիկների թվաքանակի ժամանակային շարքը, որը նշանակվեք TOURISTS: Դիկի-Ֆուլերի միավոր արմատի թեստ արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Միավոր արմատի ստուգման Դիկի-Ֆուլերի ընդլայնված թեստի արդյունքը

D(TOURISTS)	Կրիտիկական Արժեք*	
ADF թեստի		-7.3939
վիճ.	1%	-3.552666
	5%	-2.914517
	10%	-2.595033

*Մակհինտնի կրիտիկական արժեքները միավոր արմատի վարկածի մերժման համար

Այսպիսով, հետազոտվող շարքը առաջին կարգի ինտեգրվող է:

Այսօր տարբեր երևույթների կանխատեսումներն իրենց օգտակարությունն ապացուցել են տնտեսագիտության տարաբնույթ ոլորտներում, այդ թվում օրինակ՝ մարքեթինգում, ֆինանսական ակտիվների և ռիսկերի կառավարման մեջ, բիզնեսի և պետությունից պլանավորման մեջ: Հիմնվելով անցյալի և ներկայի տեղեկատվության վրա՝ կանխատեսման նպատակն է տալ տվյալ երևույթի վերաբերյալ ապագա քանակական գնահատականներ: Գոյություն ունեն կանխատեսման տարատեսակ մեթոդներ, այդ թվում՝ Բոքս-Ջենքինսի ARIMA (the autoregressive integrated moving average) մոդելը (Box and Jenkins, 1976) (ավտոռեգրեսիոն ինտեգրված սահող միջինի մոդել): Այս մեթոդի հիմնաբարն է թույլ տալ ժամանակային շարքին խոսել իր մասին (Gujarati, 2003, p. 257): Ինչպես արդեն նշվել է, ի տարբերություն տրադիցիոն ռեգրեսիոն մոդելների, որտեղ կախյալ փոփոխականը բացատրվում է մեկ կամ մի քանի անկախ փոփոխականների միջոցով, ARIMA մոդելում կախյալ փոփոխականը բացատրվում է իր և մոդելի չկոռելացված սխալի լագավորված արժեքների միջոցով: Այս մոդելում ժամանակային շարքը պետք է լինի կամ ստացիոնար, կամ լինի ինտեգրվող: ARIMA մոդելը նշանակվում է այսպես՝ ARIMA(p,d,q), որտեղ d-ն շարքի ինտեգրման կարգն է, p-ն ավտոռեգրեսիոն մոդելի կարգն է, իսկ q-ն սահող միջինի մոդելի կարգն է: Ընդհանրապես, Բոքս-Ջենքինսի մեթոդաբանությունը ունի 4 քայլ՝

- իդենտիֆիկացիա – որոշել p,d,q-ն,
- գնահատում – մոդելը իդենտիֆիկացնելուց հետո անհրաժեշտ է այն գնահատել,
- ախտորոշում – ARIMA մոդելը համարվում է այսպես կոչված՝ արվեստի գործ, քանի որ հետազոտողը բազմաթիվ մոդելներից ընտրում է որևէ մեկը և վստահ չէ, թե արդյոք իր ընտրությունը ճիշտ է: Այս պրոցեսը իտերատիվ պրոցես է. սկսվում է պարզ մոդելից, ապա աստիճանաբար բարդացվում են այն: Նախապատվությունը տրվում է այն մոդելին, որի մնացորդները ստացիոնար պրոցես են,
- կանխատեսում – հաջողված ARIMA մոդելի վերջնական թեստավոր-

րումը որակյալ կանխատեսում ապահովելն է ինչպես դիտարկված ժամանակահատվածում, այնպես էլ ժամանակահատվածից դուրս:

Ուսումնասիրելով d(TOURISTS) շարքի կոլեոգրամը՝ որոշվել է p և q մեծությունների նախնական արժեքները: Նախնական վերլուծությունից հետո նախապատվությունը տրվել է ARIMA[(1,2,3),1,(3)] մոդելին՝ հիմք ընդունելով Ակայկեի, Շվարցի տեղեկատվական չափանիշների համեմատարար փոքր արժեքը: Մոդելի գնահատման արդյունքները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4.

Մոդելի գնահատման արդյունքները

Կախյալ փոփոխական: D(TOURISTS)

Եղանակ: ARMA Մաքսիմալ ճշմար (OPG - BHHH)


Ընտրանք: 2005Q2 2020Q4

Փոփոխական	Գործակից	Ստ. սխալ	t-վիճակ	P-արժեք
C	3895.218	4220.688	0.922887	0.3600
AR(1)	-0.998106	0.106664	-9.357444	0.0000
AR(2)	-0.991086	0.120293	-8.238963	0.0000
AR(3)	-0.959214	0.032532	-29.48521	0.0000
MA(3)	-0.343909	0.728830	-0.471865	0.0388
SIGMASQ	5.39E+09	6.17E+08	8.737747	0.0000
R^2	0.964150	Ակայկեի չափանիշ		25.58415
R^2 ուղղված	0.961005	Շվարցի չափանիշ		25.78826
Ռեգրեսիայի ստ. սխալ	3.40E+11	Հանան-Քուինի չափանիշ		25.66443
F-վիճակ	306.5923	Դարբին-Վաթսոնի վիճ.		1.932243
P արժեք(F-վիճ)	0.0000			
AR հակադարձ արմատ	-.01-.99i	-.01+.99i	-.98	
MA հակադարձ արմատ	.70	-.35+.61i	-.35-.61i	

Լյուինգ-Քոքսի Q թեստի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ մոդելը զերծ է ցանկացած կարգի ավտոկորելյացիայից, քանի որ Q վիճակագրության արժեքները նշանակալի են բոլոր ստուգվող կարգերում, բացի այդ մոդելի AR, MA բոլոր արմատները գտնվում են միավոր շրջանի տիրույթում, ինչը ևս հաստատում է փաստը, որ մոդելը կարելի է օգտագործելու կանխատեսումներ կատարելու համար (աղյուսակ 5, նկար 1):

Լյուինգ-Բոքսի Q-թեստի արդյունքները


	ԱԿ	ՄԱԿ	Q-վիճ	P-արժ.
1	0.029	0.029	0.0548	
2	-0.002	-0.003	0.0551	
3	-0.024	-0.024	0.0954	
4	-0.260	-0.259	4.7869	
5	-0.092	-0.085	5.3873	0.053
6	-0.049	-0.052	5.5593	0.062
7	0.003	-0.009	5.5602	0.135
8	0.134	0.068	6.8945	0.142
9	-0.008	-0.060	6.8993	0.228
10	-0.035	-0.072	6.9963	0.321



Նկար 1. AR/MA հակադարձ արմատները

Անվիտիելով կարող ենք ասել, որ կառուցված ARIMA[(1,2,3),(3)] մոդելը հավանաբար ներկայացնում է ներքին զբոսաշրջիկների ժամանակային շարքի առաջին տարբերության վարքը դիտարկվող ժամանակահատվածում: Մոդելի ընտրությունից հետո այն կարող ենք օգտագործել կանխատեսումներ անելու համար:

Նկար 2-ում պատկերված է դիտարկվող ժամանակահատվածում ներքին զբոսաշրջիկների ժամանակային շարքի փաստացի և կանխատեսված շարքերի գրաֆիկները:



Նկար 2. Ներքին զբոսաշրջիկների փաստացի և կանխատեսված շարքերի գրաֆիկները

Ինչպես տեսնում ենք նկար 2-ից՝ կանխատեսված շարքը՝ TOURISTSF-ը գրեթե ամբողջությամբ համընկել է փաստացի շարքի հետ, իսկ 2021–2023թթ.-ի կանխատեսումները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6.

Ներքին զբոսաշրջիկների թվաքանակի կանխատեսումները 2021–2023թթ.

–	2021	2022	2023
I եռամսյակ	155607	175671	196011
II եռամսյակ	162265	197664	231482
III եռամսյակ	784570	775456	767439
IV եռամսյակ	185050	201338	217832
Ընդամենը	1287492	1350129	1412764

Այսպիսով, ըստ կանխատեսումների՝ 2021թ. ՀՀ ներքին զբոսաշրջիկների թվաքանակը կկազմի 1287492 մարդ, 2022թ.՝ 1350129 մարդ, 2023թ.՝ 1412764 մարդ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ. և գուցե դեռ 2022թ. համավարակը շարունակվի, ապա վերոնշյալ կանխատեսումները արժեհավատ են:

Եզրակացություն

Այսպիսով, քանի որ 2021թ. դեռ համավարակը չի նահանջել, և գուցե կրկին լինեն միջազգային տեղաշարժման սահմանափակումներ, ուստի կարելի է ակնկալել ներքին զբոսաշրջության ակտիվացում 2021թ., ինչը ցույց տվեց նաև մեր կանխատեսումը:

Ներքին զբոսաշրջության խթանման համար հարկ է իրականացնել բազում աշխատանքներ: Այստեղ հարկ է դիտարկել նաև զբոսաշրջիկի հոգեբանությունը՝ շատերն իրենց ապահով կզգան իրենց երկրի սահմաններում, քանի որ վտանգի պարագայում կարող են ավելի հեշտ ու արագ օգտվել համապատասխան բժշկական ծառայություններից, քան արտերկրում:

Ներքին զբոսաշրջության խթանման համար անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ տարբեր ուղղություններով՝ մարքեթինգային միջոցառումներ, հատկապես համացանցով և սոցիալական ցանցերով, տարբեր տեսակի տուր փաթեթների մշակում՝ ներառելով զբոսաշրջության տարբեր տեսակներ՝ ռեկրեացիոն, կրոնական, դեպի սրբավայրեր ուխտագնացության, էկո, ագրո, գաստրոնոմիական, սպորտային, արկածային, իրադարձային, և այլն: ՀՀ-ում կան զբոսաշրջային մեծ գրավչություն ունեցող բազում ռեսուրսներ, որոնց հիման վրա կարող են զարգանալ զբոսաշրջության տարբեր տեսակներ: Այնինչ զբոսաշրջային կազմակերպությունների կողմից հիմնականում գովազդվում են արդեն հայտնի դարձած և մեծ պահանջարկ վայելող ուղղությունները: Տարբեր մարզերի և տարբեր համայնքների ունեցած ռեսուրսների հիման վրա զբոսաշրջային առաջարկ և համապատասխան երթուղիներ մշակելը կնպաստի նաև մարզերի սոցիալ-տնտեսական զարգացմանը: ՀՀ-ն ունի ներքին զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ, ՀՀ բոլոր մարզերը և մայրաքաղաքն ունեն զբոսաշրջային հսկայական ներուժ, պատմամշակութային և այլ ռեսուրսներ, ուստի, դրանց հիման վրա կարող են կազմակերպվել տարբեր երթուղիներ՝ մեկտեղելով զբոսաշրջության տարբեր տեսակներ: Նոր առաջարկի և երթուղիների ստեղծումը և դրա խթանումը կնպաստի ներքին զբոսաշրջության զարգացմանը նաև հետագա տարիներին: Նոր երթուղիները կնպաստեն նաև ներգնա զբոսաշրջության զարգացմանը: Որպես մարքեթինգային խթան կհանդիսանա նաև Influencer մարքեթինգի իրականացումը տարբեր հայ հայտնի մարդկանց մասնակցությամբ, որոնք կհանգստանան որևէ մարզում, կմասնակցեն որևէ զբոսաշրջային տուրի, և ուղղակի ու անուղղակի կերպով կգովազդեն այն: Ներքին զբոսաշրջությունը կարելի է խթանել նաև գործնական զբոսաշրջության միջոցով՝ կազմակերպելով տարբեր միջոցառումներ, գիտաժողովներ տարբեր մարզերում:

Ներքին զբոսաշրջության խթանման համար կարելի է նաև որոշակի գումարի սահմաններում հատուկ վաուչերներ տրամադրել բազմազավակ, սոցիալապես անապահով ընտանիքներին և նրանց, ում ամսական եկամուտը նվազագույն աշխատավարձի չափ է, (օրինակ, Իսլանդիայում, համավարակի պայմաններում ներքին զբոսաշրջության խթանման համար վաուչերներ տրամադրվել է 18 տարին լրացած բոլոր անձանց 34 եվրո գումարի չափով (Government sends out vouchers to spend on domestic travel)), որը նրանք կարող են ծախսել զբոսաշրջային տուր փաթեթների գնման, հյուրանոցային տնտեսության օբյեկտներում գիշերակացի համար:

Ներկա պայմաններում ներքին զբոսաշրջության խթանումն ու զարգացումն այլընտրանք չունի: Միջազգային զբոսաշրջային այցելությունների

նվազման պարագայում այն կարող է հանդիսանալ զբոսաշրջության ոլորտի միակ փրկողակը: Ուստի խթանման աշխատանքների իրագործումը հետագա տարիներին ևս կապահովի ներքին զբոսաշրջության զարգացում: Ներքին զբոսաշրջության խթանումը կնպաստի մարզերում սոցիալ-տնտեսական կյանքի և զբոսաշրջային ենթակառուցվածքների գործունեության աշխուժացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

- ՀՀԳՏ 2018.12.26/32(635).1 Հոդ.286.18, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշումը «Ներգնա և ներքին զբոսաշրջության մասին» Ձև 1-զբոսաշրջություն (եռամսյակային), «Ներգնա, ներքին և արտագնա զբոսաշրջության մասին» Ձև 2-զբոսաշրջություն (եռամսյակային) վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները հաստատելու և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի ապրիլի 4-ի թիվ 35 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, 30 նոյեմբերի 2018 թ., թիվ 78-Ն, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=127214>
- ՀՀ սոցիալ-դեմոգրաֆիկական վիճակը 2016թ. հունվարին, էջ 96, https://www.armstat.am/file/article/sv_01_16a_422.pdf
- ՀՀ սոցիալ-դեմոգրաֆիկական վիճակը 2018թ. հունվար-հոկտեմբերին, էջ 126, https://www.armstat.am/file/article/sv_10_18a_432.pdf
- ՀՀ սոցիալ-դեմոգրաֆիկական վիճակը 2018թ. հունվարին, էջ 97, https://www.armstat.am/file/article/sv_01_18a_422.pdf
- ՀՀ սոցիալ-դեմոգրաֆիկական վիճակը (2019). հունվարին, էջ 106, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_422.pdf
- ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020թ. հունվարին, էջ 115, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_422.pdf
- ՀՀ սոցիալ-դեմոգրաֆիկական վիճակը 2020թ. հունվար-ապրիլին, էջ 112, https://www.armstat.am/file/article/sv_04_20a_422.pdf
- ՀՀ սոցիալ-դեմոգրաֆիկական վիճակը 2020թ. հունվար-հուլիսին, էջ 114, https://www.armstat.am/file/article/sv_07_20a_422.pdf,
- ՀՀ սոցիալ-դեմոգրաֆիկական վիճակը 2020թ. հունվար-հոկտեմբերին, էջ 122, https://www.armstat.am/file/article/sv_10_20a_422.pdf
- ՀՀ սոցիալ-դեմոգրաֆիկական վիճակը 2020թ. հունվար-դեկտեմբերին, էջ 143, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_421.pdf
- ՀՀ սոցիալ-դեմոգրաֆիկական վիճակը 2021թ. հունվարին, էջ 115, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_422.pdf
- Box G.P., Jenkins G.M., (1976) *Time series analysis: forecasting and control*, revised edn, Holden Day, San Francisco,
- Government sends out vouchers to spend on domestic travel, <https://turisti.is/2020/03/government-sends-out-vouchers-to-spend-on-domestic-travel/>
- Gujarati D.N., *Basic econometrics*, US Military Academy, West Point, 4-th ed, 257 էջեր
- International Recommendations for Tourism Statistics* (2008), United Nations, New York, 2010, էջ 15, https://unstats.un.org/unsd/publication/seriesm/seriesm_83rev1e.pdf

References

- HHGT 2018.12.26/32(635).1 Hod.286.18, *HH vijakagrutyanyan petakan xorhrdi voroshumy* [The decision of the RA State Council of Statistics] «Nergna ev nerqin zbosashrjutyanyan masin» Dzev 1-zbosashrjutyanyan (eramsyakayin), «Nergna, nerqin ev artagna zbosashrjutyanyan masin» Dzev 2- zbosashrjutyanyan (eramsyakayin) vijakagrakan hashvetvutyunneri dzevern u dranc lracman hrahangnery hastatelu ev HH vijakagrutyanyan petakan xorhrdi 2001 tvakani aprili 4-I tiv 35 voroshumn ucy korcrac janachelu masin, 30 noyemberi 2018t., tiv 78-N, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=127214>
- HH social-tntesakan vijaky 2016t. hunvarin* [Socio-economic situation of RA, January 2016], ej 96, https://www.armstat.am/file/article/sv_-01_16a_422.pdf (In Arm.)
- HH social-tntesakan vijaky 2018t. hunvar-hoktemberin*, [Socio-economic situation of RA, January–October 2018] ej 126, https://www.armstat.am-/file/article/sv_10_18a_432.pdf (In Arm.)
- HH social-tntesakan vijaky 2018t. hunvarin* [Socio-economic situation of RA, January 2018] ej 97, https://www.armstat.am/file/article/sv_-01_18a_422.pdf (In Arm.)
- HH social-tntesakan vijaky 2019t. hunvarin* [Socio-economic situation of RA, January 2019] ej 106, https://www.armstat.am/file/article/sv_01_19a_422.pdf (In Arm.)
- HH social-tntesakan vijaky 2020t. hunvarin* [Socio-economic situation of RA, January 2020] ej 115, https://www.armstat.am/file/article/sv_01_20a_422.pdf (In Arm.)
- HH social-tntesakan vijaky 2020t. hunvar-aprillin* [Socio-economic situation of RA, January–April, 2020] ej 112, https://www.armstat.am/file/article/sv_04_20a_422.pdf (In Arm.)
- HH social-tntesakan vijaky 2020t. hunvar-hulisin* [Socio-economic situation of RA, January–July, 2020] ej 114, https://www.armstat.am/file/article/sv_07_20a_422.pdf (In Arm.)
- HH social-tntesakan vijaky 2020t. hunvar-hoktemberin* [Socio-economic situation of RA, January–October, 2020] ej 122, https://www.armstat.am/file/article/sv_10_20a_422.pdf (In Arm.)
- HH social-tntesakan vijaky 2020t. hunvar-dektemberin* [Socio-economic situation of RA, January–December, 2020] ej 143, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_421.pdf (In Arm.)
- HH social-tntesakan vijaky 2021t. hunvarin* [Socio-economic situation of RA, January, 2021] ej, էջ 115, https://www.armstat.am/file/article/sv_01_21a_422.pdf (In Arm.)
- Box G.P., Jenkins G.M., (1976) *Time series analysis: forecasting and control*, revised edn, Holden Day, San Francisco. (In Eng.)
- Government sends out vouchers to spend on domestic travel*, <https://turisti.is/2020/03/government-sends-out-vouchers-to-spend-on-domestic-travel/> (In Eng.)
- Gujarati D.N., *Basic econometrics*, US Military Academy, West Point, 4-th ed, ej 257. (In Eng.)
- International Recommendations for Tourism Statistics* (2008), United Nations, New York, 2010, ej 15 https://unstats.un.org/unsd/publication/seriesm/seriesm_83rev1e.pdf (In Eng.)

Анаит Мкртчян

*Ассистент кафедры Экономико-математических методов,
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук
Эл. адрес: anahit.mkrтчyan@asue.am*

Гаяне Товмасыан

*Старший исследователь исследовательского центра “АМБЕРД”
Армянского государственного экономического университета,
Преподаватель Академии государственного управления РА,
кандидат экономических наук
Эл. адрес: tovmasyangayane@yahoo.com*

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ВНУТРЕННЕГО ТУРИЗМА В АРМЕНИИ

В последние годы во всем мире стремительно развивается туризм. Однако в 2020 году рост туристического сектора был прерван эпидемией коронавируса. Многие страны, например, Армения, пытались возродить внутренний туризм. Из-за ограничений пандемии в 2020 году количество внутренних туристов в Армении уменьшилось примерно на 33% по сравнению с предыдущим годом, и составило 1045756 человек. В статье с использованием метода ARIMA прогнозируется количество внутренних туристов на ближайшие три года. По прогнозам, в 2021 году количество внутренних туристов в Армении составит 1287492 человека, в 2022 году – 1350129 человек, в 2023 году – 1412764 человека. Кроме того, проанализировано текущее состояние внутреннего туризма, вопросы его развития, внесены предложения по развитию внутреннего туризма, связанные с совершенствованием маркетинговой деятельности, разработкой новых маршрутов и так далее.

Ключевые слова: внутренний туризм, турист, прогноз, ARIMA, эпидемия, маркетинг.

Anahit Mkrtchyan

*Assistant Professor at the Chair of Economic–Mathematical Methods
Armenian State University of Economics, Ph.D. in Economics
Email: anahit.mkrtchyan@asue.am*

Gayane Tovmasyan

*Senior Researcher at “AMBERD” Research Center of the
Armenian State University of Economics,
Lecturer at the Public Administration Academy of the RA,
Ph.D. in Economics
Email: tovmasyangayane@yahoo.com*

PERSPECTIVES OF DOMESTIC TOURISM DEVELOPMENT IN ARMENIA

In recent years, tourism has grown rapidly around the world. However, in 2020 the growth of the tourism sector was disrupted by the coronavirus epidemic. Many countries, such as Armenia, tried to revive domestic tourism. Due to pandemic restrictions in 2020 the number of domestic tourists in Armenia has decreased by about 33% compared to the previous year, composing 1045756 people. The article forecasts the number of domestic tourists for the next three years using the ARIMA method. According to forecasts, in 2021 the number of domestic tourists in Armenia will be 1287492 people, in 2022 – 1350129 people, in 2023 – 1412764 people. In addition, the current state of domestic tourism, its development issues were analyzed, some suggestions were made for the development of domestic tourism, related to the improvement of marketing activities, the development of new routes, and so on.

Key words: domestic tourism, tourist, forecast, ARIMA, epidemic, marketing.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2021թ. մարտի 30-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2021թ. ապրիլի 17-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2021թ. ապրիլի 24-ին

Աշոտ Ոսկանյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոքիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հեղափոխական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ ashot.voskan@gmail.com

Աննա Քարտաշյան

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոքիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի ասիստենտ, Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչության գլխավոր մասնագետ
Էլ. հասցե՝ qartashyananna@gmail.com

DOI: 10.53614/18294952-2021.1-73

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում առավել է կարևորվում հացահատիկի արտադրության տևական և կայուն ապահովումը: Հողվածի նպատակն է վեր հանել հացահատիկի արտադրությունից մինչև վերջնական սպառում շղթայի խնդիրներն ու առաջարկել վերջիններիս լուծման ուղիներ:

Կիրառելով տնտեսագիտական ուսումնասիրության, ինչպես նաև հանդիպում-քննարկում-հարցումներ մեթոդները՝ կատարվել է հացահատիկի արտադրությունից մինչև իրացում ծագող փոխհարաբերությունների, ցորենի արժեչաթայի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն: Արդյունքում առաջարկվել են հանրապետությունում հացահատիկի արտադրության և իրացման հիմնախնդիրների կարգավորման համալիր միջոցառումներ:

Հիմնաբառեր. արժեզրոյա, արտադրություն, վերանշա-
կում, իրացում, սերմնաբուծություն, հողերի խոշորացում, ապ-
րանքայնություն, պետական աջակցություն

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապա-
հովման տեսանկյունից ռազմավարական նշանակություն ունի հացահատի-
կով, մասնավորապես՝ ցորենով պարենային ապահովվածության բարձր
մակարդակը: Վերջին տարիներին ցորենի ինքնաբավության աստիճանը
զգալիորեն կրճատվել է և 2019 թ. կազմել է ընդամենը 25,9 %՝ 2015 թ. 49,5
%-ի դիմաց: Տարեկան ներմուծվում է 250,0-330,0 հազար տոննա ցորեն, ընդ-
որում 2017-2019թթ. ցորենի ներմուծման ծավալները 1,8-2,2 անգամ ավելին
են տեղական արտադրությունից (Պարենային ապահովություն և աղքա-
տություն, 2020, էջ 74, 2019, էջ 66, 2018, էջ 67): Սակայն COVID-19-ի համա-
վարակով, ինչպես նաև երկրում տիրող ռազմական դրությամբ պայմանա-
վորված՝ կարող են առաջանալ մատակարարման ընդհատումներ: Միջազ-
գային շուկայում գների կտրուկ տատանման և ներմուծված ցորենի ու ալ-
յուրի բարձր գների պատճառով երկրում հնարավոր է հացամթերքների
գների բարձրացում, որը պարզապես անթույլատրելի կլինի ներկայիս սո-
ցիալական և տնտեսական պայմաններում:

Հացահատիկի համաշխարհային արտադրությունը տարբեր գործոնների
ազդեցությամբ ենթարկվում է լրջագույն տատանումների: Հաճախ ստեղծ-
վում է այնպիսի իրավիճակ, որը չի ապահովում նույնիսկ սննդամթերքի
ֆիզիկական մատչելիություն՝ անգամ ֆինանսական միջոցների առկայության
դեպքում: Հայաստանի պատմական փորձը, աշխարհաքաղաքական զարգա-
ցումները վկայում են, որ կարող ենք հայտնվել տարաբնույթ շրջափակում-
ների և սահմանափակումների մեջ: Ուստի կարևորում ենք երկրում հացա-
հատիկային տնտեսության զարգացման գործուն քայլերի ձեռնարկումը,
եղած հողային, ջրային, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների արդ-
յունավետ օգտագործումը, ցորենի փոխանցիկ պահուստային պաշարների
ստեղծումը, իսկ հեռանկարում՝ մրցակցային պայմանների և մարտահրա-
վերների ուսումնասիրությունն ու պարենային ցորենի կայուն բերքի ծավալ-
ների ավելացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Մեր խորին համոզմամբ հանրապետությունում անհրաժեշտ է խթանել
հացահատիկի արտադրության ծավալների ավելացումը՝ ի հաշիվ չօգտա-
գործվող գյուղատնտեսական նշանակության հողերը շրջանառության մեջ
ներգրավելու և բարձր վերարտադրության որակյալ սերմերի օգտագործման,
ինչպես նաև արտադրությունից մինչև սպառում շղթայի կատարելագործ-
մամբ:

Մեթոդը

Հետազոտության իրականացման համար հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները, ՀՀ «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գրանցված շուրջ 16 սերմարտադրողների հետ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում կազմակերպված հանդիպում-քննարկման արդյունքները, ՀՀ բոլոր մարզպետարանների գյուղատնտեսության ոլորտի ներկայացուցիչների հետ հեռավար քննարկումները, ինչպես նաև գյուղատնտեսությունում տնտեսավարողների(հացահատիկ մշակող և վերամշակող) հետ հեռախոսազրույցների արդյունքները:

Արդյունքներ և քննարկում


Հանրապետությունում պարենային կայուն համակարգերի ստեղծման հարցում գյուղատնտեսական արտադրանքների արժեշրթանների կարևորությանը իրենց աշխատություններում անդրադարձել են տարբեր տնտեսագետներ (Ոսկանյան Ա., Ավետիսյան Ս. և այլոք): Միջազգային մի շարք կազմակերպությունների հետ համատեղ գյուղատնտեսական արտադրանքների արժեշրթանների ուսումնասիրությանն ուղղված տարբեր տարիների աշխատություններում, ինչպես նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի գիտական հաշվետվություններում ևս կարևորվում է արժեշրթանների բազմակողմանի վերլուծության անհրաժեշտությունը: Ուստի, հաշվի առնելով նաև այն, որ հանրապետությունում ռազմավարական առաջնային խնդիրներից է հացահատիկի ներքին շուկայի վրա հիմնված արտադրության խրախուսումը և օժանդակումը, հողվածում առավել հանգամանորեն վերլուծվել է հացահատիկի արժեշրթան:

ՀՀ-ում հացահատիկային մշակաբույսերի հիմնական արտադրատնտեսական ցուցանիշների վերլուծություն

Չնայած պետական աջակցությամբ իրականացվող մի շարք միջոցառումների՝ վերջին տասը տարիների ընթացքում Վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալներով հանրապետությունում զգալիորեն կրճատվել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 2011 թ. նկատմամբ 23,1%-ով: Ամենաբարձր մշակված ցանքատարածություն գրանցվել է 2016 թ.՝ 195,9 հազ. հա, որը 2020 թ-ին կրճատվել է շուրջ 38,8 %-ով: Նույն ժամանակաշրջանի համար և՛ աշնանացանի, և՛ գարնանացանի բերքատվության ցուցանիշները նույնպես նվազել են 21,0 %-ով և 26,7 %-ով՝ կազմելով ընդամենը աշնանացանի դեպքում 22,6 ց/հա, իսկ գարնանացանի դեպքում՝ 20,0 ց/հա: Ինչ վերաբերում է համախառն բերքին, ապա 2011-2016 թթ. ընթացքում այն կայուն աճել է՝ ի հաշիվ և՛ ցանքատարածքների աճի, և՛ բերքատվության մակարդակի բարձրացման, որից հետո, սակայն, կտրուկ նվազել է և 2020 թ. կազմել ընդամենը 242,0 հազ. տ՝ երբեմնի 435,5-598,9 հազ. տ-ի դիմաց: Արտադրված հացահատիկի շուրջ 50-60 %-ը կազմում է

աշնանացան և գարնանացան ցորենը (Գծապատկեր 1):

Չնայած արտադրատնտեսական հիմնական ցուցանիշների նվազմանը, 2020թ. հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածության տեսակարար կշիռը ընդհանուր ցանքերում կազմում է 53.8 %: Այսպիսի կառուցվածքը տնտեսական արդյունավետության տեսանկյունից հիմնավորված չէ և բարեփոխման կարիք ունի, քանի որ անգամ այս պարագայում ցորենի ինքնաբավության աստիճանը կազմում է ընդամենը 25,9 %: Բացի այդ, գյուղատնտեսական մյուս արտադրանքների համեմատ, հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերն ունեն ամենացածր ապրանքայնության մակարդակը՝ 30,8–31,0% (Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2020 թ.), որը հիմնականում ագրոտեխնիկական պահանջները չպահպանելու, ցածր բերքատվության, իրացման արդյունավետ և ժամանակակից ուղիների չկիրառման, ֆինանսական ռեսուրսների սղության արդյունք է:



Գծապատկեր 1. Հացահատիկային մշակաբույսերի հիմնական արտադրական ցուցանիշները ՀՀ-ում 2011–2020 թթ.¹

Հացահատիկի արժեչղթան

Առավել հանգամանորեն անդրադառնանք հացահատիկի արտադրությունից մինչև իրացում ծագող փոխհարաբերություններին, որն իրենից ներկայացնում է բարդ, մարտահրավերներով ու ռիսկերով արժեչղթա և որի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ուսումնասիրել շղթայի հիմնական դերակատարների գործունեությունը, վեր հանել յուրաքանչյուր փուլում ծագող խոչընդոտները և առաջարկել դրանց լուծմանն ուղղված միջոցառումներ:

Արժեչղթայի հիմնական դերակատարներն են՝

- 1-ին օղակում՝ սերմարտադրողները և/կամ սերմ ներմուծողները, պարարտանյութ, թունաքիմիկատ և այլ նյութատեխնիկական միջոցներ մատակարարողները (հումքի, արտադրության միջոցների մատակարարողները):

¹ Գծապատկերը կազմվել է Վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների հիման վրա

- րարները),
- 2-րդ օղակում՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողները (ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատեր),
- 3-րդ օղակում՝ վերամշակող ընկերությունները (ալրադացներ, հացաթխման արտադրամասեր, հրուշակեղենի, մակարոնեղենի, կերերի արտադրությամբ զբաղվող ընկերություններ և այլ), վաճառողներն ու սպառողները:

Արժեշրթայի արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները հետևյալներն են՝ արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ՝ սերմ, պարարտանյութ, թունաքիմիկատներ, տեխնիկա, հողային և ջրային ռեսուրսներ, հետերքահավաքային ենթակառուցվածքներ, որակյալ կադրեր, ֆինանսական ռեսուրսներ, իրացման կառուցակարգեր, մեծածախ և մանրածախ շուկաներ և այլն:

Արժեշրթայում ձևավորված իրավիճակի վերլուծության նպատակով իրականացրել ենք ՈԻԹՀՍ վերլուծություն, ըստ որի ակնհայտորեն գերակայում են տարբեր գործոններով պայմանավորված թույլ կողմերը, ինչպես արտադրական, այնպես էլ հումքի վերամշակման և նրան հաջորդող փուլերում: Միաժամանակ առկա են արժեշրթայի կատարելագործման և լուծում պահանջող հնարավորությունները (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.


ՀՀ-ում ցորենի արժեշրթայի ՈԻԹՀՍ վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> ➤ Լեռնային և նախալեռնային շրջանների ավանդույթներ ➤ Հարուստ և բազմազան բնական ռեսուրսներ ➤ Ցորենի շատ տեսակների հարենիք (բնակլիմայական պայմաններին բարձր հարմարվողականություն) ➤ Մշակության ավանդույթներ ➤ Միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող տնտեսական նախաձեռնություններ ➤ Վարկային միջոցների հասանելիություն ➤ Բնակլիմայական նպաստավոր պայմաններ զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացման համար ➤ Գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների, օրգանական գյուղատնտեսություն վարելու պայմանների առկայություն 	<ul style="list-style-type: none"> ➤ Չօգտագործվող վարելահողերի, այդ թվում՝ կոնֆլիկտային իրավիճակով պայմանավորված սահմանամերձ և ակնապատված հողերի առկայություն, Ենթակառուցվածքների թերզարգացվածություն ➤ Գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածություն, ոչ լիարժեք օգտագործում ➤ Գյուղատնտեսական տեխնիկայի պակաս և մաշվածություն ➤ Գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների մասնագիտական կարողությունների և տեղեկացվածության ցածր մակարդակ ➤ Նոր տեխնոլոգիաների ներդրման ցածր մակարդակ ➤ Ոռոգման սահմանափակ հնարավորություններ ➤ Հետերքահավաքային ենթակառուցվածքների սահմանափակ առկայություն, ➤ Արտագաղթ ➤ Կոռուպցիայի ցածր մակարդակ ➤ Բնական աղետներ ➤ Կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների վերաբերյալ տեղեկացվածության ցածր մակարդակ ➤ Մթերման ծավալների ցածր մակարդակ ➤ Եկամտաբերության ցածր մակարդակ ➤ Պայմանագրային հարաբերությունների բացակայություն

Աշոտ Ոսկանյան, Աննա Քարտաշյան

Հնարավորություններ	Սպառնալիքներ
<ul style="list-style-type: none"> ➤ Չօգտագործվող վարելահողերի առկայություն ➤ Անջրդի պայմաններում մշակության կազմակերպում ➤ Միջազգային դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացումն ուր տեխնոլոգիաների ներդրմամբ ➤ Ազրոտուրիզմի զարգացման հնարավորություն ➤ Պետական աջակցությամբ մատչելի ֆինանսական միջոցների հասանելիություն ➤ Հացահատիկային և հատիկաբնույթի մշակաբույսերի ապահովագրության հասանելիություն ➤ Արժեչոթանների կատարելագործում 	<ul style="list-style-type: none"> ➤ Անորակ սերմերի օգտագործում ➤ Ներմուծված ցորենի բարձր որակն ու մատչելիությունը տեղականի նկատմամբ ➤ Արտադրված ցորենի ապրանքայնության ցածր մակարդակ ➤ Արժեչոթայում փոխհարաբերությունների խզվածություն ➤ Երիտասարդ աշխատուժի նվազում ➤ Հիվանդություններ և համավարակներ ➤ Կլիմայի փոփոխություն և բնական աղետների հաճախացում

Հացահատիկի արժեչոթան ներկայացված է գծապատկեր 3-ում և պայմանականորեն տարբերակված է 3 մակարդակով.



Գծապատկեր 3. Հացահատիկի արժեչոթան ՀՀ-ում

1-ին մակարդակ՝ արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ միջոցների ներդրում: Արդյունավետ արտադրության համար

գլխավոր նախապայմանը բարձրորակ միջոցների առկայությունն ու ճիշտ օգտագործումն է: Արժեչղթայի առաջնային օղակում արդյունավետ արտադրության կազմակերպման, բերքատվության մակարդակի բարձրացման և բերքի ծավալների ավելացման նախապայման է բարձրորակ սերմերի, պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործումը, որակյալ մասնագետների առկայությունը:

Պետք է ընդգծել, որ ներկայումս հացահատիկային տնտեսությունում ներգրավված սուբյեկտները հաճախ օգտագործում են անհայտ ծագման, չստուգված և ցանքի համար ոչ բավարար պիտանիություն ունեցող սերմեր: Հայաստանում դեռևս չի հաջողվել ապահովել որակյալ սերմերի անհրաժեշտ ծավալների արտադրություն և ձևավորել սերմնաբուծության համապատասխան համակարգ (մարզպետարաններից ստացված տեղեկատվության համաձայն 2020թ. համար պահանջարկ է ներկայացվել նվազագույնը 8000 տոննա աշնանացան ցորենի որակյալ սերմի, իսկ սերմարտադրողների տվյալների համաձայն արտադրվելու էր շուրջ 3300 տոննա): Միաժամանակ սորտաթարմացման և սորտափոխանակման աշխատանքները կատարվում են տարերայնորեն:

Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի սելեկցիայի և առաջնային սերմնաբուծության ոլորտում մասնագիտացված հիմնական դերակատարներն են «Գյումրիի սելեկցիոն կայան» և «Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ-ները, ինչպես նաև՝ «Արմենիան Թեքստիլը Գրուփ» հիմնադրամը և «Սերմ արտադրողների միություն» ՍՊԸ-ն, որոնք, սակայն, ի վիճակի չեն բավարարել հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի սերմերի առկա պահանջարկը:

Երկրորդային սերմնաբուծությամբ զբաղվում են նաև մասնավոր տնտեսություններ, որոնք հիմնականում հիմնային սերմերը ներմուծում են Ռուսաստանի Դաշնությունից՝ արտադրելով 1-ին վերարտադրության սերմեր: Սերմարտադրողների հետ քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ ինչպես գիտական կենտրոնները, այնպես էլ մասնավոր տնտեսություններն արտադրված սերմերի իրացման խնդիրներ են ունենում, այն դեպքում, երբ վերջիններիս արտադրության ծավալները բավարար չեն և հեռու են հանրապետության պահանջարկը բավարարելուց: Այսինքն՝ բացակայում է սերմնաբուծության արդյունավետ կառավարման համակարգը, թույլ են տնտեսական, տեխնիկական և կազմակերպական լուծումները: Հիմնականում գյուղատնտեսությունում տնտեսավարողները նախընտրում են օգտագործել իրենց ունեցած ցածրորակ (անհայտ ծագման) 2-րդ, 3-րդ վերարտադրության սերմերը, քան 160–220 դրամով գնել որակյալ բարձր վերարտադրության սերմ կամ տեղական արտադրության նկատմամբ անվստահության պատճառով նախընտրում են ներմուծել հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից՝ գտնելով, որ ներմուծված սերմերը առավել որակյալ են, քան տեղական արտադրության սերմերը:

Բացի որակյալ սերմերի օգտագործումից, արտադրության ծավալների ավելացման համար կարևոր է նաև որակյալ պարարտանյութերի, բույսերի

պաշտպանության միջոցների, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկայի հասանելիությունն ու ճիշտ կիրառումը: Քննարկումները վկայում են, որ շատ հաճախ ոչ միայն որակյալ սերմերի ձեռքբերումն է խնդիր, այլ նաև պարարտանյութի և վառելիքի անբավարար քանակը, ձեռքբերման դժվարությունները: Պակաս կարևոր չէ նաև տնտեսավարողների կողմից առկա արտադրության միջոցների ճիշտ կիրառումը՝ ագրոտեխնիկական պահանջների պահպանումը, որը հիմնականում պայմանավորված է տնտեսավարողների մասնագիտական կարողություններով և տեղեկացվածության մակարդակով:

Այսպիսով, արժեշղթայի առաջնային օղակում առկա մարտահրավերներն են՝

- բարձր վերարտադրության սերմերի արտադրությունն ու ձեռքբերումը,
- որակյալ պարարտանյութերի և բուժանյութերի հասանելիությունը,
- գյուղատնտեսական տեխնիկայի հասանելիությունը և նոր տեխնիկայի կիրառումը,
- որակյալ մասնագետների պակասը:

2-րդ մակարդակ՝ մշակության կազմակերպում: Արժեշղթայի հաջորդ օղակն արտադրության իրականացման փուլն է, որն իր մեջ ներառում է հողի նախապատրաստական աշխատանքներից մինչև ցանք, մշակություն, բերքահավաք, պահեստավորում: Եթե արտադրության միջոցների որակը և հասանելիությունը խիստ կարևոր են արտադրության արդյունավետ կազմակերպման համար, ապա տնտեսավարողների տնտեսության վարման և մշակության փորձն ու մեթոդները նույնպես պակաս կարևոր չեն:

Այս փուլում նույնպես տնտեսավարողները բախվում են մի շարք խնդիրների, մասնավորապես՝ հողերի մասնատվածությունը, տնտեսությունների փոքր չափերին, գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությանը կամ բացակայությանը, մասնագիտական ոչ բավարար կարողությունների և այլն:

Հանրապետությունում հացահատիկի մշակությամբ զբաղվում են շուրջ 105612 տնտեսություն, որոնցից 33100-ը հացահատիկ է մշակում մինչև 0,5 հա ցանքատարածությունների վրա, 68806-ը՝ 0,5-5,0 հա-ի վրա, իսկ 3706-ը՝ 5 հա-ից ավել տարածությունների վրա: Այսինքն՝ հացահատիկի մշակությամբ զբաղվող տնտեսությունների ընդամենը 65,1 %-ը մշակությունը կազմակերպում է 0,5-5,0 հա-ի վրա, որի 40 %-ը 0,5-1,0 հա-ի վրա (Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները):

Տնտեսավարողների կողմից տնօրինվող հողատեսքերի փոքր չափերը հնարավորություն չեն տալիս կազմակերպել արդյունավետ արտադրություն: Միաժամանակ, մշակության ընթացքում ագրոտեխնիկական պահանջների խախտումը հանգեցնում է բերքատվության մակարդակի նվազմանն ու կորուստների ավելացմանը: Գյուղատնտեսական տեխնիկայի պակասի և որոշ խիստ կարևոր արտադրության միջոցների ոչ ժամանակին մատակարարման պատճառով շատ տնտեսավարողներ չեն կարողանում պատշաճ ձևով իրա-

կանացնել հողի մշակությունը, որը հանգեցնում է արտադրական կորուստների: Բացի այդ, ոչ բոլոր տնտեսավարողներն են կիրառում ցանքաշրջանառություն, որը բերքատվության բարձրացման գլխավոր նախապայմաններից մեկն է: Տնտեսավարողների մոտ կորուստներ լինում են նձ ցանքի, նձ բերքահավաքի ընթացքում (հիմնականում պատճառաբանում են տեխնիկայի բացակայությունը և հին տեխնիկայով բերքահավաքի կազմակերպումը): Ստեղծված իրավիճակում տնտեսավարողները պատշաճ չեն պահպանում ցորենի մշակության ագրոտեխնիկական պահանջները: Այնուամենայնիվ, ցորենի բերքի ամենաշատ կորուստները պայմանավորված են բնակլիմայական աղետներով՝ երաշտ, կարկուտ, որոնց դեպքում ունենում են բերքի շուրջ 60-80 % կորուստ: Այս ուղղությամբ ՀՀ կառավարությունը իրականացրել է որոշակի քայլեր, մասնավորապես՝ գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի արդյունքում 2020թ. ապահովագրվել է 1330 հա հացահատիկի ցանքատարածություն: Այս փուլում կարևորվում է նաև հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումների ձիշտ և ժամանակին կիրառումը, որի համար անհրաժեշտ է համատեղ պայքարի իրականացման համակարգում և մոնիթորինգի արդյունավետ իրականացում:

Ցորենի արժեշտի երկրորդ օղակում առկա մարտահրավերներն են՝

- տնտեսությունների փոքր չափերը,
- առկա գյուղատնտեսական տեխնիկայի անբավարար քանակն ու մշակածությունը, որը հանգեցնում է վառելանյութի և քսայուղերի զերծախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, նորոգման և սպասարկման ծախսերի՝ արդյունքում ինքնարժեքի բարձրացման,
- ֆինանսական միջոցների սղության պատճառով արտադրության միջոցների ոչ ձիշտ չափաքանակներով և սխալ ժամկետներում օգտագործումը,
- տնտեսավարողների մասնագիտական ցածր կարողությունները և այլն:

3-րդ մակարդակ՝ իրացման կազմակերպում և վերամշակում: Արժեշտի հաջորդ օղակն իր մեջ ներառում է արտադրված ցորենի գնման, տեղափոխման, պահեստավորման և արտադրությունում վերամշակման փուլը: Վերամշակող ընկերությունները հումքը մշակում և վերածում են կիսավերջնական կամ վերջնական արտադրանքների, որից հետո վերամշակված արտադրանքը տարբեր ուղիներով հասնում է վերջնական ապառողներին:

Այս օղակում վերամշակող ընկերությունների ամենակարևոր խմբերից մեկը ալրադաշններն են, որոնք ցորենից ալյուր են ստանում: Այնուհետև ալյուրից արտադրում են տարբեր տեսակի հացամթերքներ՝ հաց, հրուշակեղեն և այլն: Ուստի արդյունավետ արտադրություն կազմակերպելու համար ոչ պակաս կարևոր է ցորենի մշակությամբ և վերամշակմամբ զբաղվող տնտեսությունների փոխհարաբերությունները: Այս փուլում կարիք է զգացվում ալրադաշնների և հացաթխման արտադրամասերի կողմից ներկայացվող պահանջների և որակի վերահսկողության ցանկալի միջոցառումների հստակեցման:

Արտադրված ալյուրի նկատմամբ հացաթխման արտադրամասերը ուշադրություն են դարձնում ալյուրի տեսակի և որակի վրա, որն օգտագործվում է հացի տարբեր արտադրատեսակներ թխելու համար:

Հացաթխման ոլորտի ձեռնարկությունները ալրադաշային արտադրության հիմնական պատվիրատուներն են: Հացի արտադրության համար գլխավոր նախապայմանը ցորենում չոր տոսնձանյութի պարունակությունն է, որը չպետք է ցածր լինի 18-19 %-ից, հակառակ դեպքում այն չի կարող օգտագործվել հացի արտադրության համար (Հայաստանում ցորենի, գարու և հաճարի... 2012, 76 էջ): Որպես կանոն ալյուրը ներմուծվում է ՌԴ-ից, և ինչպես նշում են տնտեսավարողները առավել որակյալ և ավելի մատչելի է, քան տեղական արտադրությանը: Հաճախ ալյուրի որակը բարձրացնելու համար ռուսական ցորենը խառնվում է տեղականին: Գործնականում ալյուրի որակը չի ստուգվում գնման գործընթացում, այլ փորձարկվում է թխման ընթացքում:

Այսպիսով, ցորենի արժեզրթայի երրորդ օղակում գլխավոր մարտահրավերը ցորենի մշակությամբ զբաղվող տնտեսավարողների և վերամշակողների միջև փոխհարաբերությունների բացակայությունն է: Ըստ էության վերամշակող ընկերությունները խուսափում են տեղական արտադրության ցորենի գնման պատվերներ իջեցնելուց՝ պատճառաբանելով որակական ցածր հատկանիշները:

Արժեզրթայի բոլոր օղակներում էլ արդյունավետ գործունեություն ծավալելու համար բացի ռեսուրսների, շրջանառու միջոցների պակասից, պայմանագրային հարաբերությունների անկատարությունից և այլն, պակաս նշանակություն չունի նաև արժեզրթայի երկայնքով կորուստների և թափոնների նվազեցումն ու վերաօգտագործումը:

Կորուստները և թափոնները հիմնականում առաջանում են արժեզրթայի անարդյունավետությունից, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում պարենային անվտանգության վրա: Կորուստներն ու թափոնները հանգեցնում են առաջարկի նվազման, տնտեսավարողների եկամուտների կրճատման, ինչպես նաև գնաձի, որն էլ իր բացասական ազդեցությունն է ունենում սպառողների վրա:

Հիմնական թափոններն են՝ հացահատիկային փոշին, հացահատիկի մեխանիկական մաքրումից առաջացած թափոնները, հացահատիկային կճեպը, ցորենի ալյուրի տեխնոլոգիական կորուստները, թեփի և մաղուցքի թափոններ, խմորի թափոնները և այլն (Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը... էջ 1,2):

Ցորենի արժեզրթայի թափոնները հիմնականում առաջանում են ալրադաշային հացներում, համակցված կերերի, հացաբուլկեղենի արդյունաբերությունում: Ցորենի հատիկը, աղացման թափոնները արժեքավոր կեր են և հունք համակցված կերերի համար: Որպես անասնակեր օգտագործվում է նաև ցորենի ծղոտը, մասնավորապես՝ գարնանացան ցորենի, որն ավելի սննդարար և դյուրամարս է: Ծղոտի մի մասը մնում է դաշտում, ծածկվում հողով կամ

այրվում: Ծոռոն օգտագործում են նաև այգիներում ու հատապտղանոցներում՝ որպես պաշտպանիչ միջոց մոլախոտերի դեմ: Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ ծոռոը կարելի է օգտագործել նաև որպես բրիկետային կենսավառելիքի ստացման հումք: Բրիկետավորված կենսավառելիքը գնալով ավելի մեծ տարածում է գտնում, քանի որ ստացվում է կենսաբանական հումքից, որը այլ ոլորտներում օգտագործման համար գրեթե պիտանի չէ, ինչպես նաև այրումից առաջացած մոխիրը կարելի է օգտագործել որպես հանքային պարարտանյութ (Ավետիսյան, 2018):

Կորուստների և թափոնների դեմ պայքարը պահանջում է արժեշղթայի բոլոր դերակատարների միջև լայն համագործակցություն՝ խնդիրն արդյունավետ կերպով բարձրացնելու, գնահատելու և լուծման արդյունավետ տարբերակներ գտնելու համար:

Եզրակացություն

Արժեշղթայի շուրջ մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ըստ առանձին փուլերում շահութաբերության մակարդակը խիստ տարբերակված են, եթե ցորենի արտադրության մեկ միավորի հաշվով կազմում է 40,0 %, ապա այլուրի՝ 24,9 %, իսկ հացին՝ 48,2 %: Արժեշղթայի բոլոր օղակների գործունեության տնտեսական արդյունավետության բարձրացման չօգտագործված հնարավորություններ կան: Հանրապետությունում հացահատիկի արտադրության և իրացման հիմնախնդիրների կարգավորման համար անհրաժեշտ է համալիր և փոխկապակցված մոտեցում ցուցաբերել և պետական քաղաքականությունն ուղղել հացահատիկի արտադրության արդյունավետության և ապրանքայնության մակարդակի բարձրացմանը՝ կողմնորոշում ունենալով ցորենի պահանջարկի 55-60%-ը կայուն կերպով ապահովվելու տեղական արտադրությամբ: Ընդ որում՝

- ՀՀ կառավարությունն արդեն իսկ ձեռնարկել է որոշ քայլեր՝ խթանել տեղական ցորենի արտադրության ծավալների ավելացումը՝ 1 կգ աշնանացան ցորենի սերմի գնի սուբսիդավորմամբ: Պետական աջակցության շրջանակում վաճառվել է շուրջ 4200 տ աշնանացան ցորենի սերմ, սակայն 2020 թ. 2019թ. նկատմամբ աշնանացան ցորենի ցանքային տարածությունները նվազել են 529 հա-ով (Վիճակագրական տեղեկագիր, 2019, 2020, էջ 18), մինչդեռ վաճառված սերմով հնարավոր է կատարել շուրջ 14,0 հազ. հա ցանք: Հանրապետությունում սերմնաբուծության զարգացման և հացահատիկի բերքատվության մակարդակի բարձրացման համար առաջարկում ենք ծախսերի մասնակի փոխհատուցմամբ ներդնել սերմնաբուծության աստիճանական զարգացման համակարգ, որտեղ սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ կզբաղվեն գիտական կենտրոնները՝ արտադրելով սուպերէլիտային և էլիտային սերմեր, և մասնագիտացված գյուղացիական տնտեսությունները՝ արտադրելով էլիտային և 1-ին վերարտադրության սերմեր, այսինքն՝ կստեղծվի սերմարտադրության ընդհանուր շարունակական շղթա և կբարձրանա սելեկցիայի և սորտա-

թարմացման աշխատանքների արդյունավետությունը: Կամ էլ, ինչպես արվում է Հնդկաստանի Հանրապետությունում բրնձի սերմերի համար, սկզբնական փուլում կարելի է խթանել միայն սուպերէլիտա սերմերի արտադրությունը, մասնավորապես յուրաքանչյուր արտադրված 10 կգ-ի համար սուբսիդիայի տրամադրում,

- հացահատիկացան տնտեսությունների փոքր չափերով պայմանավորված խնդիրների լուծման նպատակով ժամանակն է արագացնել հողերի խոշորացմանն ուղղված միջոցառումները, կիրառել կառավարման մարմիններ-տնտեսավարող սուբյեկտներ համագործակցության առաջավոր ձևեր /կոոպերացիա, կլաստերային մոտեցումներ և այլն/,
- արժեշոթայի արդյունավետ գործունեության համար կարևոր նախապայմաններից մեկն էլ ցորենի մշակությամբ զբաղվող տնտեսավարողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների(երկարատև ժամանակահատվածի համար) հաստատումն է, որը կնպաստի վերամշակողների պահանջներին համապատասխան արտադրության կազմակերպմանը: Առաջարկում ենք օժանդակել վերամշակողների պահանջարկին համապատասխան որակի ցորենի արտադրությունը, մասնավորապես՝ խթանել արտադրող և վերամշակող կոոպերատիվների ստեղծմանը,
- հացահատիկի արտադրության ծավալների ավելացման միջոցառումներում հատկապես կարևորվում է իրականացնել քայլեր եկամտաբերության բարձրացմանն ուղղությամբ, մասնավորապես կատարված ծախսերի փոխհատուցմամբ, իրացման և գնման ձևեր կառուցակարգերի, ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ, կառավարության կողմից վերամշակող ընկերություններին մթերման գնի մի մասի սուբսիդավորմամբ և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

Հայաստանի Հանրապետության փարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26 N 342-Ն հրաման

Հայաստանում ցորենի, գարու և հաճարի արժեքային շղթաների գնահատում (2012) Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն: Պատրաստված և նախատեսված է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության համար, Երևան, 76 էջ:

Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համադարձ հաշվառման հիմնական արդյունքները, (2016) Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն.-Եր.: Տիգրան Մեծ,-416 էջ:

Ավետիսյան, Ս. *Գյուղատնտեսական արտադրության թափոններից կենսավառելիքի արտադրության բիոէներգետիկ ներուժը Հայաստանի Հանրապետությունում* (asue.am/amberd/publications/analysis/agricultural-production-waste-republic-armenia)

- Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2020 թվականին: (2021) Վիճակագրական տեղեկագիր: Երևան: (<https://armstat.am/am/?nid=82&id=2374>)
- Վիճակագրական տեղեկագիր, (2020) Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2019 թվականին: Երևան: (<https://armstat.am/am/?nid=82&id=2368>)
- Վիճակագրական տեղեկագիր, (2021) Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2020 թվականին: Երևան: (<https://armstat.am/am/?nid=82&id=2244>)
- Պարենային ապահովություն և աղքատություն, 2018թ. հունվար-դեկտեմբեր: Պարենի առկայություն: (<https://armstat.am/am/?nid=82&id=2125>)
- Պարենային ապահովություն և աղքատություն, 2019թ. հունվար-դեկտեմբեր: Պարենի առկայություն: (<https://armstat.am/am/?nid=82&id=2238>)
- Պարենային ապահովություն և աղքատություն, 2020թ. հունվար-դեկտեմբեր: Պարենի առկայություն: (<https://armstat.am/am/?nid=82&id=2238>)

References

- Hayastani Hanrapetutyun taracqum goyacox artadrutyun (ayd tvum' ynderqogtagorcman) ev sparman taponneri canky hastatelu masin* HH bnapahpanutyun naxarari 2006 tvakani 26 N 342-N hrman [Order of the RA Minister of Nature Protection “On Approval of the List of Production Wastes (Including Subsoil Use) and Consumption Wastes on the Territory of the Republic of Armenia”] (In Arm.)
- Hayastanum coreni, garu ev hachari arjeqayin shxtaneri gnahatum* (2012) [Wheat, barley and spelt value chains assessment in Armenia], Agrobiznesi hetazotutyunneri ev krtutyun mijazgayin kentron, Patrastvac ev naxatesvac e germaniayi mijazgayin hamagorcakcutyan yunkerutyun hamar, Erevan. (In Arm.)
- Hayastani Hanrapetutyun 2014 tvakani gyuxatntesakan hamatarac hashvarman himnakan ardyunqneri* (2016) [Main results of agricultural census of 2014 in the Republic of Armenia]. Hayastani Hanrapetutyun azgayin vichakagrakan carayutyun, Er., Tigran Mec, 416ej. (In Arm.)
- Avetisyan, S. *Gyuxatntesakan artadrutyun taponneric kensavareliqi artadrutyun bioenergetik nerujy Hayastani Hanrapetutyunum* [Bioenergy potential of biofuel production from agricultural waste in the Republic of Armenia] (asue.am/amberd/publications/analysis/agricultural-production-waste-republic-armenia).(In Arm.)
- Vichakagrakan texekagir (2021). *Gyuxatntesakan artadranqi iracumy (ogtagorcumy) anhatakan (gyuxacikan) tnayin tntesutyunneri koxmic 2020 tvakanin*, [Agricultural Products Marketing (utilization) by Individual (rural) Households in 2020]. Erevan. (<https://armstat.am/am/?nid=82&id=2374>). (In Arm.)
- Vichakagrakan texekagir (2020). *Gyuxatntesakan mshakabuyseri canqayin taracutyunnery, bazmamya tnkarkneri taracutyunnery, hamaxarn berqy ev mijin berqatvutyuny 2019 tvakanin* [Sown areas of agricultural crops, planting area of permanent crops,

- gross harvest and average crop capacity for 2019], Erevan. (<https://armstat.am/am/?nid=82&id=2368>) (In Arm.)
- Vichakagrakan texekagir (2021). *Gyuxatntesakan mshakabuyseri canqayin taracutyunnery, bazmamyā tnkarkneri taracutyunnery, hamaxarn berqy ev mijin berqatvutyuny 2020 tvakanin* [Sown areas of agricultural crops, planting area of permanent crops, gross harvest and average crop capacity for 2020]. Erevan. (<https://armstat.am/am/?nid=82&id=2244>) (In Arm.)
- Parentayin apahovutyun ev axqatutyun* [Food security and poverty], 2018 t. hunvar-dektember. Parenti arkayutyun. (<https://armstat.am/am/?nid=82&id=2125>) (In Arm.)
- Parentayin apahovutyun ev axqatutyun* [Food security and poverty], 2019 t. hunvar-dektember. Parenti arkayutyun. (<https://armstat.am/am/?nid=82&id=2238>) (In Arm.)
- Parentayin apahovutyun ev axqatutyun* (Food security and poverty), 2020 t. hunvar-dektember. Parenti arkayutyun. (<https://armstat.am/am/?nid=82&id=2238>) (In Arm.)

Ашот Восканян

*И.о. заведующего кафедрой управления и политики агробизнеса
Национального аграрного университета Армении,
директор центра аграрной политики и экономических исследований,
кандидат экономических наук, доцент
Эл. адрес: ashot.voskan@gmail.com*

Анна Карташян

*Ассистент кафедры управления и политики агробизнеса Национального
аграрного университета Армении, главный специалист Департамента
разработки сельскохозяйственных программ, использования ресурсов и
развития кооперации Министерства экономики РА
Эл. адрес: qartashyananna@gmail.com*

О ПРОБЛЕМАХ ПРОИЗВОДСТВА И РЕАЛИЗАЦИИ ЗЕРНА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В условиях пандемии коронавируса, а также в чрезвычайных ситуациях, обеспечение стабильности и устойчивости производства зерна становится все более важным.

Цель статьи – выявить проблемы цепочки “производство – реализация” зерна и предложить пути их решения.

Используя методы экономического исследования, а также встречи–обсуждения–опросы, был проведен анализ взаимосвязи производства зерна и его реализации, выявлены сильные и слабые стороны цепочки стоимости пшеницы, проведен SWOT– анализ возможностей и угроз. В результате предложены комплексные мероприятия по урегулированию проблем производства и реализации зерна в Республике.

Ключевые слова: производственно–сбытовая цепочка, производство,

переработка, продажа, семеноводство, консолидация земель, продуктивность, государственная поддержка.

Ashot Voskanyan

*Acting Head of Agribusiness Management and Policy Chair, National Agrarian University of Armenia, Director of Agrarian Policy and Economics Research Center, Ph.D. in Economics, Associate Professor
Email: ashot.voskan@gmail.com*

Anna Kartashyan

*Assistant of Agribusiness Management and Policy Chair, National Agrarian University of Armenia, Senior Specialist of Agricultural Programs Elaboration, Resource Use and Cooperatives Development Department of the Ministry of Economy
kartashyananna@gmail.com*

GRAIN PRODUCTION AND SALE PROBLEMS IN THE REPUBLIC OF ARMENIA

Long-term and sustainable ensuring of grain production is of high importance especially in the context of the coronavirus epidemic, as well as in emergency situations.

The main objective of the article is to reveal the problems of the chain of the production to its final consumption and to propose problem solutions.

